

ԷԶՄԻԱԾԻՆ



1961

ՌՆԺ
ԺԸ ՏԱՐԻ

Ապրիլ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դ

1961



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ
3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հարուստ ավետիսը
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային Ամերիկայի հա-
յոց Արևելյան բեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիս-
կոպոս Մանուկյանին, Հյուսիսային Ամերիկայի հայոց Կալի-
ֆոռնիայի բեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս
Վարժապետյանին և Հարավային Ամերիկայի հայոց Հայրապե-
տական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապա-
յանին՝ հովվապետական այցելությունից վերադառնալու
առթիվ

8

Փրկչի հրաշափառ և Ս. Հարուստ տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայ-
րազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ.
Վազգեն Ա Հայրապետի և Բայր եկեղեցիների հոգևոր պետերի
միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները

8

Փրկչի հրաշափառ և Ս. Հարուստ տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայ-
րազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ.
Վազգեն Ա Հայրապետի և Եվրոպայից եկող հոգևոր պետերի ու առաջ-
նորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու
գրությունները

12

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ Բարձր Փրկչի հրաշափառ և Սուրբ Հա-
րուստ տոնի առթիվ

14

Երանելի Հովհաննես Պլուզ վարդապետի խրատը սիրո մասին

17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ

19

ՊԵՏՐՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐՐԵՐՑԱՆ— Կամեռոս-վարդապետի կյանքին և
երաժշտական վաստակին նվիրված գրական հրեկո Ջագոսկի
ռուսական հոգևոր հեմարանում

22

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

24

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Գարեգին պատրիարք Խաչատուրյան

27

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՑԱՆ— Պատմական համառոտ ակնարկ Ս. Հոփ-
սիսի, Ս. Գյաննի և Ս. Շողակաթի վաճառի և այդ վաճառում
գտնվող կաթողիկոսական տապանադրությունների մասին

33

Մ. ԵՎ Ն. ԹԻՆՐԻԻ— Անի՝ հայկական միջնադարի մեծալ Բաղր

37

Հ. ԵՂԻԱՋԱՐՑԱՆ— Հաղթատի վաճառ և նրա հետ կապված Հաղթատ
գյուղի հուշարձանները

44

ՊՐՈՑ. ԴՈՎՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՅ-ԲԵԿ— Գևորգ Կակաբեկ Գորեցի (ԺԸ
դար) և նրա տաղերն ու նախերը

52



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՏ. ԷԶՄԻԱՅԻՆ
«ԷԶՄԻԱՅԻՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.
հրատ, 1961 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՋԱՓԱՌ ԵՒ ՍՐԹԱՋՆԱԿՈՑՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՏՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՐՈՒԹԵԱՆ ԱՎԵՏԻՍԸ



Բիստոսի հրաշափառ և սուրբ հարության ավետիսը «ի կոյս ի վիմլն» դարձյալ Բիստոնեական աշխարհի հոգին լցնում է աստվածային լուսավորությամբ, Բիստոնեական հավատի ուրախությամբ և բերկրալից խնդությամբ:

«ԱՅՍՕՐ է ՁՈՐ ԱՐԱՐ ՏԷՐ, ԵԿԱՅՔ ՅԸՆՄԱՍՑՈՒՔ ԵՒ ՈՒՐԱԽ ԼԻՑՈՒՔ Ի ՍՄԱ» (Սաղմ. ՃԺԸ 24):

Հարության հրաշափառ առավոտուն, մի անգամ ևս Քրիստոսի թափուր գերեզմանից ճնշում է մեծ և կենարար ավետիսը.

«ԶԻ՝ ԽՆԴՐԻՔ ԶԿԵՆԴԱՆԻՆ ԸՆԴ ՄԵՌՆԱԼՍ, ԶԷ ԱՍՅ, ԱՅԼ ՅԱՐԵԱԻ» (Ղուկ. ԻԴ Ե):

Արդարև, ինչպես վկայում է նաև հեթանոսաց մեծ առաքյալը Պողոս՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՈՒՑԵԱԼ Է Ի ՄԵՌՆԵԼՈՑ» (Հռոմ. Զ 9):

Վեհափառ Հայրապետը 1981 թվականի ապրիլի 2-ին Մայր Տաճարում, Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ խոսած իր հարոգի մեջ, անդրադառնալով Ս. Հարության տոնի բերած մեծ ուրախության մասին, ասում էր.

«ՀԱՎԱՏԱՎՈՐ ԵՎ ՀՈՒՍԱՑՅԱԼ ՈՐԴԻՔ ՄԵՐ, ԴՈՒՔ ԲՈՂՈՐԴ, ՄԻԱՄԻՐՏ, ՅԵՄԱՅԷՔ ԵՎ ՈՒՐԱԽ ԵԿԷՔ ԵՎ ՕՐՀՆԵՑԷՔ ՄԱՐԴԱՍԵՐՆ ԱՍՏՎԱՄ, ԶԻ ԱՀԱ ԴԱՏԱՐԿ Է ԴԵՐԵԶՄԱՆԸ ՄԱՀՎԱՆ ԵՎ ՓԵՐՎԱՄ ԵՆ ՇՂԹԱՆԵՐԸ ԴԺՈՒՔԻՆ, ՄԵՂՔԻՆ, ԶԱՐԻՆ»:

Հարության տոնը, որը ժողովրդական արտահայտությամբ կոչվում է նաև Զատիկ, Բիստոնեական աշխարհի մեծագույն և անենաժողովրդական տոնն է, տոնը՝ հավա-

տավոր մարդկության հոգևոր փրկության, ազատության, բարոյական վերածննդան:

Իսկ Զատիկա կարմիր ձուն և զառը՝ զարթնող և հարություն առնող բնության տոնն են խորհրդանշում: Ուրեմն Հարության տոնը՝ տոնն է միաժամանակ բնության վերադարձի և ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵՎՈՐ, ԲԱՐՈՑԱԿԱՆ, ՎԵՐԱՄԵՆՈՒԹՅԱՆ: Անցնում է ամեն տարի խստաշունչ ձմեռը և գալիք օրերին փչում է զարնանային կենարար շունչը, հարություն տալով մեռած բնության, բյուր ծաղիկներով և բուսմունքով, և մարդկությունը, ցրեծագին, ռդջունում է զարնան գալուստը Զատիկի տոնով:

«ԱՅՍՕՐ, — ասում է Վեհափառ Հայրապետը, — ԵՐՔ ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՑՍՐ ԿԱՎԵՏԵ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ, ԻՆՔԸ ԲՆՈՒԹՅՈՒՆ ԱԼ ԿՍԹԱՓԻ ԻՐ ՔՈՒՆԵՆ: ԱՆՀԱՅՏ ԱԿՈՒՆՔՆԵՐԵ ԿՇԱՐԺԻ ԵՎ ԴԵՊԻ ԱՐԵՎ ԿՔԱՐԶՐԱՆԱ ԱՎՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻՆ: ՏԻՆԶԵՐՔԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՆԵՐԵՆ ՆՈՐ ՇՈՒՆՉ ՄԸ ԿԳԶԵ, ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ ԳԱՐՈՒՆ ԲԵՐՈՂ:

ՏԵՐ ԱՍՏՎԱՄ, ԱՅՍ ԻՆՉ ՀՐԱՇՔ Է, ԱՅՍ ԻՆՉ ԱՆՍՊԱՌ ԿԵՆԱՐԱՐ ՈՒԺ Է ՄՇՏԱՆՈՐՈԳ, ՈՐ ԿՈԳԵՇՆՉԵ ԱՇԽԱՐՀԸ ԱՄԲՈՂՁ ԵՎ ՀՅՈՒԼԵՆ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՆ:

ԳԱՐՈՒՆ Է ԱՇԽԱՐՀԻՆ ԵՎ ԶԱՏԻԿ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ»:

Քրիստոնյա աշխարհի համար, սակայն, Զատիկը գերազանցապես ՀԱՎԱՏԻ ՏՈՆՆ է, բնության վերադարձից հետո, տոնը նաև մարդու հոգևոր, բարոյական վերակենդանության:

Արդարև, Քրիստոսի հարության ավետի-
րը խոստովանալից սկիզբը ճանդիսացալ

մի նոր կյանքի, մարդկության ծագում և պատմության մեջ՝ մի նոր շարժման և միա-
ժամանակ մղիչ ուժի փառափայլության:

Հոգեպես և բարոյապես սեանկացած ու գերեզմանի եզրին հասած հին աշխարհի համար Քրիստոսի հառության ավետիքը հենց և իր լույսով ու զորությամբ վերանա-
րոգության շունչը բերեց ծերացած այդ հին աշխարհին:

Հառության այդ ավետիքը կերպարանա-
փոխեց վշտի և հուսահատության մեջ ըն-
կած առաքյալներին: Ահա հառուցյալ Փրկի-
չը նորից նրանց աչքերի առաջ է կանգնած,
չի ավելի հզոր, ավելի կենդանի, և յսում են
նրա վսեմ խոսքերը: Նրանց մեջ, Քրիստոսի
հառության շնորհով, հառություն է առնում
նաև առաքյալական ճշմարիտ հոգին: Նրեկ-
վա հուսահատ և լքված աշակերտները,
հառության ավետիքով գտնեպնդված, դառ-
նում են աշխարհի, համարձակ, առհասարակ
են մտեր և համոզումով փարզում
հառության մեծ գեպեր:

Քրիստոսի հառության ավետիքով վերա-
կենդանացած և յայծառացած, առաքյալ-
ները վերակենդանացին իրենց ժամանա-
կակից աշխարհը, բարոյապես մեռած աշ-
խարհին կյանք տվին և հառության լույսով
լուսավորեցին սերունդների հաճապարհը:
Քրիստոնյա աշխարհը հառության ավետի-
քով անցավ փան դարերի երկար հաճա-
պարհը: Այսօր աշխարհը ավելի փան երբեք,
կարիք ունի բարոյական, հոգևոր, գաղա-
փարական վերազարթոնքի՝ հառության լույ-
սով և հառության գաղափարով:

ՀԱՆԿԱՑՈՒՆ ԵՎ ՈՐՈՇՈՂ, ԲԱՅՑ ՄԻՇՏ ՀՈՒ-
ՍԱՑՈՂ ՄԱՐԴԸ, — ասում է Վեհափառ Հայ-
րապետը իր այս տարվա Զատիկյա փառո-
զում, — ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍՈՎ ԻՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐԱՋԵ: ԿԵՐԱՋԵ, ԿՏՔՆԻ ՈՒ
ԿՔԱՆ ԶԱՌԱՋ, ՄԵՐՈՔ ԿՅՈՐՈՎԻ ԱՆ, ԲԱՅՑ
ՆՈՐԻՆ ԿԱՐՁՐԱՆԱ: ՄԵՐՈՔ ԿՔԱՆԴԵ, ԲԱՅՑ
ՎԵՐԱՏԻՆ ԿԿԱՌՈՒՑԱՆԵ: ԵՎ ՀԱՎԵՏ ԿՏԵՆՁԱ
ԻՐ ՄԵՋ ՆՈՐ ՄԱՐԴԸ ԿԵՐՏԵՆ՝ ԱՎԵՆԻ ԿԱՅԱՐ-
ՑԱՆ, ԱՎԵՆԻ ԲԱՐԻ, ԱՎԵՆԻ ԱՋԱՏ: ՄԵՂՔԻ ԵՎ
ԿՈՒՅՐ ԿԵՐՔԵՐՈՒ ԿԱՊԱՆՔՆԵՐԵՆ, ԻՐ ՀԱ-
ՅԱՋՔԸ ՀԱՌԱՍ ԴԵՊԻ ԵՐԿԻՔ, ԴԵՊԻ ՏԵՍԻՔ
ՃԱՄԲԱՆԵՐԸ ՄԵՐ ՀՈՒՅՍԻՆ, ԴԵՊԻ ԼՈՒՅՍ
ԱՂՔՈՐԸ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ, ԱՅԻ
ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԴՏԵՆԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՅԱՆՔԻ
ԱՅՍ ԻՍԿ ԱՓԻՆ ԻՄԱՍՏՆ ՈՒ ՆՊԱՏԱԿ ԻՐ
ԴՈՑՈՒԹՅԱՆ, ԴՏԵՆԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐԱ-
ԿՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ
ՀՈՐԻՆԵՆ:

Քրիստոնեական հավատը և բարոյականը
խառնվում են հառության պատգամի և
ավետիքի վրա: «ԱՐԴԱՐԵՒ ՔՐԻՍՏՈՍ ՅԱ-
ՐԵԱՒ Ի ՄԵՐԵԼՈՑ»: Ամեն քրիստոնյա
խղճմտանքի համար պատմական անսուտ

վկայություն է և հոգեկան մեծ ճշմարտու-
թյուն՝ առաքյալի այս փառզր: Քրիստոսի
հառության պատմական ճշմարտությունը
հիմնադրել է միաժամանակ փրկությունեա-
կան նկեղեցու կյանքի և գոյության:

Որքան մխիթարական և սրտապնդող է
հառության ավետիքը: Արդարև, կյանքում
անխուսափելի է մահը, բնության օրենյա-
կությունն է ան: Մտնում է մահը ամեն
դեմից և դարձապես և վրդովում կյանքի խա-
ղաղությունը, բնական կյանքի երջանկությու-
նը: Աշխարհը փոշիի հատիկ է մահվան ա-
ռաջ: Կույր աչքերով, մահվան գերանդին
ծեղում, ինչպես նրան պատկերացրել է մո-
ղորդական իմաստությունը, մահը մտնում
է կյանքի կանաչ դաշտերի մեջ, ճեղքում ան-
խնա, չի խնայում ծառ ու ծաղկի, մոր գրկից
խլում է երեխային, որքանցում մանուկնե-
րին: Դարեր շարունակ մահը ծանր մղա-
վանքի նման ճեղք է կյանքի, մարդկային
մտածողության և զգացմունքների վրա:

Միայն Քրիստոս հաղթեց մահվան. «ՄԱ-
ՀՈՒՄՐ ԶՄԱՀ ԿՈՒՆԱՅ» և մարդկությանն
ազատեց մահվան սառսափներից և իշխա-
նությունից: Ո՛րք է ՄԱՀ, ՑԱՂԹՈՒԹԻՒՆՔՈՒ,
ԵՒ Ո՛ՒՐ Է ԴԺՈՒՔ, ԽԱՅԹՈՑ ՔՈՒ: Քրիստոնե-
յայի համար գերեզմանով չի վերջանում
մարդու կյանքը: Գերեզմանը ունայնության
փոս չէ, այլ մի նոր կյանքի նախադուռ,
բացված անմահության, հավերժության նոր
կյանքի վրա:

Քրիստոնյայի մահը մահ չէ, այլ խաղաղ
ու երկար մի նիճ, որից նա զարթնելու է,
ժառանգելու համար անմահությունը: Որքան
մխիթարիչ է հառության ավետիքը տառա-
պող սրտի համար: Քանի՜-փանի՜ մայրեր
հողին են հանձնել իրենց սրտի ծաղիկներին:
Քանի՜-փանի՜ ծնողները զավակներ վշտա-
հար ընկել են իրենց ծնողների գերեզմաննե-
րի վրա: Որքան սփոփարար է այդ բոլորի
համար յոյժ Ավետարանի պատգամը. «ՄԻ՜
ԼԱՅՔ, ԶԻ՜ ԽՆԴՐԻՔ ԶԿԵՆԴԱՆԻՆ ԸՆԴ՝ ՄԵՐՈՒ-
ՆԱԼԱ»: Կյանքում կա՝ սրանից ավելի սր-
տապնդիչ մխիթարություն բոլոր նրանց հա-
մար, որոնք վաղաժամ հողին են հանձնել
իրենց սիրելիներին:

Քրիստոսի հառության ավետիքով եկեղե-
ցին իր զավակներին սովորեցնում է՝ «ԼՅՈՒ,
ՍԵՐՈՒՄԼՔ ՑԱՐԻՆԵՆ. ԱՐԻ՜ ՈՐ ՆՆՋԵՍՏ ԵՒ
ԿԱՆԿԵՆԱՅ Ի ՄԵՐԵԼՈՑ ԵՒ ԼՈՒՍԱՐՈՐԵՍ-
ՑԸ ԶՔԵՋ ՔՐԻՍՏՈՍ»:

Քրիստոսի հառության ավետիքով տոգոր-
ված, Պողոս առաքյալ քրիստոնեության ամ-
բողջական փառաբանությունը կենտրոնացնում
էր Քրիստոսի հառության ավետիքի և պատ-
գամի վրա: «ԵՐԻ՜ ՔՐԻՍՏՈՍ ԶԻՅԸ ՑԱՐՈՒ-
ՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ Է ՔԱՐՈՋՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ,
ԸՆԴՈՒՄԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱՆԱՏՔՆ ԶԵՐ»: Քրիս-

տոսի հարության ավետիքը հավատավոր մարդկության հոգևոր փրկության երաշխիքն է հանդիսանում:

Քրիստոսի հարության ավետիքի ամենաշեմ հավատացողներին մեկն է եղել նաև մեր ժողովուրդը իր կյանքի փորձով: Քրիստոնյա հայ մարդը, Քրիստոսի հաշտության հեղինակի մեջ միշտ տեսել և տոնել է իր հոգևոր, ազգային, մշակութային վերագարձների տունը: Հայ հավատացյալ ժողովուրդը ապրել, աշխատել և ստեղծագործել է հարության հավատով և ավետիքով:

Քսան երկար դարեր շեն մտնել հայ հավատացյալ ժողովրդի հոգուց հարության լույսն ու հավատը: Այսօր ահա իր գերեզմաններից, իր հայրենի անցյալի ավերակներից հարություն է առել հայ ժողովուրդը և հարության զաղափարով գոտեպնդված, հայրենի էրկայի իր լուսապայծառ ապագան:

Հարության այս սրբազան առաքիտուն, ինչքան շեմ, ինչքան իրավ և անկեղծ է հենում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի սրբազան բեմից՝ Ամենայն Հայոց Հայրապետի ղառական սուրբ պատգամը:

«ՀԱՎԱՏԱՅՑԱԼ ԶԱՎԱԿՆԵՐ ՄԵՐ, ԱՅՍՈՐ, ԵՐԲ ՅՆԾՈՒԹՅԱՄԲ ԿՏՈՆԵՆՔ ՄԵՐ ՏԻՐՈՋ, «ՍԻՐՈ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆ»-Ի ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՀԻՇԱՏԱԿԸ, ԱՆԽՈՐՏԱԿ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ, ԱՆԳԱՄ ՄԸ ԵՎՍ ՈՒԽՏԵՑԵՔ ՄԵՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱՆ ԼՈՒՅՍ ՀԱՎԱՏՔԻՆ, ԵՎ ԱՑԳ ՀԱՎԱՏՔԻ ՎԵՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ, ՈՒԽՏԵՑԵՔ ՄԵՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԳԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԲԱԺԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԻՆ, ՈՒԽՏԵՑԵՔ ՄԵՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԵՐ ԽԱՂԱՂԱՏԵՆՑ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՇԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐՈՒՆ, ԽՂՀԱՎԱՏԱՐԻՄ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՏՎԱԾԱՌԱՔ ՊԱՏԳԱՄԻՆ:

ԶԱՏԻԿ Է ԱՅՍՈՐ, ՄԵԾ ԿԻՐԱԿԻՆ Է ԱՅՍՈՐ: ԱՅՍՈՐ «ՅԱՐԵԱՆԻ Ի ՄԵՌԵԼՈՅ ՓԵՍԱՅՆ ԱՆՄԱՀ ԵՒ ԵՐԿՆԱԽՈՐ»:

«ՓԱՌՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹՅԱՆ ՔՈՏԵՐ»:

ԵՎ փառք հաշտափառ հարության հո, ժողովուրդ իմ, ժողովուրդ հայոց:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐԸ
Տ. ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՊԱՏՅԱՆԻՆ՝ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ

**ՎԱՋԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՈՒՆ ԱՋԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԴՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱՋԴԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՇԱՐ
ԱՐՈՒՈՑ ԱՅՐԱՊԵՏԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԻ ԷՋՄԻԱՇՆԻ**

ԴԵՐԱՇՆՈՐԸ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՄՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԻ
ԷՋՄԻԱՇՆԻ, ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՍՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Տիրոջ ռդարմությամբ այս ամառ այցի եկանք Ձեր քեմի եկեղեցիներուն,
Մեր հավատացյալ զավակներուն, անմեռանալի հոգեկան ուրախությանց օրեր
ապրելով ամենուրեք:

Ձեր սուրբ տաճարներուն մեջ, քաղմահազար հավատացյալներու ներկա-
յության, սուրբ պատարագ մատուցինք, զոհաբանական մաղբանքներ կատա-
րեցինք և Մեր կենդանի խոսքով հուստցյալ Մեր հարազատներուն քերինք
աստվածային օրհնություն մեր Տիրոջ և Փրկչի Իշման Սուրբ Սեղանեն, ամե-
նայն հայոց ֆրիստոսաշեն Սուրբ Էջմիածնեն:

Ամեն տեղ խորապես մխիթարվեցանք և հրճվեցանք, տեսնելով Ձեր քե-
մի եկեղեցիներուն շեն ու բարեկարգ վիճակը և Ձեր առաջնորդության ներքե
զործող զինվորայլ եկեղեցականության բարի եռանդն ու անձնդիր աշխատան-
քը: Մխիթարվեցանք և հրճվեցանք մանավանդ տեսնելով Մեր սիրեցյալ ժո-

ղովաղին Բրիտանական հավատքի ջերմությունը և հայկական հոգիի պայծառությունը, ինչպես և անարատ սերն ու հավատարմությունը դեպի Հայաստանյայց Եկեղեցին և դեպի մեր ամենուն պայտեյի Սուրբ Էջմիածինը հավերժական և վերածնած Երեւոյ մեր հայրենական:

«Կենդանի է Տէր եւ Օրհնէալ է ԱՍՏՈՒԹՅ, եւ ԲԱՐՁՐ ԵՂԻՑԻ ԱՍՏՈՒԹՅ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅ» (Սաղմ. Ժէ 47):

Այս հույժ երջանիկ իրողությունը կարատիւն անշուշտ առաջին հերթին գործունեությանը այն հոգևոր սուղընդհանրուն, որով վերջին ավելի քան կես դարա շրջանին իրենց լավագույնը ի գործ դրին իբրև քաջ հովիվներ, կազմակերպելով, զգեցնելով, գորացնելով ու ծաղկեցնելով ամերիկահայ եկեղեցական համայնքները և թեմը:

Այդ նվիրական պարտականությունը այժմ կծանրանա Ձեր ուսերուն վրա, սիրելի՛ Արքայան Եղբայր, պարտականություն, որ Դուք կկատարեք բարձրաստիճան հոգևորականի իրավ գիտակցությամբ և արժանավորությամբ, և աշխատելու բալատիկ եռանդով ու սիրով, անայլայլ կերպով միշտ խավատարիմ Ձեր ախարին, մեր եկեղեցիին ու Ազգին գերագույն շահերուն և Ամենայն Հայոց Հայրապետության:

Քաղցր է Մեզ համար բարձրորեն զնահատել Ձեր եկեղեցական աշխատանքը իբրև առաջնորդ թեմին հայոց Ամերիկայի Միացյալ Նահանգաց և Մեր սրտագին գահունակությունը հայտնելով Մեր հովվապետական այցելության ընթացքին Ձեր առաջած քաջատիկ աշխատանքին յամար՝ ի լիակատար հաջողություն Մեր առաքելության, սույն կոնդակով Ձեզ կհոնենք Մեր հոգևորական սիրտ ողջույնը և հաճախապետական օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, բարի մաղթանքներով հանդերձ, որ Տերը Ձեզ շնորհեց քաջատույն ու խաղաղ կյանքի երկար-երկար տարիներ բեղմնավոր գործունեությամբ՝ ի փառս Աստուծո և ի շինություն Մեր պանդուխտ ժողովուրդի հոգևոր կյանքին:

Առդ, «ԱՐԱՄԵՑԷՔ ՈՐ Ի ՁԵՁ ՀՕՏԴ Է ԱՍՏՈՒԾՈՅ, ՎԵՐԱԿԱՅՈՒ ԼԻՒՈՒ ԼՐՈՒ ԻՐԵՐԵՒ ԱԿԱՄԱՅ՝ ԱՅՈՒ ԿԱՄԱՒ ԸՍՏ ԱՍՏՈՒԾՈՅ... ՁԻ ՅԵՐԵՒԻՂ ՀՈՎՈՒԱԳԵՏԻՆ՝ ԸՆԴՈՒՆԻՋԻՔ ՁԱՆԹԱՌԱՄ ՓԱՌԱՅՆ ՊՍԱԿ» (Ա Պետր. Ե 2—4):

Ձերոց Սրբազնության անսպառ ուժ ու եռանդ և ոգի կենդանաբար ի Տյառնե մերմե Հիսուսե Քրիստոսե այժմ և միշտ: Ամեն:

Վաչագհ Դ

ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ կոնդակս ի 21-ն դեկտեմբերի

1960 Փոկչական տմի,

և ի ամսաբիւ Հայոց Ռեժ,

ի վաճա Սորոյ էջմիածնի:

ՓՐԿՁԻ ՀՐԱՇՈՓԱՌ ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՄՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԱԲԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԳՈՒԹԲ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎԱՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈՒԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ՊԱՏՐԻԱՐԸ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻՆ (ՄՈՍԿՎԱ,
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (ՍՏԱՄԲՈՒԼ),
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԸ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (ԹԲԻԼԻՍԻ),
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐԸ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (ԴԱՄԱՍԿՈՍ),
ՋԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻՆ (ԼՈՆԴՈՆ),
ՌՈՒՄԻՆ ՈՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԸ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (ՐՈՒՄԱՆԻԱ),
ՔՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԸ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (ՍՈՖԻԱ),
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (ԱԹԵՆԱ),
ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԸ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (ԱԴՐԻԱ-ԱԲԵՐԱ),
ՀՆԴԱԿԱՆ ՄԱԼԱՔԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (ՋՈՏՏԱՅԱՍ),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (ՌԻԳԱ),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (ՏԱԼԼԻՆ),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԻԽՏԻ ԱՐԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆԻՆ (ՎԵՆԵՏԻԱ),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԻԽՏԻ ԱՐԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (ՎԻԵՆՆԱ),
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՍՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՎԻԼԹԱՄ
ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏԻՆ (ԺՆԵՎ):

«ՔՐԻՍՏՈՍ ԶԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Հրաշափառ հաղթանակ յայսր վերստին կշռող աշխարհի հորիզոններուն վրա է մեր սրտերէն ներս: Եվ մեր հոգիները նորից կ'իջցվին քաղցր ուրախութիւններով: Զի կ'հաղթանակ մենք, թէ դատարկ է գերեզմանը խաչալ Քրիստոսին և ազատ է հայսին նաեապարհը դիպի հաղիմեհակաւ կ'յանք:

Այս ուրախությամբ կշնորհավորենք Ձեր Աուրը Ջատիկը, մաղթելով Ձեզ կյանքի խաղաղ ու առնչատ տարիներ քեզմեավոր գործունեությամբ՝ ի հոգևոր շինության մեր ժողովուրդին:

Թող գորանան և ծաղկին մեր նկեղեցիները Աստուծո նովանիին ներքև:
Ձեզ սիրող Նղբայր ի Քրիստոս և Ձեզ սպասակից՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ա. Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն

**ՆՈՐԻՆ Ա. ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն

Ձերդ Սրբություն.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌՆԵՆՈՑ»:

Նշանակալից է քրիստոնեական այն բարի սովորությունը, երբ, Քրիստոսի հրաշափառ հառության տառի առթիվ, նկեղեցու նովանները շնորհավորում են միմյանց, ողջույն և բարեմաղթությամբ փոխանակում նրա անունով և աղոթում միասին:

Նկեղեցու միության հաղթանակը արտահայտությունն է մեր երկինք համբարձած Մեծ Հովվապետի պատգամի: Այսպիսով, հառության տառի ուրախ առթիվ, մեր աղոթքը բարձրանում է առ Աստված և փոխադարձ սերը մեզ կապում է միմյանց:

Ողջունելով Ձերդ Սրբությանը մեր Փրկչի լուսապայծառ հառության տառի առթիվ, մաղթում եմ Ձեզ երկարատև կյանք և հովվապետություն՝ ի փառս Ա. նկեղեցու:

Շղբայրական սիրով և հարգանքներով՝ մնամ

Ա Լ Ե Ք Ս Ի

ՊԱՏՐԻԱՐԺ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՍՍԻՈ

Մ Ո Ս Կ Վ Ա

Ձերդ Սրբություն.

Համայն քրիստոնեական աշխարհը ավետում է.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌՆԵՆՈՑ»:

Հառության հրաշափառ դեպքի ֆաղցրությունը վայելելու համար, ամեն մի քրիստոնյա պարտի իր զգացմունքները մաքրել, որպեսզի տեսնի Քրիստոսի հառության հրաշալի լույսը:

Քրիստոսի հառությունը ուրախության զգացմունքով է լցնում մեր ամբողջ կյանքները, մեր միտքն ու սիրտը:

Հառույցյալ Քրիստոսը իր առատ զանձարանից, իր մեծ ժողովությամբ կոչ է անում բոլորին քրիստոնեական եղբայրության և միության:

Այն ժամանակ ամբողջ աշխարհում կթափվի իսկական, ճշմարիտ յաղապանություն:

«ԱՐԴԱՐՆԵՐ ՅԱՐԵԱՒ ՔՐԻՍՏՈՍ»:

Շղբայրական աղոթքներով զանկանում եմ Ձեզ և Ձեր սուրբ, աստվածապան նոտին՝ հաստատ հավատ, խաղաղություն, հանգիստ և բարօրություն:

Ե Փ Ր Ե Մ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ

Ք Բ Ի Լ Ե Ս Ի

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Նղբայր Մեր ի Քրիստոս.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ»:

Երբ տունում եմք մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ հառությամբ տունը, ամենուրեք քրիստոնեական համար հառության ճին ավետիքի միշտ էլ մնում է նոր: Իսկապես գերեզմանից հեշտակի պատգամը հաստատում է մեր Փրկչի հաղթական մեծ իրականությունը խավարի ուժերի վրա. միաժամանակ մարդու վերջնական հաշտությունը Աստուծո հետ, որի համար Հայրն ուղարկեց Իր Որդուն աշխարհ. «Ձի ոչ առաքեալս Աստուած զմեզի Իւր յաշխարհ, քէ դատեացի աշխարհ. այլ զի փրկեացի աշխարհ Հովաթ»:

Նրանց համար, որոնք Քրիստոսին են, այս ավետիսը գրավականն է ինչ հոգի առաջ. «Ես եմ յարություն և կեանք», և որ «նորոգեաց զամենայն»: Քրիստոնյա ժողովուրդը, Նրա Ս. եկեղեցու անդամակցությամբ, վերածնվում է Նրա հառուցյալ կյանքի նորոգությամբ: Ինչպես երանելի Պաղոս առաքյալն է նիշեցնում Եփեսացիներին՝ «Ձի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ նիշեցնում Եփեսացիներին» և ընդ պետությունն և ընդ. աշխարհակալս արեան, այլ ընդ իշխանությունն և ընդ պետությունն և ընդ. աշխարհակալս խառնիս այստիկ», այնպես էլ մենք ստանում ենք Նրա շնորհքը և զորություն՝ հաղթելու Իր մարմնին մեր անդամակցությամբ, որ է եկեղեցին:

Շուտով ես կհրաժարվեմ Քենտրեբերիի Աթոռից, զրանով իսկ կզաղարեմ Ձերդ Սրբության հետ թղթակցելու պատենությունից, «բոլոր եկեղեցիների հոգատարության» հարցում, բայց Դուք կլինեք միշտ իմ խոհերի և աղոթքների մեջ:

Հետադարձ ակնարկ գցելով այն օրերին, երբ ես բարձրացա Քենտրեբերիի Ս. Ազատիկոսի Աթոռի վրա, իրապես համոզված եմ, որ մեր օրերում մենք տեսանք քրիստոնեական կյանքի նշանակալից վերադարձումը՝ եկեղեցիների միջև և այդու իսկ հոգեկան միության անը՝ քրիստոնեական հայտնության մեծ նշմարտությանց մեջ, որոնք հասարակաց են մեզ բոլորիս:

Ձերդ Սրբությունը թող վստահ լինի, որ ես կշարունակեմ աղոթել Ձեզ, Ձեր հավատավոր հոգևորականության և ժողովրդի համար: Քո՛ղ Տերը նշմարության կատարյալ միությունը շնորհի Իր բոլոր ծառաներին, որոնց համար մեր օրհնյալ Տեր Հիսուս Քրիստոսը այնքան եռանդալից աղոթում էր Իր երկնավար Հորը:

Նղբայրական սիրով և ողջույններով, Ձեզ Նղբայր ի Քրիստոս՝

Ջ Ե Ո Յ Յ Ր Ի

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐԵԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍ ԵՎ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՉԱՄԱՅՆ ԱՆՊՈԼԻՆ

Լ ՈՆԿՈՆ

Ձերդ Սրբություն.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌՆԵԼՈՅ»:

Անձամբ իմ և Սրբազան Սինոդի անունից չեղբայրաբար շնորհավորում եմ Քրիստոսի լուսապայծառ հառության տունը, որը միաժամանակ քրիստոնեական աշխարհի հույսի տունն է:

Մեծ է, սուրբ և հրաշափառ Տիրոջ հառությունը: Հրեզեմել և ուրախանանք, որովհետև Աստված բացում է Իր ողորմության դռները, մոտեցնում է մեզ Իրեն Իր ողորմությամբ և լիացնում սիրով, որպեսզի արժանի լինենք հառության բարի պարգևներին, հոգեպես ամրանանք մեր փրկության հաճապարհի վրա:

Լիանանք հառության լույսով և ուրախությամբ փառաբանենք ամենակարող Աստուծո անունը:

Ճշմարիտ է հառությունը, որը նիմեաբան է մեր հավատի և որը մեռ սրտերում փայլատակում է հավերժական լույսով և մեզ միտք պարզեում հասկանալու Ավետարանը Քրիստոսի փրկարար, բավիչ հաղթանակով:

Քրիստոսի հառության փառապանծ տոնի առթիվ, շնորհանդությամբ աղոթում եմ կյանքի իշխանին, որ օրհնի Իր ողորմությամբ և սիրով Ձերդ

Սերբությանը, Ձեր միաբանությանը, հավատացյալ ժողովրդին և համայն վարդ-
կությանը տա խաղաղություն և բարեհաճություն:

Թող բերկրափր լինի Քրիստոսի հառությանը:

Սեզ հանձնում ենք Ձեր սուրբ աղոթքներին և մնում Ձերդ Սերբության
խոնարհ և զբայր ի Տեր:

Կ Ի Ր Ի Լ

ՊԱՏՐԻԱՐԳ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

Ա Ա Յ Ի Ա

Վեհափառ Տեր.

Խորին երախտագիտությամբ և բերկրայիւր սրտով ստացանք Ձերդ Վե-
հափառ Տերության 20 մարտ թվականի թանկադին ավետարեք շիսուսի Ս.
Հառության Ձեր սրտեռանդն մաղթանքներով և օրհնությամբ համօրեն աստ-
վածապահ ուխտիս և ինձի ուղղված:

Մենք ալ, Վեհափառ Տեր, նույնքան սիրով և հրեմանում կպատասխա-
նենք քեզի. «ՍՐՇՆԱԿ Է ԶԱՐԻՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ», և կխնդրենք, որ հանյի
ընդունի մեր ամենաչեքս և անկեղծ մաղթանքները: Թող հառուցյալ պաշտելի
մեր Փրկիչը իր անգին աշուճին զոհաբերությամբ նորանոր շնորհաց և օրհ-
նության ու հաջողության շրջան մը բանա Ձերդ Վեհափառության և համօրեն
հայ ժողովրդյան մեր Հայրենի հողին վրա և ի սփյուռս աշխարհի. թող ծաղ-
կին Ձեր և մեր լավագույն հույսերն և ակնկալությունները խաղաղության և
բարօրության մեջ:

Այս ջերմ մաղթանքներով և լավագույն զգացումներով կմնամ Վեհա-
փառ Տերությանդ ամենախոնարհ ծառա:

Հ. ՍՐԱՊԻՈՆ ՌԵԼՈՒԶՈՅԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲՐԱ
ՄԽԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Վեհափառ Տեր.

Ձվարհացյալ մեծավ ուրախությամբ մերձակա տոնիվ Ս. Հառության
Փրկչին, կփութամ շնորհավորել Ս. Ձատիկը, մաղթելով արևաշատություն և Ձեր
հոգևեվեր ջանքերուն աստի հունձ մը:

Մահվամբ խաչին մեզ փրկությոն, հաղթական հառությամբ մեզ բերկրու-
թյոն և հույս՝ Քրիստոս կենդանին հավիտենից:

Սրհնյալ է հառությունն Քրիստոսի:

Աղոթակից՝

Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՋՅԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲՐԱ
ՄԽԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Վ Ի Ե Ն Ե Ա

Ձերդ Սրբություն.

Հանուն եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր հարապա-
րության, Ս. Ձատիկի առթիվ հղում եմ Ձեզ մեր հատուկ, ջերմ շնորհավորանք-
ները:

Աղոթում ենք վերանորոգված հույսով, Ձեր և Ձեր եկեղեցու վրա Աստու-
ծո մեղայուն օրհնության համար: Թող Տերը զորացնի մեր հառուցյալ Տիրոջ և
Փրկչի վկայությունը աշխարհի բոլոր խրիստոնյա եկեղեցիների առաջ:

Մնամ հարգանքով:

Վ. Ա. ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏ

ԵԿԵԼԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ժ Ը Ն Ե Վ

**ՓԻՐԻՉԻ ՀՐԴՇԱՓԱՌ ԵՎ Ս. ՀԱՐՈՒՐՅԱՆ ՏՈՆԻ ԱՌՓԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՌԻՆ ՍՈՒՐԲ ՕՏՈՒՐՅՈՒՆ
Տ. Տ. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԵՎԼԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՈՆԵՐԻ ՈՒ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱՐ
ՈՂՋՈՒՑՆԵՐ ՀԵՒԱԳԻՆԵՐՆ ՈՒ ԳՐՈՒՐԵՈՒՆՆԵՐԸ**

ԱՄԻՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԵՇԵ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄ.
ԱՄԻՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ, ՍՍՍՐՔՈՒՎ.
ԱՄԻՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԲԵՅՐՈՒԹ.
ԲԱՐԵՆԵԱՄ ԲՈՂՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

Հրաշափառ հառաքյան լույսը վերստին կշռող աշխարհի հորիզոններուն վրա և մեր սրտերեն ներս:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ, ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄԱՀ ԿՈՆԵՆՑ ԵՒ ՅԱՐՈՒՐ-
ԹԵԱՄԲՆ ԻՐԻՈՎ ՄԵՋ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՆԵԱՑ:

Եվ մեր հոգիները նորեն կլեցվին խաղցր ուրախություններով: Զի կհա-
վատանք մենք, թե դատարկ է գերեզմանը խաչյալ Քրիստոսին և ազատ է
հույսին հաճապարհը դեպի հավիտենական կյանք:

Առդ, սիրելի՛ սրբազան եղբարք, հոգեշնորհ վարդապետք և արժանապա-
տիվ ֆառանայք և դո՛ւք, հավատացյալ զավակներ Մեր, ցնծացե՛ք և ուրախ
Լդե՛ք, հոգիով հեռացե՛ք և օրհնեցե՛ք զԱստված: Եվ մանավանդ փրկության
մեծ հույսով և հառուցյալ Փրկչին շնորհներով վերանորոգեցե՛ք մեր մեջ հին
մարդը և մտածեցե՛ք Իր լույսին, դառնալու համար «լուստ ուղիներ» խորհույ-
ղով, բանիվ և գործով: Թող մեր սրտերը շերմանան ավետարանական սիրտ և
խաղաղության շունչով և մեր ձեռաց բոլոր գործերը բլլան բարի, շինարար:

Թող ծաղկին մեր եկեղեցիները Ա. Էջմիածնի աստվածային օրհնության
ներքև, թող անին ու գորանան մեր բոլոր եկեղեցաշին կազմակերպություննե-
րը և հաջողությամբ պսակվին մեր սուրբ ծրագրիները և աշխատանքները:

Քաջառուջ ու բարձր, իբրև հառադատ եղբայրներ, ապրեցե՛ք և գործե-
ցե՛ք Քրիստոսի սիրով և հավատով: Հիմա ՔԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՋ ԽՈՐՈՒԹԻՒՆ,
ԵՒ ՈՋ ԱՅՆ ԻՆՋ ԱՐԱՐԱՄ՝ ԿԱՐԷ ՄԵԿՆԵԼ ԶՄԵՋ Ի ՍԻՐՈՑ ԱՆՏԻ ԱՍՏՈՒԾՈՑ,
ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ Ի ՏԷՐ ՄԵՐ» (Հռոմ. Ը 39), զի այդ՝ ճշմարտապես,
«ՅԱՐԵԱՒ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՌԵԼՈՑ»: Եվ «ՆՄԱ ՓԱՌՔ ՅԱՆԻՏԵԱՆՍ, ԱՄԷՆ»:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ՍԷՐ ՅԱՐՈՒՐՅԱՆ ՈՐԴԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՂԵՑԻՆ ԸՆԴ ԶԵՋ
ԱՅՅՄ ԵՒ ՄԻՇՏ: ԱՄԷՆ»:

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ՄԱՅՐ ԱՌՈՐ Ա. ԷԶՄԻԱՄԻՆ

Հատկական շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական
և կրթական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միու-
թյան Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին
(Նյու-Յորք), Գաղութային կապակցության հիմնադրության Կենտրոնական խնամա-
կալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժազե դի Ագերեզո Պերտիզանյանին
(Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր.

երվանդ Աղանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ժամկետային հանձնաժողովին (Քեյրոս), Վարդանանց ասպետների ընկերակցության (Նյու-Յորք), Հայկական Քաղաքապետական Ընդհանուր Միության «Մարտիրոս Սարգսյան» ակադեմիայի վարչության (Հալեպ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն

Զատիկ առթիվ Ձերդ Սրբության կներկայացնենք մեր լավագույն մաղթանքները: Կաղաքենք, որպեսզի Տերը միշտ բարգավաճ պահե մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ձերդ Սրբության բարձր ղեկավարության ներքին:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԲ

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Ե Մ

Ընդունեցե՛ք բոլորիս գաղական շնորհավորությունները:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԲ

Ս Տ Ա Մ Բ ՈՒ Ռ Ի

Սուրբ Զատիկ հրաշափառ տոնին առթիվ ընդունեցե՛ք մեր և մեր հոտին քեզմազին շնորհավորությունները, մաղթելով Ձերդ Վեհափառության հաջող կյանք:

Տերը անսասան պահե Ս. Աթոռը:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ր Ա Յ Ր ՈՒ Ք

Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զրկած, արտասանմանի և ներքին մեր բոլոր քեմերից, քեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ՈՐԻՆՆԵՐ ՆՅՈՑ ՀԱՅՐԱԳԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՓՐԿԶԻ ՀՐԱՆՔՓԵՆՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(տպւած Ա. Էջմիածնի Մայր Տաճարում, 1961 թվականի ապրիլի 2-ին)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

Արեւելայ և հարազատ զավակներ Մեր, որ ի Հայաստան և ի Ափյուտս աշխարհի:

Գողգոթայի տառապանքի բարձունքներէն մեր սրտերուն մեջ կիջնեն այսօր մեծ ավետիսը աշխարհաստան՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵՆԻ Ի ՄԵՌԵՆՈՑ, ՄԱՀՈՒՆՄԱՐ ԶՄԱՀ ԿՈՆԵՆԱՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԱՐՆ ԻՒՐՈՎ ՄԵՋ ԶԿՆԱՆՍ ՊԱՐԳԵՆԵԱՑ»:

Փա՛ռք, փա՛ռք հրաշափառ հաւոյթյան Քո Տե՛ր, Հիսուս Քրիստոս, Փրկիչ մեր:

Հավատալով և հուսացլալ ողորդ Մեր, դուք բոլորդ, միասիրտ, ցնծացե՛ք և ուրախ եղե՛ք, և օրհնեցե՛ք մարդասերն Աստված, զի ահա դատարկ է գերեզմանը մահվան և փշրված են շղթաները դժախին, մեղին, չարին:

Անկայուն և ուռնող, բայց միշտ հուսացող մարդը, Քրիստոսի հաւոյթյան լույսով իր հաւոյթյունը կերպեց: Կերպեց, կտնի ու կխալե հառաջ: Մերք կգործի ան, բայց նորէն կրարձրանա: Մերք կհանգե, բայց վերստին կկառուցանեն: Եվ հավետ կտենչա իր մեջ նոր մարդը կերտել՝ ավելի կատարյալ, ավելի բարի, ավելի ազատ՝ մեղին և կույր կիրքերու կապանքներէն, իր հայացքը հառած դեպի երկինք, դեպի տեսիլ համբաները մեծ նույսին, դեպի լույս աղբյուրը հավիտենական կյանքին, ա՛յդ հանապարհով գտնելու համար կյանքի ա՛յս իսկ ավելի՛ն՝ իմաստն ու նպատակը իր գոյութեան, գտնելու համար հավասարակշռութիւնը և խաղաղութիւնը իր հոգիին:

Տո՛ւր մեզ, Տե՛ր, ամենուս և ամբողջ այս աշխարհին՝ Քու լույսը և Քու խաղաղութիւնը:

Այսօր, երբ Քրիստոս հաւոյթյան հույսը կավետե մեր հոգիներուն, ինքը բնութիւնն ալ կսրափի իր տունէն: Անհայտ ակունքներէ կշարժի և դեպի արև կբարձրանա ավուանը կյանքին: Տիեզերքի հավետենականութեան ճեղքներէն նոր շունչ մը կփչե, մեր աշխարհին գարուն բերող:

Տե՛ր Աստված, այս ի՛նչ հրաշք է, այս ի՛նչ անսպառ կենսաբար ուժ է մշտանորոգ, որ կոգնչնչե աշխարհը ամբողջ և հոյակն մեր հոգիին:

Գարուն է աշխարհին և Զատիկ մեր հոգիներուն:

Մեղալ թվացող երկիրը կգարթնու, կվերանորոգվի, կգարդարվի նոր պատմութեամբ և կդառնա բուրաստան: Երկինքը կդառնա ավելի լուսավոր և յայծառ, լուսինն ու աստղերը՝ ավելի մատիկ և մտերիմ մեզի:

«Երկինք և երկիր Աստուծո փառքը կպամենա»: Հափշտակված, երջանիկ, յուր կիսսինքն՝ Աստուծո հետ և Լրգի մը պես անուշ մեր հոգիին մեջ ձայն մը անձանոթ կնյութե ճևհաբր տիեզերքի և կյանքի խորհուրդին:

Միտքի՝ հավատացյալներ, դարձան հրաշալի այս յուսաբացին, վերածնած բնության ծոցին մեջ, առավել կզգանք ու կապրինք ճշմարտությունը հառուրյան գաղափարին:

Կանգնած կյանքի ու մահվան սահմաններուն վրա, Քրիստոսի հառության ավետիսը մեզ կուսավորե, մեզ կգորացնե, մեզ կոգեշնչե հավատով և յավանասությամբ, մեզ կմղե դեպի կյանք, դեպի աշխատանք, դեպի բարի գործ: Վասնզի իզուր չեն մեր նիգեթը, իզուր չէ մեր տխրությունը, իզուր չի վառիր մեր հույսի մրազը, փրկարար յույսը Բրիտոնեական մեծ հույսին: Եվ ավելի օականվին: Քրիստոսի հառության ավետիսը մեզի համար հաղթանակն է նորմարտության և արդարության և բոլորական արժեհներուն: Հաղթանակ մը ընդդեմ սուտին ու դավին, հաղթանակ մը ընդդեմ անիրավության և բռնության, ընդդեմ չարիքի և բարոյագուրկ կիրկերուն:

Քրիստոսի հառության ավետիսը հաղթանակն է մանավանդ ավետարանական սիրտ և խաղաղության պատգամին:

Ձի Հիսուս հաղթեց աշխարհին, մանավանդ սիրով: Եվ մեզի բոլորիս կտակ մը թողուց, որ մարդկային աշխարհին մեջ՝ միայն սիրով կարելի է ճշմարտության հաղթել, որ միայն սիրով կարելի է ճշմարտապես նոր կառուցանել ու մարդկային արժեհներ ստեղծել, որ միայն սիրով կարելի է ճշմարտապես արդարություն և խաղաղություն և երջանկություն բաշխել մարդոց և աշխարհին:

«Ձի ՁԶ Է ԱՐԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՐԱԿՈՒՐ ՆԻ ԸՆԴՆԵԼԻ, ԱՅԼ ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԽԵՂԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Ի ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ» (Հոսմ. ԺԴ 17):

Ահա քե ինչու՝ Մեր գաղափարն պատգամը է և պիտի մնա սրտագին կոչ մը, ուղղյալ մեր Ա. եկեղեցիին, մեր նվիրապետական բոլոր Աթոռներուն, համայն հայ հավատացյալ ժողովուրդին և մանավանդ ուղղյալ ձեզի, սիրեցյալ պանդուխտ զավակներ Մեր, որ ամենիդ անխտիր սուրբ սրտերով ընդունիք ավետիսը Քրիստոսի հրաշափառ հառության, որ նորոգեմ է մեր մեջ հին մարդը, տկար ու անկատար, որ դառնալ ճշմարտապես յուսո ուղիներ, զվարթերես ու լավատես, և ձեռ կյանքը վարեք իմաստությամբ, արդարադատությամբ, նվիրված առաքիլի գործերու, որ Քրիստոսի սիրտ և խաղաղության ոգին միշտ առաջնորդեն ձեռ իշխեր և դուք միշտ աղոթեք և աշխատիք անապառ կամով, մեր Ա. եկեղեցիին և ժողովուրդին միության և ներքին խաղաղության համար:

«ՄՐԲԵՑԷՔ Ի ԲԱՅ ԶՀԻՆ ԽՄՈՐՆ, ՁԻ ԵՂԻՑԻՔ ՆՈՐ ԶԱՆԳՈՒԱՆ, ՈՐՊԷՍ ԷՔԻ ԱՆԽՄՈՐՔ, ՔԱՆՁԻ ԶԱՏԻԿ ՄԵՐ ԶԵՆԱԻ ՔՐԻՍՏՈՍ» (Ա Կորնթ. Ե 7):

Բայց մանավանդ աղոթեցե՛ք և գործեցե՛ք աշխարհի խաղաղության համար: Այսօր, երբ մեր ժողովուրդը, մանավանդ գերեզմանեն հառություն առած, խաղաղ ու ապանով իր նոր կյանքը կկառուցանե իր Մայր Հայրենիքին մեջ ահա Բաղասուն տարիներ ի վեր, հառատե վերելքի ու ծագվումի մը հաճապարհով, բոլոր հայադղիներուն սեպուն պարտին է ըղձալ, որ խաղաղության պայմաններ ամրապնդվին աշխարհի վրա ամեն տեղ, բոլոր սահմաններուն վրա և բոլոր սահմաններեն անդին, որ պատերազմը հոշակվի մարդկության դեմ ոճիր, որ պետություններ իրապես զինաթափվին, որ գիտության հրաշալի նվաճումները կիրառվին խաղաղ ու շինարար նպատակներու, հանուն ժողովուրդներու բարօրության, հառաջդիմության և երջանկության:

Հայաստանյայց եկեղեցին, իր գլխավոր ունենալով Ա. էջմիածինը, այս գիտակցությամբ պիտի շարունակե աղոթել ու գործել այն խոր համոզմամբ, թե խաղաղության հանապարհին ամեն աշխատանք, ամեն զոհաբերում աստվածաճան է, մարդասիրական է և հայրենաշեն:

Խաղաղության պատգամի լուծումը Մենք կենպտենք «ԼՐՈՒՄՆ ՈՐԻՆԱՅ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ», և գերագույն հրամայականը մեր կրոնական և ազգային խղճին:

«ԱՅՍՈՒՆՆԵՑԵԻ ԱՐԳԱՐԱՅԵԱԼՔ Ի ՀԱՆԱՏՈՅ ԱՆՏԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՔ ԶԱՐԴ ԱՌ ԱՍՏՈՒԱՆ Ի ՁԵՌՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ» (Հոսմ. Ե 1):

Հավատացյալ զավակներ Մեր, այսօր, երբ ցնծությամբ կտանենք մեր Տիրոջ՝ «Սիրտ և խաղաղության իշխան»-ի հառության մեծ նիշատակը, անխոր-

տակ լավատեսությամբ, անգամ մը ևս ուխտեցե՛ք մնալ հավատարիմ մե-
քիստոնենան և լույս հավատին, և այդ հավատի վեմ Մայր Աթոռ Ս. Էջմիա-
ծնին, ուխտեցե՛ք մնալ հավատարիմ եկեղեցիին և Ազգի միասնության և
անբաժանելիության կանոնին, ուխտեցե՛ք մնալ հավատարիմ մեր խաղաղա-
տեն, և հայրենաշին ժողովուրդի գերագույն շահերուն, և հավատարիմ համայն
աշխարհի խաղաղության և ազգային բարեկամության աստվածառա՛մ պառ-
գամին:

Քառիկ է այսօր: Մեծ կերակին է այսօր: Այսօր «ՅԱՐՆԱԻ Ի ՄԵՌՆԼՈՑ
ՓԵՍԱՅՆ ԱՆՄԱ՛Ն ԵՒ ԻՐԿՆԱԻՈՐ»: Եվ «ՍԻՒՆ ԼՈՒՍՈՑ ԾԱԳԵԱՑ»:

Արդ, պայծառացե՛ք, դո՛ւք, եկեղեցիներ, պայծառացե՛ք դո՛ւք, հուսացալ
զավակներ Մեր: Լույս առե՛ք հարության լույսին, դո՛ւք, որ «ՔԷՊԷՏ ԵՒ ԵՐԲԵՐՈՐ»,
էի՞ք ԽԱՆԱՐ, ԱՐԴ ԼՈՅՍ ԷՔ Ի ՏԷՐ, ԻՐԵՆԻ ԶՈՐԴԻՍ ԼՈՒՍՈՑ ԳՆԱՑԷՔ» (Եփես.
Ե 8):

«ԵՒ ԱԶԱՏԱՑԵԱԼՔ Ի ՄԵՂԱՅՆ ԵՒ ԾԱՌԱՑԵԱԼՔ ԱՍՏՈՒԾՈՑ, ՈՒՆԻՔ ԶՊՏՈՒՂ
ԶԵՐ Ի ՍՐԲՈՒԹԻՒՆ, ԵՒ ՎԻՆՃԱՆ ԻՈՐԱ ԿԵԱՆՔ ՅԱԻՏՆԵՒՑ» (Հռոմ. Զ 22):

Լույս և շնորհք հրաշափառ հարության Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի
եղիցին ընդ ձեզ:

Դո՛ւք բարոզ, բարոզ անխաբ, ապրեցե՛ք, անեծե՛ք ու ծաղկեցե՛ք խա-
ղաղ, բաշտոռոջ, սիրով միաբան, շնորհներով Ս. Հարության և օրհնության
ներքև մեր Ս. եկեղեցիին և աստվածակառույց Ս. Էջմիածնին:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՆԱԻ Ի ՄԵՌՆԼՈՑ»:

Հարուցալ Փրկչի Իշման Ս. Սեղանեն և Հայոց աշխարհեն՝ ողջույն, ող-
ջույն ձեզ և բյուր օրհնություն: Ամէն:



ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

(ՎԱՐԴԱՑՎՈՒՄ Է ԱՎԱԳ ՀԻՆԴՇԱՔԹԻ ՈՏԵԱԼՎԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ)

«Աստված սեր է, և ով որ սիրո մեջ է մնում, նա Աստուծո մեջ է բնակվում, և Աստված՝ նրա մեջ», — ասում է Քրիստոսի սիրելի աշակերտ, Որոտման որդի Հովհաննեսը:

Ա՛րդ, եղբայրներ՝, լսեցե՛ք և մտքում պահեցե՛ք սիրո ճառը:

Ով սիրում է Աստուծուն, սիրում է նաև իր եղբորը:

Որովհետև Աստուծո սերը հայտնվում է եղբոր սիրո մեջ: Եթե եղբորը, որին տեսնում ես, չես սիրում, Աստուծուն, որին չես տեսնում, ինչպե՞ս կարող ես սիրել:

Սրանով հասկանում ենք, թե սիրում ենք Աստուծուն, եթե սիրում ենք մեր եղբորը հոգևոր սիրով, և ոչ մարմնավոր: Որովհետև այլ է սերը հոգու և այլ՝ սերը մարմնի, որի մասին կխոսենք ստորև իր տեղում:

Արդ, ով սիրում է, ճանաչվում է Աստուծուց և ինքը ճանաչում է Աստուծուն: Ով չի սիրում իր եղբորը ցավակցաբար, հեռու է Աստուծուց և աստվածային շնորհները չի կարող ընդունել:

Ով սիրում է իր եղբորը սուրբ սրտով, քիակարան կլինի Աստուծո, և Աստված կբնակվի նրա մեջ:

Որովհետև Տերն Ինքը սիրեց մեզ և ուղարկեց Ճշմարտության Հոգուն մեր մեջ բնակվելու:

Որպեսզի մեր իմանալի հոգիները՝ Աստուծո անիմանալի Հոգու հետ սիրով կապակցվեն:

Եվ ինչպես Ինքը սիրեց մեզ, նույնպես և մեզանից պահանջում է սիրել միմյանց:

Տե՛ս, թե որքա՞ն համարձակություն ունի սերը Աստուծո մոտ, որ մարդուն դարձնում է նրա նման, որովհետև Աստված իր սիրով մարդկանց նմանվեց:

Նա ցույց տվեց, որ մարդիկ իրենց սիրո՛վ պետք է նմանվեն Աստուծուն:

Որովհետև Աստված այնքան սիրեց աշխարհը՝ մինչև իսկ իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհի Դիակության համար:

Եթե մենք սիրենք միմյանց, ինչպես Աստված սիրեց մեզ, չկա ոչ մի շար քան, որը խափանի մեր սերը:

Ով որ սիրում է, հայտնի է մարդկանց առջև և համարձակ՝ Աստուծո առաջ:

Որովհետև մահվան մեղքերից երկյուղ չունի, այլ Աստուծո սիրով զինված է և անվախ՝ բոլոր երկյուղալի վտանգներից:

Որտեղ սեր, այնտեղ երկյուղ չկա, ինչպես Հովհաննեսն է ասում. «Սիրո մեջ երկյուղ չկա, այլ կատարյալ սերը դուրս է վանում երկյուղը, որովհետև երկյուղը տանջանքների տակ է, իսկ սերը՝ համարձակության մեջ. և որովհետև երկյուղը հալածվում է սիրուց և ուր սեր չկա, այնտեղ է դատաստանի երկյուղը, և հենց դատաստանի մեծ օրվա կորուստյան սարսափը»:

Սերը մարդուն աներկյուղ է դարձնում բոլոր տանջանքների նկատմամբ:

Ես սեր նրան կասեմ, որ բոլորովին զերծ է երկրալուծությունից, որովհետև երկրալուծյունը և սերը միասին չեն կարող:

Հայտնի է, որ սերը ոչ միայն հավիտենական կյանքում է բերում խաղաղության իր պտուղները, այլև այս աշխարհում վանում է բոլոր տեսակի թշնամությունները՝ նախանձն ու ատելությունը, ռիսակալությունն ու շար գիտավորությունները, շարախոսությունն ու հայհոյանքը, տրտուլն ու բամբասանքները, հպարտությունն ու գոռոզությունը և մանավանդ բոլոր շարիքների մայր՝ արծաթասիրությունն ու ագահությունը:

Արդ, ով որ սեր ունի՝ այս բոլոր շարիքներից հեռու կմնա և երկնային խաղաղ նավահանգիստը կհասնի բոլորովին ապահով:



Ի՞նչ կա ավելի խաղաղ քան սերը՝ ազատ
լինել բոլոր տեսակի խռովություններից և
կատարել Աստուծուն հաճելի գործերը:

Սերը Նրկնքի Արքայության բանալին է և
հավիտենական կյանքի ճանապարհը:

Սերը մարդկանց Աստուծո ռդրիներ է
դարձնում և Նրկնքի Արքայության ժառան-
գորդ:

Սերը ապականացու բնությունն անապա-
կան է դարձնում և մահկանացուներին ան-
մահության է վերափոխում:

Սերը երկնային է դարձնում և հողեղեննե-
րին՝ հրեղեն:

Եվ արդ, ո՞վ կարող է պատմել սիրո այն-
քան մեծությունը, որովհետև անճառելի և
անպատմելի է, ինչպես աստվածության ան-

եղ բնությունն անքննելի է, այնպես է նաև
սիրո բնությունը:

Եվ ինչպես Աստված անսահման է, բայց
մոտ է բոլորին և քնակվում է հեղերի ու խո-
նարհների և նրանց մեջ, որոնք երկյուղածու-
թյամբ են լսում նրա խոսքերը, նույնպես էլ
սերը մոտ է բոլորին, որոնք ուզում են նրան՝
և ինքը զալով քնակվում է իրեն փնտրողնե-
րի մեջ: Սերը սիրում է իրեն սիրողներին և
ասում է իրեն ատողներին:

Նրանք, որ փնտրում են սերը, նա մոտ է
նրանց աստվածապես, որովհետև Աստված
սեր է և սիրո կամեցող՝ սուրբ սրտով և ան-
կեղծ հավատով:

Աշխարհարարի վերածնդ
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՍՈՒՐԻԱՍՅԱՆ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՄԱՐՏԻ 11-ԻՆ, ՇԱՐԱԹ, Հոգևոր ձեմարանի ընթերցասրահում տեղի ունեցավ ուսանողուժյան ուժերով կազմակերպված դրական-գեղարվեստական երեկո:

Գրական-գեղարվեստական երեկոյին քաղաքի Մարտի 11-ի սրահում Շաքարյանը կարդաց «Անտառի որդին» խորագրով իր գրած քարոզը: Ուսանողները կատարեցին արտասանություններ, երգեր ու խմբերգեր:

Գրական-գեղարվեստական երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 12-ԻՆ, ԳԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը: Քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարտի 12-ի «Պարտ է յամենայն ժամ կալ յաղթիս և մի՛ ձանձրանալ» բնարանով (Ղուկ. ԺԲ 1):

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԱԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր ձեմարանի ուսանողուժյանը «Մարդու նկարագրի ճարտարապետությունը» թեմայի շուրջ շահեկան դասախոսություն կարդաց ձեմարանի դասախոս Սարգիս Կոնստանյանը:

Դասախոսությունը լսվեց խորին հետաքրքրությամբ:



ՄԱՐՏԻ 18-ԻՆ, ՇԱՐԱԹ, «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարանացն և մտին ի վերապն»:

Մայր Տաճարում պատարագեց և օրվա ազգային-եկեղեցական տոնի հոգևոր նշանակության մասին քարոզեց գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Տեր-Սահակյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, Երևանի եկեղեցիներում, օրվա տոնի և Մեծ Սրբի կյանքի ու գործի մասին քարոզեցին Մայր Աթոռի միաբան սարկավագները:

Օրվա տոնի առթիվ, նույն օրը, փակ էր Հոգևոր ձեմարանը:



ՄԱՐՏԻ 19-ԻՆ, ԳԱՆՍՏԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթրոյանը և հավուր պատշաճի քարոզեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 20-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՐԱԹԻ, Հոգևոր ձեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմի գլխավորությամբ, ուխտի գնաց խոր Վիրապի վանքը:

Սրբավայրում, ուսանողությունը կատարեց իր ուխտը և ապա հանգամանորեն ծանոթացավ խոր Վիրապի վանքի պատմությանը:

Այնուհետև ուսանողությունը այցելեց Դվինի ավերակները, ուր նույնպես ծանոթացավ Հայաստանի երրեմնի մայրաքաղաքի պատմության, քաղաքի Մայր Եկեղեցու և Կաթողիկոսարանի շինությանը:

Ուսանողությունը երեկոյան ուրախ և բարձր տրամադրությամբ վերադարձավ Մայր Աթոռ:



ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ԶՈՐԵՔՇԱՐԱԹԻ, Մայր Տաճարում կատարվեց Մեծ պահոց Արևազալի վերջին հանդիսավոր ժամերգությունը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Արևազալի ժամերգությունը ներկա էին Հոգևոր ձեմարանի դասախոսական կազմը և Մայր Աթոռի պաշտոնեությունը:

ՄԱՐՏԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ առավոտյան, Հոգևոր ձեմարանում սկսվեցին կիսամյա քննություններն ու ստուգումները, որոնք տե-
 վեցին մինչև մարտի 28-ը, երեքշաբթի օրը:
 Ուսանողությունը հաջող քննություններ
 հանձնեց ընդհանրապես «լավ» և «գերա-
 զանց» գնահատականներով:

ՄԱՐՏԻ 24-ԻՆ, ՈՒՐԱՒԱԹ երեկոյան, Մայր
 Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախա-
 գահությունը, կատարվեց Մեծ պահոց վերջին
 հանդիսավոր հսկումը:

ՄԱՐՏԻ 26-ԻՆ, ԵԱՂԱՋԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ,
 Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդի-
 սավոր սուրբ պատարագ մատուցեց Վրաս-
 տանի հայոց թեմի առաջնորդ գերապատիվ
 Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը
 և քարոզեց՝ նկարագրելով Քրիստոսի հաղթա-
 կան մուտքը Երուսաղեմ, վեր հանելով օրվա
 մեծ տոնի բարոյական նշանակությունը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
 Հայրապետը:

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում տե-
 դի ունեցավ «Դոն Բարցեք»-ի հանդիսավոր ա-
 րարողությունը:

Ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԱՎԱԳ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ,
 դատկական տոներին առթիվ, Հոգևոր ձեմա-
 րանի ուսանողությունը տրվեց արձակուրդ:
 Երեկոյան ժամերգությունից հետո ուսանո-
 ղությունը խոստովանվեց Մայր Տաճարում:

ՄԱՐՏԻ 30-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱՐԹԻ, «Յիշա-
 տակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
 տոսին»:

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր
 Տաճարում պաշտվեց սուրբ պատարագ, Պա-
 տարագեց հոգեշնորհ Ս. Գարեգին ժայրա-
 գույն վարդապետ Տեր-Հակոբյանը:

Սուրբ պատարագի ավարտին, Հոգևոր ձե-
 մարանի ուսանողությունը սուացավ սուրբ
 հաղորդություն:

Երեկոյան ժամը 5-ին, Մայր Աթոռի լուսա-
 րարապետ գերաշնորհ Ս. Սահակ արքեպիս-
 կոպոսի հանդիսագրությունը, կատարվեց
 «Ուտնալվա»-ի կարգը:

Հանդիսության ներկա էր Վեհափառ Հայ-
 րապետը:

Երեկոյան ժամը 7-ին Մայր Տաճարում
 պաշտվեց հսկում և գիշերային ժամերգու-
 թյուն: Վեհափառ Հայրապետը կարդաց հրա-
 կումի առաջին մեծ Ավետարանը:

ՄԱՐՏԻ 31-ԻՆ, ՈՒՐԱՒԱԹ, «Յիշատակ լար-
 յարանաց և խաչելության Տեառն մերոյ Յի-
 սուսի Քրիստոսին»:

Առավոտյան ժամը 9-ին Մայր Տաճարում
 կատարվեց Խաչելության կարգը:

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրա-
 պետը Մայր Տաճարում նախագահեց թաղ-
 ման արարողությունը:

ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ, ԵԱՐԱԹ, «Երազալոյց Զատ-
 կին»:

Մայր Տաճարում ավանդական հանդիսա-
 վորությունը կատարվեցին առավոտյան և
 երեկոյան ժամերգությունները:

Հոգևոր ձեմարանի ուսանողները հաջողու-
 թյամբ ընթերցեցին Դանիելի գիրքը, Երազա-
 լույցի սուրբ պատարագը մատուցեց գերա-
 պատիվ Ս. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հով-
 հաննիսյանը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ
 Հայրապետը, եկեղեցական թափոռով և «Այ-
 սօր յարեալ ի մեռելոց» շարականի երգակ-
 ցությամբ, առաջնորդվեց Վեհարան, ուր օրհ-
 նեց միարանությունը:

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻՆ, ԶԱՏԻԿ, «Ճարու-
 թին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսին»:

Առավոտյան ժամը 11.30-ին Վեհափառ
 Հայրապետը, ամպհովանու տակ, հանդիսա-
 վորությամբ առաջնորդվում է Մայր Տաճար,
 մատուցելու Զատիվա տոնի առթիվ հայրա-
 պետական սուրբ պատարագ:

Ս. Սեդանին սպասարկում են գերաշնորհ
 Ս. Սահակ և Ս. Վարդան սրբազանները, վար-
 դապետներ, քահանաներ և սարկավազներ:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վե-
 հափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Ե-
 րեանի ռադիոկայանից ձայնասփռվում է
 Վեհափառ Հայրապետի զատկական քարոզը:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ
 Հայրապետը Վեհարանում ընդունում է զատ-
 կական շնորհավորություններ միարանու-
 թյան և պաշտոնական անձանց կողմից, ապա
 օրհնում է և բարեմաղթություններ անում
 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անասանության և
 Հայ Եկեղեցու պաշտառության, Հայրենի
 երկրի և համայն հայ ժողովրդի բարգավաճ-
 ման և աշխարհի խաղաղության համար:

Ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական Իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնական անձանց և հյուրերին:



ԱՊՐԻԼԻ 3-ին, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, «Յիշատակ մեռելոց»: Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենյանը:

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգիստ Ժվասն համօրէն ննջեցելոց:



ԱՊՐԻԼԻ 4-ին, ԵՐԵՔՇԱՐԹԻ, Վեհափառ Հայրապետի բարձր հրամանով, Հնդկաստան, Իրաք և Հիւրանան գործուղվեց մի պատվիրակություն, բաղկացած գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսից և դիվանապետ Հայկ Առաքելյանից:

Մայր Աթոռի պատվիրակությունը մեր եկեղեցիներին և հայ հավատացյալ ժողովրդին կտանի Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները և հայրական խորհուրդները՝ Ի շինություն և համարապնդումն մեր ժողովրդի հոգևոր միասնություն:



ԱՊՐԻԼԻ 4-ին, ԵՐԵՔՇԱՐԹԻ, Հոգևոր Ժեմարանի ուսանողությունը զրոսապտույտ կատարեց դեպի Արզնի առողջարանը:

Արզնիում ուսանողները, հաստատության գլխավոր բժշկուհու առաջնորդությամբ, այցելեցին առողջարանի կաբլինետները, լողարանները, եղան Արզնի կուրորդի առաջին և երկրորդ բաժանմունքներում, և հրաժեշտ առին լավագույն տպավորություններով:

Ուսանողները նախաճաշեցին Արզնի առողջարանին կից, Հրազդանի ֆիին:

Ապա ուսանողները իրենց ճանապարհի վրա այցելեցին Եղիվարդի պատմական եկեղեցին, դիտեցին նաև Աշտարակի գմբեթավոր բազիլիկան:

Երեկոյան ժամը 4-ին ուսանողները վերադարձան Մայր Աթոռ քաղցր հուշերով:




ԱՊՐԻԼԻ 5-ին, ԶՈՐԵՔՇԱՐԹԻ, Հոգևոր Ժեմարանի ուսանողները զրոսապտույտ կատարեցին դեպի Երևան: Ուսանողները եղան Պետական պատկերասրահում, Թումանյանի տուն-թանգարանում, այցելեցին Պանթեոնը, ուր կանգ առին Կոմիտաս վարդապետի շիրմի առաջ:

Ուսանողները ապա այցելեցին Հրազդանի ձորը, եղան մանկական երկաթուղում ու վերադարձան Մայր Աթոռ:



ԱՊՐԻԼԻ 6-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, զատկական արձակուրդներից հետո, վերսկսվեցին Հոգեվոր Ժեմարանի դասերը:





ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՋԱԳՈՐՍԿԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետի րարեհաճ կարգադրությամբ, 5-րդ ամիսն է, որ որպես ուսանող երկու ընկերներով գտնվում ենք Զագորսկի ուսական հոգևոր ճեմարանում, ուսումնասիրելու համար ուսական եկեղեցական երաժշտությունն ու աստվածաբանությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի ուսանողներին և Զագորսկի վանքի ուսական հոգևոր ակադեմիայի ուսանողության միջև արդեն հաստատվել է եղբայրական կապ և մտերմություն: Մենք միշտ սիրով և երախտագիտությամբ կհիշենք այն օրերը, որ անցկացրինք Մոսկվայից 40 կիլոմետր հեռավորության վրա գտնվող հոգեվոր այդ կենտրոնում և երկար տարիներ վառ կպահենք մեր ստացած տպավորություններն ու հուշերը մեր դասախոսներից, ընկերներից, ապագա երիտասարդ ուսանողներականներից:

Ս. Էջմիածնից մեկնելիս, մեզ հետ էինք տարել նաև Կոմիտասի հայկական պատարագի երգեցողության որոշ համարներ, մաքնիտոֆոնի ժապավենի վրա ձայնագրված:

Զագորսկում, մեր ազատ ժամերին, մեր սուս ընկերների հետ հավաքվում և հաճախ զրուցում էինք եկեղեցական արվեստի վերաբերյալ հարցերի շուրջ և մերթ ունկրնդում Կոմիտասի պատարագը:

Պետք է նշեմ, որ առաջին իսկ առիթից, ուսական հոգևոր ակադեմիայի րարձրագույն դասարանների աշակերտները ջերմորեն սիրեցին և գնահատեցին Կոմիտասի

պատարագի հոգեթով երաժշտական հմայքը:

Այդ հանգամանքը հյուր հայ սարկավազներիս մեջ միտք ծագեցրեց ուսական հոգևոր ճեմարանի ամբողջ դասախոսական կազմի և ուսանողության համար կազմակերպել հայ եկեղեցական երաժշտության նվիրված երեկո:

Որոշեցինք և դիմեցինք ճեմարանի տեսչության, որը սիրով և նույնիսկ շնորհակալությամբ ընդունեց մեր առաջարկը:

Մարտի 20-ին, երկուշաբթի օրը, ուսական հոգևոր ճեմարանի հանդիսասարհում տեղի ունեցավ հայ հոգևոր երաժշտության նվիրված զրական-երաժշտական երեկոն:

Երեկոյի նախապատրաստության օրերին, Մոսկվա ժամանեց Ս. Էջմիածնից մեր վերադարձու գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը: Սրբազանը մարտի 20-ին, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարզե վարդապետ Գևորգյանի հետ այցելեց Զագորսկ, ուր ընդունվեց ջերմորեն և ներկա եղավ հանդիսության:

Երեկոյան ժամը 7-ին ճեմարանի դուռն էին հավաքվել ուսանողությունը, շուրջ 250 հոգի, դասախոսական լրիվ կազմը, զրխավորությամբ ճեմարանի ղեկավոր Կոնստանտին Ռուժիցկու, որը Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հետ նախագահեց երեկոյին:

Մինչ այդ, ճեմարանի ուսանողություն յավագունս ծանոթացնելու համար հայոց սուրբ պատարագի նշանակությունը և կար-

գր, հալոց պատարագամատուցի Հովսեփ Արդուխյանց արքեպիսկոպոսի ռուսերեն թարգմանությունից զատել և մեքենագրել էինք տվել առանձին հատվածներ, որոնք պետք է հրդվեին:

Հանդիսության սկզբին, ճամարանի ռեկտոր Կոնստանտին Ռուժիցկին ուսանողության ներկայացրեց սրբազան Հուրին և իր ուրախությունը հայտնեց սրբազանի ներկայության համար: Ապա խոսք առավ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հաղորդեց ճամարանի վերատեսչության, դասախոսական կազմին և ամբողջ ուսանողության՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնություններն ու ողբույնները և իր ղեկավարությունը հայտնեց այսպիսի զեղեցիկ առիթով Զազորսկու գտնվելու համար:

Այնուհետև Կոմիտաս վարդապետի կյանքին և երաժշտական մեծ վաստակին նվիրված հանդիսության բացումը կատարեց Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գեորգյանը:

Ապա, տողերիս ստորագրողը, ռուսերեն լեզվով, հանդես եկավ հայ երգի արքա մեծավաստակ Կոմիտաս վարդապետի կյանքին և գործին նվիրված ընդարձակ զեկուցումով:

Զեկուցման առաջին բաժնում հանգամանորեն խոսվեց հայ հոգևոր երգի, հայոց շարականների ծագման, բովանդակության, արվեստի, առաջին շարականագիրների և մեր մեծ երաժշտագետների վրա, սկզբից մինչև ժ. դար, մինչև Կոմիտաս վարդապետը:

Զեկուցման երկրորդ բաժինը նվիրվել էր Կոմիտասի կյանքին և գործունեությանը Մայր Աթոռում, Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և նվրոպական մի շարք երկրներում:

Կոմիտասյան պատարագ, այս էր զեկուցման բուն նյութը, որի վրա երկրորդն խոսեց զեկուցողը, Կոմիտասյան պատարագը ներկայացնելով որպես եկեղեցական արվեստի անկրկնելի զեղեցկություն և հայ հավատավոր հոգու աղոթք:

Հանդիսության երկրորդ բաժնում գործադրվեց երաժշտական մաս՝ բաղկացած Կոմիտասյան սուրբ պատարագից և աշխարհիկ երգերից:

Հանդիսականները հոգեկան մեծ բավականությամբ ունենդրեցին Կոմիտասյան

«Սուրբ Սուրբ»-ը, «Որդի Աստուծոյ»-ն, «Հոգի Աստուծոյ»-ն, «Հայր մեր»-ը, «Միայն Սուրբ»-ը, «Տէր ողորմեա»-ն, «Օրհնեալ Աստուած, Քրիստոս պատարագեալ»-ը, «Գոհանամք»-ը և «Եղիցի անուն Տեառն օրհնեալ»-ը:

Այնուհետև Կոմիտասյան «Խորհուրդ խորին»-ը և «Ընտրեալդ»-ը կատարեց Պետրոս սարկավագ Բերեքյանը, իսկ Կարապետ սարկավագ Բենիկյանը՝ «Կոունկա»-ը և «Երրորդ բացվին»-ը:

Բուրբ ներկաների սրտագին ծափերի և խանդավառության տակ, խոսք առավ ճամարանի ռեկտոր Կոնստանտին Ռուժիցկին և ջերմ շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սարկավագներին՝ այս շատ հաջող և անմոռանալի երեկոյի և հոգեկան մխիթարության համար:

Այնուհետև ռեկտորը խոսեց Հայ և Ռուս եկեղեցիների սիրալիր փոխհարաբերությանց անհրաժեշտության մասին, և ամբողջ ճամարանի վերատեսչության, դասախոսական կազմի և ուսանողության երախտագիտությունն ու հարգանքը հայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ապա խոսք առավ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և ջերմ շնորհակալություն հայտնեց ճամարանի վերատեսչության, որ թույլ է տվել ուսանողության՝ ուսական հոգևոր ճամարանի կամարների տակ ունկնդրել Հայ եկեղեցու երաժշտությունը նրա մեծանուն վաստակավորի՝ Կոմիտաս վարդապետի գործի մեջ:

Այնուհետև սրբազանը բարեմաղթություններ կատարեց Հայ և Ռուս եկեղեցիների պայծառության և համագործակցության համար՝ քրիստոնեական սուրբ և եղբայրական սիրով, միասին աղոթելու և գործելու աշխարհում կայուն խաղաղության համար:

Ժամը 9-ին Հայկազուն սրբազանը և Պարգև վարդապետը հրաժեշտ առին և մեկնեցին Մոսկվա:

Մարտի 20-ը անմոռանալի կմնա Զազորսկի հոգևոր ճամարանի ուսանողության հիշողության մեջ՝ որպես հայ եկեղեցական երաժշտության նվիրված երեկո:

Զազորսկ, 21 մարտի 1961 թ.
ՊԵՏՐՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐԵՔԻԱՆ





ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ ՏԱՐԵՆԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ.— Մարտի 13-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը:

Բացելով ժողովը, Ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը խոսեց ընթացիկ տարում մեր գիտնականների նվաճումների մասին, առանձնապես ծանրակալով Ակադեմիայի առանձին ինստիտուտների գործունեության վրա:

Ակադեմիայի 1980 թվականի գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար Լ. Բուեիաթյանը: Նա հանգամանորեն վերլուծեց Ակադեմիայի հիմնարկների այն առաջընթացը, որը տեղի է ունեցել ընթացիկ տարում, նշեց նոր աստիճան է հիմնարկների, աշխատանքների կոորդինացման, միջազգային գիտական կապերի ամրապնդման ուղղությամբ Ակադեմիայի ձեռք բերած հաջողությունները, հիշատակեց այն կարևոր արդյունքները, որոնք ստացվել են Բաբեյանի ակադեմիայի և մեխանիկայի ինստիտուտում:

Բյուրականի աստղագիտությանը հաջողվել է հայտնաբերել սպիրտակ թվականներից բաղկացած մի քանի աստղակույտ: Նման օրասեմների միջև այժմ հայտնի չեն եղել աստղագիտությանը:

Երկրաբանության քննադատում հայտնաբերվել են նոր հանքատեսակներ, որոնց լայն հեռանկարներ փնդացում Հայաստանի արդյունաբերության հետագա զարգացման համար:

Էներգետիկայի ինստիտուտում կանոնավոր կերպով գործել է 1958—1959 թվականի ընթացքում կուտակված էներգիայի օրասեմների աշխատանքը վերլուծող անալոգ մեքենան: Այդ մեքենան իր որակով չի գիշում Սովետական Միությունում և արտասահմանում կառուցված լավագույն նման մեքենաներին:

Այս տարվա սկզբում շահագործման հանձնվեց նաև Բյուրականի մեծ ռադիոհեռուգծիչը:

Բյուրականում է գտնվում այսօր Սովետական Միության խոշորագույն ռադիո-հեռագիտակց, որը թափանցում է տեղեկության հեռավոր խորքերը:

Ձեկուցողը կանգ առավ նաև Ակադեմիայի գիտական կապերի ընդլայնման վրա, նշեց, որ Հայկական

ՍՍՌ Գիտությունների ակադեմիան ավելի լայն ճանաչում է ստանում ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանյան խոշոր գիտական կենտրոնների կողմից: Ավելի ու ավելի շատ գիտնականներ են մասնակցում համամիութենական և միջազգային օլիմպիադաների, համագումարների, կոնֆերանսների աշխատանքներին, հանդես գալիս գիտական զեկուցումներով:

Ընդլայնվել է նաև գիտական գրքերի գրադիտանակումը արտասահմանյան երկրների հետ: Ակադեմիայի կենտրոնական գրադարանը այժմ կապ է պահպանում 34 երկրների 240 գիտական հիմնարկների հետ:

Ակադեմիայի կազմը հաջվետու տարում համալրվեց չորս ակադեմիկոսներով, 12 թղթակից անդամներով, 635 աշխատակիցներով: Այժմ Ակադեմիայում աշխատում են 3220 հոգի, որից 1932-ը՝ գիտական աշխատողներ:

Ժողովի ընթացքում խոսվեց նաև Ակադեմիայի աշխատական թանգարանի դիրքնորոգումը: Կարողա՞նք պատկերացում, Ակադեմիայի թղթակից-անդամ Խ. Աղայանը և ուրիշներ:

Ընդհանուր ժողովը հավանություն տվեց Ակադեմիայի 1980 թվականի գործունեությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՌԻՆԻ ԱՎԵՆԻ ՔԱՆ 550 000 ԲՆԱԿԻՑ.—

Վերջին երկու տարում մեր մայրաքաղաք Երևանի բնակչությունը զգալի չափով ավելացել է: Հայկական ռեսպուբլիկական վիճակագրական վարչության տեղյակներով վերջին երկու տարում քաղաքի բնակչությունը աճել է մոտ 50 000-ով: Երկրային մերկանի բնակչության թիվն անցնում է 550 000-ից:

ՈՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՑ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԳՊՐՈՑԻ 100-ԱՄՑԱՆՐ.— Աշտարակի շրջանի Օշական գյուղի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցը, 100-ամյա հոբելյանի կապակցությամբ, պարգևատրվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրով:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ Ե. Մ. Առուշանյանը վերջերս Օշական գյուղում պատվոգրեր պատճենապես հանձնեց դպրոցին:

Այս քաղաքապետի առթիվ, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրերի արժանացան նաև Մես-

րոպ Մաշտոցի անվան դպրոցի մի խումբ ուսուցիչներ:

Մի ՆՈՐ ԶՆՈՒՄԳՐԱՑՈՒՑԱԿ.— Մատենադարանի գիտական աշխատող Սամսոն Լալաֆայանը կազմել է Վրաստանի Գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտում գտնվող հայերեն ձեռագրերի ցուցակը: Այդ ձեռագրերը, որոնք թիվը հասնում է շուրջ 300-ի, հետաքրքրական տեղեկություններ են հաղորդում Հայաստանի և հայ ժողովրդի պատմության, արվեստի և ընդհանրապես հայ մշակույթի և երկու հղբայրական ժողովուրդների գրական, մշակութային հարաբերությունների մասին:

ՄԵՆԶԱՑԱՑՆՆԻ ՀՐԱՅՑԱ ԱՆՈՒՑԱՆԻ ՄԵՆԳՑԱՆ ԾԱՄԱՐԱՆԸ.— Անկախորդ լեզվաբան Զ. Անադյանի մենդյան ԾՄ-ամսյակին էր նվիրված Երևանի Ալեք. ասեղը Մյասնիկյանի անվան ռեսպուբլիկական գրադարանում բացված ցուցահանդեսը, որ ներկայացված են մեծ դիտակների լեզվաբանական և հայագիտական րազմաթիվ աշխատությունները, որոնք տարբեր ժամանակներում լույս են րիծայվել Հայպետհրատի և Հայաստանի Գիտությունների ակադեմիայի և Երևանի համալսարանի հրատարակչությունները: Մուցադրված էլույթներ են ակադեմիայի լեզվաբանի Վանի, Աղուիսի, Նոր-Ջուզայի, Համշենի բարբառների ուսումնասիրությունները: Մուցադրված են նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» այն համարները, որոնք էջերում տպագրված են Զ. Անադյանի աշխատությունների վերլուծությանը նվիրված հաղորդումները:

ՏԱՐԱՍ ԾԵՎՉԵՆԱՐՈՑԻ ՄԵՆԳՑԱՆ 100-ԱՄՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎՈՒ.— Մարտի 10-ին Երևանի Հայ-ֆիլհարմոնիայի համերգային փոքր զանիճում տեղի ունեցավ հորեկանական նիստ՝ նվիրված ուկրաինացի

մեծ րանաստեղծ և նկարիչ Տարաս Շեչենկոյի մահվան 100-ամսյակին, որի գործերը 1900-ական թվականներին իսկ թարգմանվել են հայերենի:

Հանդիսավոր նիստը բացեց Հայաստանի գրողների միության քարտուղար Է. Թոփյանը: Ապա Տարաս Շեչենկոյի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ րանաստեղծ Վ. Դավթյանը: Վերջում տրվեց համերգ:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱՐԱՄ ԽԱՅԱՏՐԱՆԸ ԱՎԱՏՐԻԱՅՈՒՄ.— Վերջերս Վիեննայի Ֆիլհարմոնիայի հրավերով, մոտ երկու շաբաթ Ավստրիայում հյուր եղավ հայ Էշանավոր կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը, որը մի շարք համերգներ տվեց Վիեննայում, Զալցբուրգում և Լինցում: Մրադրում եղել են հնդիսակի նրկարդ սիմֆոնիան, Կոնցերտ դաշնամուրի համար՝ նվագախմբի հետ, հատվածներ «Գայանեն» րակտից և ուրիշ ստեղծագործություններ:

Կոմպոզիտորի ստեղծագործությունների կատարումը դրավել է երկրի երաժշտական հասարակայնության մեծ ուշադրությունը:

ԳՐԶԵՐ ԱՐՏԱՍԱՆՇՄԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.— Ընթացիկ տարում Հայգրքի առևտրի վարչությունը արտատաճմանյան երկրներ է առաքել զեղարվեստական, տեխնիկական, գյուղատնտեսական, երաժշտական, մանկական գրականության վերաբրյալ շուրջ 300 անուն գիրք: Առաքված գրքերի թվում են «Սովետահայ գրականության ընտիր էքերի ժողովածու»-ն, մեր մայրաքաղաքի տնտեսական վայրերը պատկերող «Երևան» ալբոմը, Ստեփան Ջորյանի «Հուշեր»-ը, Ա. Դանալանյանի «Հայկական առածանի»-ն, Ա. Իսահանյանի և Ա. Շիրվանզադեի 3-րդ և 4-րդ, Վրթանես Փափազյանի 4-րդ և 5-րդ և Բաֆֆու 10-րդ հատորները: Շուտով մեծ թվով դասագրքեր կուղարկվեն Սփյուռքի հայկական դպրոցներ համար:

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայկական առածանի».— Վերջերս Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությանը լույս տեսավ Արամ Դանալանյանի «Հայկական առածանի»-ն:

Հանալանյանի «Հայկական առածանի»-ն առաջին անգամ հրատարակվել է 1951 թվականին: Նրա 1960 թվականի հրատարակությունը բաղկացած է ընդարձակ «Ներածություն»-ից, որ հանգամանորեն վերլուծված է հայ ժողովրդական առածների բովանդակությունն ու արվեստը, և Առածների ժողովածու»-ից, որտեղ առանձին դիվիզների մեջ թեմատիկ խմբավորմամբ ի մի են հավաքված հազարավոր առած-ասացվածքներ, իրենց րազմաթիվ նմանակներով ու տարբերակներով: Հատորն ունի նաև մանրամասն առարկայական, թեմատիկ և աղբյուրների և տեղանունների համառոտագրությունների ցանկերը:

«Հայկական առածանի»-ն հայ ժողովրդի մտքի, հանճարի, ճանալողության և հոգեկան կորովի արտահայտություն է, մի մեծարժեք կոթող:

ԱՐԱՎՑԱՆԻ «ՎԵՐԲ»-Ը ՎՐԱՑԵՐԵՆ.— Ի նշանավորումն եղբայրական Հայաստանի 40-ամսյակի, վրացա-

կան «Սարճոթա Սաքարթվելո» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց Խաչատուր Արավյանի «Վերջ Հայաստանի» վեպի վրացերեն թարգմանությունը: Թարգմանությունը կատարել է Արտեմ Դավթյանը, իսկ գիրքը խմբագրել է Արիլ Դավթյանը:

Վեպի թարգմանությանը նախորդում է խմբագիր Արիլ Դավթյանի առաջարանը, որտեղ համառոտ պատմում է Խ. Արավյանի կյանքի և ստեղծագործության մասին:

Թարգմանության առթիվ ասված է. «եվ իսկպես, մենք լղիտենք մեկ այլ երկ, որն աղպիսի ուժով, այդպես խորը արտացոլեր մեր հարևան հայ ժողովրդի տառապանքները»:

Արավյանը իր հայրենակիցների կրթքի տակ վառում է հայրենասիրության կրակը: Սակայն նրա հայրենասիրությունը ազատ է նեղ նադիտալիզմից, այլ ընդհակառակը, նա հանդես է գալիս արպես ժողովուրդների համերաշխության, բարեկամական համագործակցության քատագույն:

Հովհաննես Գ. Մուրադյանի «Կարեկեմի քարեդուր».— Վերջերս Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադե-

Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԽԱԶԱՏՈՒՐԾԱՆ*

Գ. ՆԱՐԵԿ ԵՎ ԻՐ ԹԱՐԳՄԱՆԻԶՆԵՐԸ

1. ՀԱՆՈՒՆ ՀՈԳՆԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԻ

Հայ ժողովուրդի ստեղծագործ ճիգերուն ուշագրավ մեկ երեւոյն է իր ձգտումը՝ հաղորդակից դառնալու օտար մտքին։

Հազվագեւոր են այն ժողովուրդները, որոնք կրցած են յուրացնել դուրսին եկած ավիշը՝ առանց խաթարելու իրենց սեփական հոգին, ինչպէս կրցած է ընել հայ ժողովուրդը իր բովանդակ կյանքին մեջ։

Իպտուր չէ, որ Թարգմանչաց դար կոչեցին երկունքի, ճիգի, ստեղծագործութեան այն մեծ դարը, որ հայ գրականութիւնը օժտեց անկորնչելի գոհարներով։ Թարգմանութեանց դար մըն էր ան, ուր օտար միտքը կուգար հայ մտքին մեջ պարպվիլ, ձուլվիլ անոր մեջ, ու անոր հետ նույնանալ։

Առաջինները երբեմն իրավունք ունին «Traduttore traditore» կրսն խտայական առածը՝ Արդարեւ, ձուլվ կթարգմանեն՝ կգավաճանեն։

Վերածվելով օտար լեզվի մը, որքան կկորսնցնեն իրենց հմայքն, մանավանդ արվեստի երկերը։

Թարգմանիչներ կան, որոնք կգոհակացնեն, կայլանդակեն, կխեղաթլուրեն իրենց թարգմանածը։ Երբեմն լեն կրնար թափանցել

անոնք հեղինակին իսկական մտածումներուն, երբեմն ալ անզոր կմնան զանոնք արտահայտելու իրենց լեզվովը։ Քիչերը միայն կհաջողին հարազատ մնալ։

Եվ այնուամենայնիվ դուրսին բան էր Ոսկեդարու մեր վարպետներուն համար զմայլելի թարգմանութեամբ մը հայերենի վերածել օտար հրաշակերտները։ Գրաբարը արդեն շքեղ լեզու մըն էր, բյուրեղացած ու գեղեցկացած։ Ան ընդունակ էր օտար միտքը արտահայտելու լրիվ։

Այդ պայմաններուն մեջ հրաշք մը չէր, երբ ստեղծվեցավ Թարգմանութեանց թագուհին։

Հետագա դարերուն ալ գրաբարը ծառայեց օտար միտքը հայերենի վերածելու ճիշտ է. բնագիրներ եղան, գորս դեռ լրիվ արտահայտելու ընդունակ չէին հայ լեզվի բառերը, և թարգմանիչները, շվարած, մոլորեցան հաճախ, երբ կփորձեին հարազատ թարգման ըլլալ բնագրին։ Հունարան դպրոցը ուրիշ բան չէ մեր մատենագրութեան մեջ, բայց եթե տկարութիւնը մեր թարգմանիչներուն, որոնք նախընտրեցին հայ լեզուն աղճատել, քան բնագիրը։

Բայց երբ իր գահուցեն վար առին գրաբարը, ավելի ևս շվարեցան մեր թարգմանիչները, ճիշտ է, որ ռամկորենի տիրապե-

* Նարեկական «Էյմիածին» ամսագրի 1980 թվականի Մ Մ Թ-ից, Ժ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1981 թվականի Մ Մ Բ-ից և Գ-ից։

Պրոֆ. Մկրյան իրավացի էր, երբ գիտել կուտար. «Գործածվող լափերի բազմազանությունը և հաճախակի փոփոխությունը նարեկում, իհարկե, բանաստեղծի քմահաճության կամ ձեռագրատեղան հակամեծի արդյունք չեն. ոչ ոք մեր միջնադարի գրականության պատմության մեջ նարեկացու լափի մեկ զեղեցիկության զգացողություն և բմբուռողություն հանդես չի բերել, հետևաբար, գուցե և ոչ ոք նրա լափի գեղեցիկ և անպայտական դալժակղություններին, Ոստանավորի լափի զեղեցիկության բմբուռումը նարեկում զուգակցված է բովանդակության հետ. նարեկացու համար միշտ այն լափն է նախընտրելի, որի կիրառությամբ չի ձնշվում, այլ ազատ արտահայտություն է գտնում բովանդակությունը. նա ոչ մի զեպրում չի գտնում իրականության լափերում, չի կաշկանդում իրեն առանձին լափական շրջանակներով: Այլ կերպ նարեկը գեղարվեստական տեսակետից լափազանց կտուժեր, որովհետև այն մեծ է ուժեղ գրաման, որ ապրում է բանաստեղծը, այն անընդհատ փոփոխությունների ենթակա հոգին երբեք չէին կարող միապաղաղ ուղիղակիան-երաժրչական արտահայտություն ստանալ»⁴⁸:

Կշռույթները չեն միայն, որ ներդաշնակություն կուտան նարեկին: Ողբերգության ամբողջ մատյանը լափածո երկի մը տալավորությունը կթողու:

Մանուկ Արեղյան փորձեց ապացուցանել արդարև, որ լափածո է նարեկը, թեև ձեռագիրներում մեջ հատվածները չեն ներկայանալ տողատված ձևով: Այնուամենայնիվ թարգմանիչը պետք է գիտակցի, թե զործունի տաղաչափյալ հատվածներու հետ, և ըստ այնմ բազմապատկե իր ձիգը:

Նմանաձայնությունը (onomatopée), ինչպես նարեկացիի տաղերուն, նույնպես նարեկի դանաղան հատվածներուն մեջ. նվազ զովարության չի մատնեթ թարգմանիչը, եթե ան կուզե պահպանել զայն իր թարգմանության մեջ ալ, նարեկացիի գրած է.

«... հալին մեղք, հալածին դեք
խզին կապանք, խորտակին շղթայք
տեղի տան տխրութիւնք
մեկնի մէղն, մերժի մառախուղն
գնայ գիշերն
տարագրի տաղնապն
լքանան շարիքն
հալածին յուսահատութիւնք...»:

Փորձեցեք, եթե կրնաք, աշխարհաբարի մեջ ալ պահպանել նմանաձայնությունը այս տողերուն մեջ:

Առեղծվածներով (énigme) շփոթության մատնել իրենց ընթերցողները՝ հիններուն մեկ

քմայքն էր: Այդ քմայքը ունեցած է և նարեկացին, իր նարեկին մեջ տեղ մը կրսն ան. «Քանզի իննուց յըսնից և թուոց երից և շորեակ տասանց ի վաղորդայնէ տունջեսն առ մուտս արեուն անդուտս առ նմին յաւէտ կարկառմամբ», Այս առեղծվածին լուծման շուրջ համաձայն չեն ցարդ մեր բնասերները: Ըստ Ավետիքյանի, օրինակ, «իննուց յըսնից» կնշանակե 9×50=450, «շորեակ տասանց»՝ 4×10=40, գումարը 490, որ իր կարգին արտադրայն է 70×7-ի, որով նարեկացին կակնարկե Քրիստոսի այն պատվերին, թե ընկերոջը պետք է ներել 70×7 անգամ: Այս կերպով կմեկնե Գարեգին Տրապիղոնցին ալ, հատվածը թարգմանելով սապես. «Ինն անգամ յիսուն և շորս անգամ տասն հեղ րարիք զործենք»⁴⁹, Թորգոմ Եպիսկոպոս Գուշակյան հատվածը սապես կթարգմանե. «Եթե հիսնիցս ինը և շորիցս տասն անգամ... իրարու ներելը գերիվեր է»⁵⁰: Մինչ Ստեփան Մալխասյան կառարկե հետևյալ լուծումը. «Ինն յիսուն = 450 + թիւք երեք = 3 + շորեակ տասունք = 40, բնգամներ 493, գումար, որ վերածվում է հետևյալ թուիրին՝ 400, 70, 20 և 3, որոնք նպատակահարմար շարքով դասավորելով և տառերով արտահայտելով (70=Շ, 20=Ի, 400=Ն, 3=Գ) կստանանք հինգ բառը: Առեղծվածը այս ձևով լուծելն հետո, Մալխասյան կենթադրե, թե նարեկացի ակնարկած է աղոթելու անհրաժեշտության թի վաղորդայնե տունջեսն առ մուտս արեուն սահմանված աղոթքի հինգ ժամերուն, որոնք, ըստ ժամագրքի, հետևյալներն են. Առավոտու, Արեագալի, Ծրբորդ, Վեցերորդ և Իններորդ, մինչդեռ աղոթքի մյուս շորս ժամերը (Գիշերային, Ծրեկոյան, Խաղաղական և Հանգստյան) դուրս կմնան ցերեկվան հիշյալ ժամերեն»⁵¹:

Ալլաբանություններով (allégorie), շրջաբանություններով (périphrase) և փոխաբերություններով (métaphore) ևս լեցուն է նարեկացին, ինչ որ նույնպես զովարությանց կմատնե թարգմանիչը:

Հալ բանասեր մը, օրինակ, բաղմամբիվ փոխաբերություններ կքաղե նարեկեն, նարեկացին հոն ալքի փոխարեն կրսն «Տրագարան տեսութեանց», ականջի տեղ՝ «Ելսելիաց դրունք», զխի մագի տեղ՝ «Հզտերն ոս-

49 Գարեգին Եպիսկոպոս Տրապիղոնի, «Նարեկ», էջ 140:

50 Թորգոմ Եպիսկոպոս Գուշակյան, «Նարեկ», էջ 185:

51 Ստ. Մալխասյան, «Մի առեղծված նարեկի մեջ», Վիեննա, 1911:

48 Լ. Լ. Մկրյան, «Գրիգոր Նարեկացի», էջ 233:

տոց գազաթան», ոտքի տեղ՝ «հաստարան տարածութեան շինուածոյ մարմնոյ», և այլն⁵², բարձրութեան շինուածոյ մարմնոյ», և այլն⁵³, և արդարեւ, խոսքի ձեւերու հաճախ կհանդիպիս նարեկի մեջ. պետք է արթուն ըլլաս շարժելու համար:

Խորնարանաւորումները, որոնցմով նույնպէս լի է նարեկը, չեն կրնար շարժել պետքի է նարեկը, որպէսզի անոնց թափանցես. և նենա հոգիդ, որպէսզի անոնց թափանցես. և կացիի հոգեկան հուզումներուն, կենճոտ պարբերութեանց ետին ճշգրիտ մտածումը գտնելու համար:

Ոմանք կգտնեն նուրիսիկ, թե այնքան ալ խորնարանութիւն չկա նարեկի մեջ, որքան քեզ կթփի պահ մը. սէյն բանասերները, որոնք խոսելու են Ողբերգութեան մատյանի լեզվի մասին, իբր թերութիւն մատնանելու են, որ այդ լեզուն շատ տեղ մով է և խըթին, Բայց այս կարծիքը այնքան էլ փշտ չէ: Եթե մի կողմ թողնենք այն հնարավոր քերականական ազգամարմնները, որ կարող էին, թեկուզ պատահաբար, առաջանալ արտագրողների ձեռքով, ապա նկատված մթութիւնից ու խորնարանութիւնից քիչ բան կմնա, համեմատելով անհամեմատ քիչ, քան դրանք գոյութիւն ունեն նրա ներքոններում, մանավանդ տաղերի մասում⁵⁴:

Հետո ինչո՞ւ մեղադրել, թե խրթին է նարեկացին իր ոճին մեջ, երբ խրթին է ինքը մատյանին հոգին: Քառսին մեջն են ճամբարտնել, փարատել մշուշը, որ տարածված է առջևդ, ու հասնիլ խորքը մարդկային հոգւոյն՝ այդ է դերը անոնց, որ կփորձեն արվեստագետը վերելու:

Այդ դերն է վիճակված թարգմանիչին ալ: Մինչև որ չիջնես նարեկացիի հոգւոյն խորը, զայն թարգմանել չես կրնար:

3. ՆԱՐԵԿ ՕՏԱՐ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ

Օտար աշխարհը շատ բան չի գիտեր նարեկացիին ու իր նարեկին մասին: Մեր դասականներուն մեծ մասը թարգմանված է օտար լեզուներու, ոմանք մեկն ավելի անգամներ, մինչ նարեկացին ցարդ անմատչելի մնացած է բոլորին: Ոչ ալ անոր մասին շատ բան գրված է:

Երվանդ Շահազիզ կպատմե, թե 1879-ին, երբ ուսանող էր Լազարյան ճեմարանի մեջ, Մկրտիչ էմին ուսանողի նոր էր թարգմաներ Հայ Եկեղեցւոյ շարականները: «Հանգամանքից օգտվելով, — կրսն Շահազիզ, — մենք էմինին խնդրեցինք թարգմանել նաեւ նա-

րեկը: Նա պատասխանեց, որ դրա համար ինքը արդեն շատ ծեր է. «Բայց և այնպէս, — ավելացրեց նա, — կփորձեմ»: Անցավ մի շաբաթ և նա բերեց ու կարդաց մեզ առաջին, Բանի թարգմանութիւնը:—

«Ձայն հառաչանաց հեծութեան սրտի Ողբոց աղաղակի քեզ վերնեծայեմ, տեսողդ զաղտնեաց»⁵⁵:

Այն ուսումնասիրութեան, զոր Չոպանյան 1895-ին լույս ընծայեց Mercure de France-ի մեջ նարեկացիին մասին՝ կցված էին քանի մը թարգմանութիւններ նարեկին:

Տեղյակ ենք, որ վազգեն կաթողիկոս իր կարգին նարեկին քանի մը հատվածներ վերածած է ուսմաներենի, այն հանդիսութեան առթիւ, որ տեղի ունեցավ Բուքրեշի մեջ 1951-ին, երբ կլրանար մեծ վանականին ծննդան հարաբարմակը:

Ավելի մոտ օրերու պետք է գանք, հանդիպելու համար Ֆրանսացի բանաստեղծի մը՝ Լուկ Անդրե Մարսելի, որ նարեկը ըմբռնած և անկե թարգմանած է բազմաթիւ էջեր, որոնք քեզ կվերացնեն իրենց թարգմանութեան ինչպէս բնագրին մեջ⁵⁶:

Նարեկի Ֆրանսերեն թարգմանութիւնը ամենեն շքեղ ընծաներեն մեկն էր, զոր օտար բանաստեղծ մը կրնար ընել հայ ժողովուրդին:

4. ԱՇԽԱՐՀԱՅԱՐ ՆԱՐԵԿԸ

Ի՞նչ կարիք կար, պիտի բանք, նարեկը վերածելու աշխարհաբարի: Հասկնալի՞ դարձնելու համար մեր ժողովուրդին: Չէ՞ որ տասը դար է զայն կկարդա մեր ժողովուրդը ու զայն կըմբռնէ: Աղոթքի այնքան մատնաներուն մեջ ո՞րն է այնքան սիրելի եղեր իրեն, որքան նարեկը: Ո՞ր գիրքն է, զոր բարձին տակ կպահեն, երբոր քնանա, ուրկն աղոթք կկարդա հիվանդի մը սնարին, և զոր հետը կտանի իր պանդխտութեան մեջ:

Ու հետո, նարեկացին կարենալ թարգմանելու համար, պետք էր հաջողիլ զայն ըմբռնել, անով հափշտակվիլ, անոր բարձրանալ: Ամեն մեկ մահկանացուի տրված չէր թափանցել անոր, իմաստի խորնութիւններուն համար նախ, որոնցմով լի է նարեկը, հետո, զարտուղի ձեւերուն համար, որոնցմով ազուցված է անոր ոճը, և սանձարձակ բաներուն համար, որոնք քեզ կկենցեն ու կշփոթեն ամեն մեկ տողին:

⁵² Ստ. Մալխասյանց, «Գրիգոր նարեկացի», «Եր-մբան», 1947, մայիս—հունիս, էջ 34:

⁵³ Պրոֆ. Մ. Մկրտչեան, «Գրիգոր նարեկացի», էջ 240:

⁵⁴ Ս. Շահազիզ, «Համառոտ տեղեկութիւն հայոց շարականների մասին», «Երմբան», 1948, մարտ—ապրիլ, էջ 27:

⁵⁵ Լուկ Անդրե Մարսել, «Գրիգոր նարեկացի», Փարիզ, 1954, էջ 66 (Ֆրանսերեն):

Եվ վերջապես պետք է շնորհակալ, որ նա-
րեկացիին անմեկնելի է, և հետևաբար ան-
թարգմանելի: Ջայն ըմբռնելու համար պետք
է հոգիի անոր հուզումներուն բանաս, բա-
ռերուն հոգեղեն իմաստը մոռնաւ պահ
մը, ականջդ խցն ամականներու, վերադիր-
ներու քաղցր ազմուկին, լուսամտու բանաս,
որպիսիքի վանքին խորհրդավոր խավարը քիչ
մը մեղմանա, ու թափանցեն հոն թաքնված
դեղեցկութիւններուն: Արեւուն նայելու հա-
մար մարդ նախ աչքերուն բոժանքը պետք
է որ մաքրեն, որովհետեւ, ինչպէս Եզնիկ կը-
ն, ան որ օրնդ ճառագայթս արեգական
հայիլ կամիցի, պարտի դպրոցութիւն ա-
չացն՝ դադան և զբիծն ի բաց պարզել, դի-
մի՝ մթարքն՝ որ դրոք շողայցեն, արգել
հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին:

Այս պայմաններուն մեջ, հանդգնութիւն
էր Քասիմի փորձը նարեկը աշխարհաբարի
թարգմանելու, այն պարզունակ աշխարհա-
բարով, որով ան «Մանգումն»-ի մեջ կշա-
րադրեր իր «Թրվան մտածումներ»-ը կամ
իր թերթն-վանքեր կհորինէր⁵⁶, թե նախա-
ձեռնութիւնը զեղեցիկ էր ինքնին, ինչպէս որ
զեղեցիկ էր Երվանդ Տեր Անդրեասյանի ալ
փորձը, ճիշտ նույն օրերուն, շարականներն
փունջ մը աշխարհաբարի վերածելու:

Քսան և ավելի տարիներ մարդ այլևս
չկրցավ նարեկին դպիլ: Քասիմի թարգմա-
նութիւնը վախցուցեր էր բոլորը: Ոչ ոք
չկրցավ այլևս հանդգնիլ աշխարհաբարի վե-
րածելու վայն, երբ մանավանդ դեռ նոր
սկսել էր բնութագրանալ այդ աշխարհաբա-
րը՝ թարգման կարենալ հանդիսանալու հա-
մար խորհրդավոր այդ գրքին:

Եվ ահա Արմաշը ունեցավ այդ հանդգնու-
թիւնը: Իր երկու նախկին սաներն էին,
Քորդոմ Գուշակյանն ու Գարեգին Տրապի-
զոնցին, որոնք, առանց նույնիսկ իրարմ
լուր ունենալու, ձեռնարկեր էին նարեկը վե-
րածել աշխարհաբարի և լույս կրնծայելին
միեւնոյն տարին:

Քորդոմ իր թարգմանութիւնը ըրած էր
կահիրեի մեջ 1924 հուլիսն նոյեմբը,
բայց 1925-ին է, որ տպագրութիւն հանձ-
նած էր զայն:

Գարեգին իր թարգմանութիւնը սկսած էր
Տրապիզոնի մեջ 1921 հոկտեմբերին, Վերը
ազատ պահերու հոգեպարար աշխատանք,
և լրացուցած էր 1922 նոյեմբերին, բայց

լույս ընծայած հազիվ շորս տարի հետո,
1926-ին:

Անշուշտ որ նարեկի երկու թարգմանիչ-
ները ավելի բախտավոր պիտի ըլլային:
Նարեկը թարգմանելն առաջ կրցած էին նա-
րեկացին ըմբռնել ու իրենց աշխարհաբար
օժտել զրական շնորհով: Իրենց միտքը շար-
շարելու ճիգը պետք էր, և զայն ունեցան:

Գարեգին պատրիարք թարգմանութիւն
մը չէ որ կուտա մեզի: Ան մեղի կուտա
զրական երկ մը: Գրաբարե աշխարհաբա-
րի պարզ վերածում մը չէ անոր թարգմանու-
թիւնը, այլ ստեղծագործութիւն մը ինքնին:
Իր թարգմանութիւնը ձեռնելու առթիւ իր
վարպետին՝ Գուշակին, Գարեգին Տրապի-
զոնցի կգրե. «Սրտի խորերն Աստուծո հետ
խոսող անարատ ոգին ես փափագեցա և
փորձեցի պատկերացնել լեզվով մը՝ որ մեր
ժամանակինն ըլլա և որ, սակայն, չգտեհ-
կացն և չեղծե բոլորովին այդ ոգուն յուրա-
հատուկ ու անփոխարինելի տարազն ու գե-
ղեցկութիւնները: Հաջողեցա՞ւ... — չեմ գիտեր:
Գիտեմ միայն, թե Աստուծո հետ այս երկ-
նաբարբառ խոսակցութիւնը վերածելով
մարդոց հետ աշխարհաբար խոսակցութիւն՝
կկատարեմ որդիական պարտականութիւն
մը Քեզ հանդեպ և հոգեւորականի պարտ-
մը այն մարդկութեան հանդեպ՝ որ կտառա-
պի և սակայն չի գիտեր աղոթել, որ կաղո-
թէ՝ բայց չի գիտեր վերանալ, որ կվերանա՝
բայց չի գիտեր աննյութականանալ ու բնիկ-
լուզվիլ աստվածացնող էութեան մը լուսա-
ծին ծոցին մեջ»⁵⁷:

Հետո կըսե համեստութեամբ մը, զոր քո-
լորս պետք է ունենանք, երբ կփորձենք
ձգտիլ անհնարինին. «Ընթերցողը ակնա-
տես պիլի ըլլա, այս հաջորդական վերլու-
ծում խորհրդածութիւններու ընթացքին, այն
բոլոր հրաշալի շարժապատկերներուն, ո-
րոնցմով նարեկացու անստգլուտ ոգին, ի
դեմս մարդկութեան տիեզերական ոգուն,
կցուցադրվի մեր աչքին առջև:

Աստվածախոսիկ շնորհը չունենալով՝ ու-
ղեցի մարդկութեան խոսիլ ու թարգմանել
աստվածախոս վարդապետին հոգեշունչ ու
սրտաբուխ ողբերգութիւնները:

Երանի՜ թե հաջողին լուսակրոն վանակա-
նին աստվածային խաղերուն տալ մարդկա-
յին համապատասխան հունչեր, այն տաք
շունչով՝ որով ան թրթռացուցեր է իր անզու-
գական քնարին ոսկելարները⁵⁸:

⁵⁶ «Աշխարհաբար նարեկ, նարեկա վանքի վանա-
կաններն Ս. Գրիգոր վարդապետի աղոթագիրքը», գրա-
բար բնագրեն թարգմանեց Միսոմ Ա. Մ. Գուշակյան
(Քասիմ), Կ. Պոլիս, 1902:

⁵⁷ Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, «Նարեկ, ող-
բերգութիւն Գրիգոր նարեկացիի», Կ. Պոլիս, 1926,
էջ ԺԸ:

⁵⁸ Անդ, էջ ԺԹ:

Հսկեք այս առթիվ, որ Գարեգին Տրապի-
զունցին ունի նաև Նարեկի տաղաչափյալ վե-
րածույթը աշխարհաբարի Այդ աշխատանքը
անտիպ կամա դեռ, ու անկե քանի մը
հատվածներ միայն լույս ընծայած է ան
որքան գիտենք: Այնպես որ լրիվ գաղափար
մը լուսինք աշխատութեան ամբողջութեան
մասին: Բայց շեք կարծեր, որ ճիշդ, զոր
մարդ ստիպված է ընել տաղաչափած տա-
լու համար Նարեկը, կարենա հարազատ
մնալ բնագրին, այնպես ինչպես արձակի
վերածած ատեն:

Գարեգին պատրիարքեն հետո ալ փորձեր
եղան Նարեկը աշխարհաբարի վերածելու:
Պատահամա՞ր անդիպեցանք թաղմա-
վեպս-ին մեջ նման փորձի մը, Հ. Մեսրոպ
Ճանաչյան, որ այդ փորձը կրեն, Միսր-
յանց այն հաղվադեպ քացառութիւններն
է, որոնք ձեռն իս մտահոգութիւնն ունին
իրենց գրութեանց մեջ. ան գրադեռ մըն է,
ինչպես ցույց կուտան իր արձակ ու ոտանա-
վոր էջերը, զորս կրցած ենք տեսնել:

Գարեգին Տրապիզունցին կրնա հպարտ
ըլլալ, որ իր պարտքը հատուց:

5. ՓԱԿԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Ու հիմա, որ այս էջերը կ'սկսեն, ինքզին-
քը որքա՞ն երախտապարտ կ'զգա այս տողե-
րը դրողը Նարեկի թարգմանչին, որ իրեն
առիթը տված վերապրելու հին օրերը: Ան
իր միտքը բերավ նախ իր այցը Արմաշ ասա-
սը նորընծաներու տարին: Հափազանց փո-
քըր էր, որպեսզի կարենար հիշել այդ տասը
նորընծաները այն օրերու իրենց կերպարան-
քին մեջ, և այդ տասնին մեջ միտքը բերեր և
զայն. կ'հիշե սակայն, իբրև թե այսօր ըլլար,
ոգնորութիւնը, գոր կապրեր Արմաշ ուխտի
այդ օրը, ու ահավոր այն ժխորը ժամուն մեջ,
երբ Զարիստիանը կ'սահմանէր խորանին վրա՝
հազար ցավերու աղաղակներն, որոնք
կուղղվեին իրեն գիշերվան այդ մոռալ պա-
հուն, ամեն մեկը բժշկութիւն աղերսելով իր
ցավին համար:

Երախտապարտ է անոր, որ առիթը տված
իրեն, որպեսզի պահ մը մանկանա հոգին,
միտքը դա նաև այն շեն քաղաքը, ուր աչքե-
րը բացած է, Ատափաղարը, իր շենչող հայ
մարդցամով, որոնք երբեմն կային և հիմա
չկան, ու թեկնոցէ-ի իրիկունները, երբ

50 Ինչպես հիշեցինք (տե՛ս ժանթ. 12), լենք տե-
սեր Միլեթի ինտելեկտի տաղաչափ, ուր թարգմա-
նութիւնը արեւելահայ լեզվով, լույս տեսած նրան,
1960 թվականին:

ատափաղարցին եկեղեցի կ'վազեր «Որդի
Աստուծոյ»-ն շկորսնցնելու:

Ան իր միտքը բերավ և թեկնոցէ-ները.
զորս ատափաղարցին իր տունն ալ կրնէր
շարաթ իրիկունները, երբ տնեցիներն ամեն
մեկը աշխատով խոստովանիմա-նն տուն մը
կըսէր փոխնիփոխ. ու հետո, վերացած տե-
սակ մը հափաղաղութեան մեջ, Նարեկը կո-
գին մեկ բերան. «Որդի Աստուծոյ կենդա-
նույ, օրհնեալ ամենայնի...»:

Ան հիշեցուց իրեն և այն մյուս թեկնո-
ցէ-ն...

Շատ փոքր էի ես, գրեթե մանուկ. բայց
այնպէ՛ս կ'հիշեմ այն քանի մը դարհուրելի
գիշերները, զորս մենք ապրեցանք...

Գնացին տարին էր. սարսափը Կոստանդ-
նուպոլսն եկած էր գաղաղ. ու ամեն տուն
գիշերը դողով կանցներ, հանութեանը շուտ
կ'զոյլեին, ու ամեն մարդ կ'աճապարէր տուն
հասնիլ մութը չկոխած:

Եվ ահա իրիկուն մը կ'տեսնեմ, որ ամեն
մարդ եկեղեցի կ'վազէ, Փսփսուքով իրարու
կըսեն. թե հսկում կա ժամը, թե Կոստանդ-
նուպոլսո մեջ շարդ է պատահեր, և առաջ-
նորդեն լուր է եկեր, որ քանի մը գիշեր
թեկնոցէ-ընեն ժամուն մեջ:

Մեծ ու պզտիկ եկեղեցի կ'վազեն, Մենք,
պզտիկներս ալ, մեծերուն հետ կ'ապրէինք
ներս: Ժամերգութիւնը սկսած է, բայց այն-
քան կ'ամաց կ'աղոթեն, որ ոչինչ չես լսեր պահ
մը, եվ ահա հանկարծ միահամուռ ողբ մը
կ'սկսի մութին մեջ. ծունկի են բոլորը, և ամե-
նուն ձայնին մեջ կ'զգաս, որ զսպած հեկե-
կանք մը կա. «Ընկալ քաղցրութեամբ, Տէր
Աստուած հօր...»:

Ահ, պիտի չմոռնամ ես այդ գիշերը, ոչ
սարսուռը, զոր կ'պատուներ ողբը մութին
մեջ, ոչ ալ լուսութիւնը, զոր ամեն մարդ հե-
տը տուն կ'տանէր գերագույն սփոփանքի մը
պես:

Տարիները անցան, և անոնց հետ հազար
փոթորիկ ու հազար աղետ. և անոնք շատ
րան խլեցին տարին մեղմեմ, մեր ունեցածն
ու մեր սորվածն: Բայց անոնք երբեք
չկրցան մոռցնել տալ հայ ժողովուրդին իր
Նարեկը: Ան իր քարէի գիրքը մնաց միշտ,
որովհետեւ հոն գրված են իր խոսքն ու հու-
զումները, իր ճիշն ու զայրույթը, հոգեկան
խաղաղութիւնն ու սփոփանքը:

Նարեկով հայ ժողովուրդը իր ցավը մոռ-
ցա՛մ, կրկին փարեցավ կյանքին, ու հրաշք
սպասեց...

Հայ ժողովուրդը Նարեկով է, որ կրնա
հպարտ նայիլ դարերուն:

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻՐԳԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արարատյան քեմի)

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ Ս. ՀՈՒՓՍԻՄԵՒ, Ս. ԳԱՅԱՆԵՒ ԵՎ Ս. ՀՈՂԱԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ԱՅԳ ՎԱՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Գ. Ս. ՀՈՂԱԿԱՅԻ ՎԱՆՔ

Ս. Շողակաթի վանքը գտնվում է Վաղարշապատի հյուսիս-արևելյան կողմում, Այս վանքի նախնական վկայարանը, ըստ Ազատագրողների, կառուցվել է Ս. Մարիանե կույսի նահատակության վայրում, Վաղարշապատի արքունական հնձանում. «ի հնձանն է մէջ այգւոյն, ուր էին նոցա վանքն»⁸⁰։

Շողակաթի վանքի այժմյան վկայարանը ըստ շինվում է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլների համաձայն, Հոփսիմյանց և Գայանյանց ղույսերի վկայարանների հետ. «Եւ արդ, հկայք շինեսցուք զվկայարանս, փոխելովոյսն ի հանգիստ... Եւ կանգնեալ երիս վկայարանս, մին ի հիւսիսոյ յարեւելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանաւանն Հոփսիմէ երեսուն և երեք ընկերօք։ Եւ զմիւսն շինեցին ի հարաւակողմ կուսէ մետի, ուր վկայեաց Գայիանէ նորուն սնուիլն երկու ընկերօքն։ Եւ զմիւսն ևս մօտ ի հնձանն ի մէջ այգւոյն, ուր էին նոցա վանքն, շինեցին կազմեցին զտեղիսն, և զարարեցին ոսկի և արծաթի կանթեղամբ ունելովք, և լապտերօք վառելովք և աշտակօք բորբոքելովք»⁸¹։

Սակեի ուշ, աղօթքի այս տունը կոչվում է նաև Շողակաթ. «Քանզի ի նմա շող աստուածնդ էն ի Հօրէ լուսոյ ծագեաց»⁸²։

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի № 8-ից և Գ-ից։

⁸⁰ Ազատագրողներ, էջ 441։

⁸¹ Նույն տեղում։

⁸² «Էջմիածին», 1961 թ, հունվար, էջ 2, Վհակապաշտարարների կոնգրակից։

Ս. Շողակաթի վանքը կոչվել է նաև Մարիանե կույսի վանք, Շահաթունյանցը այդ մասին գրում է. «Մարիանէ անուն լինել սրբորոյ կուսին թէպէտ լուծիմք տեղեկութիւն ինչ ի գրոց, զի տկար՝ այն է հիւանդ և եթ գրեն հեղինակք պատմութեանց, այլ անհղութիւն քնակչաց կողմանցս հասեալ առ մեզ՝ ստուգէ լինել նոյն, որպէս և անուն միոյն ի սրբութեանցն՝ որ ի մէջ վերի այգի կոչեցելոյն նահատակեալ կույի (Թումիան) և այժմ»⁸³։

Այսօր էլ Ս. Շողակաթի եկեղեցու հարավային կողմում գտնվում է նահատակ կույսի վան-տապանը։

Մեր մատենագրության մեջ մինչև ժի դար շունենք առ այժմ որևէ հիշատակություն այս վանքի մասին։

Քնական է, որ Ս. Շողակաթի վանքն էլ դարերի ընթացքում ենթարկվել է մի քանի ավերածությունների։ 1694 թվականին էլ, որ նահապետ Ուհայանցի կաթողիկոսը, քանդելով հին վկայարանը, շինում է եկեղեցին։

Հովհաննես Եպիսկոպոս Շահաթունյանցը և Հ. Ղ. Ալիշանը վկայում են. «Յայս տեղի նահատակութեան սրբոյ կուսին (Մարիանեի—Վ. Վ. Տ.) ի սկզբան անդ ընդ երկուց եկեղեցեացն Հոփսիմեալ և Գայիանեալ ետ կառուցանել Սուրբն Գրիգոր զվկայարան յանուն նորա՝ յամի 301, որպէս ասացաւ. այլ զկնի այնր մինչև ցամ Տեառն 1694, թէ ոյթ ոմանք ձեռնարկեալ նորոգեալ իցեն զայս եկեղեցի որպէս զմիւս երկուսն, լուծիմք ինչ ծանօթութիւն. և զի լուծի ինչ մնացուած յա-

⁸³ Շահաթունյանց, Ա, էջ 281։

աաջին շինութեանց անտէր, զի թերեւ յարձա-
նագրութեանցն լինէր տեղեկութիւն ըստ
միւսոցն. այլ գլխովին նորոգ կառուցեալ է
տաճարն ի հիմանց ի ժամանակս Նահապետ
կաթողիկոսի Ուռայեցոյ՝ արդեամբք Աղա-
մալ իշխանին Շոթթեցոյ յամի 1694, ի
սրբատաշ բարանց բարեկարմար ձեակեր-
պութեամբ, միջակ դրութեամբ, և է փոքր
քան զմիւս եկեղեցիսն և անսին. ունի և
կաթողիկէ ի միջավայր տանեացն և գաւթ
վայելուլ յորոյ վերայ է և զանգակատուն

Հազար և հարիւր քառասներեքի,
ի հայրապետութեան՝ Սուրբ Էջմիածնի.
Տեառն Նահապետի՝ հօր սրբազանի,
Արդեամբք Աղամալ՝ բարեպաշտօնի,
Գոյով քաղաքէն՝ Նախիջևանի.
Շինեաց յիշատակ՝ փրկեալ զիւր հոգին,
Հօրն Աղաշանին, մօրն Նանակուլին,
Նաև կողակցին իւր Մարիամին,
Եւ որդւոց իւրոց՝ Ալեքեղիոսին,
Ազաթանգեղոսին, Աղէքսանդրոսին,
Եւ Խարիսիմոս փոքր եղբայր սոցին,



Ս. ՇՈՐԱԿԱՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

փոքրիկ. ունէր և կրկին գաւթ վիմակերտ
ըստ տաճարին, այլ այն անկեալ տապալե-
ցաւ ինքնին յամի Տեառն 1807⁸¹,

Ս. Շողակաթի եկեղեցու կառուցման մա-
սին արեւմտյան դռան վրա կա մինչև այսօր
անաղարտ մնացած հետեւյալ արձանագրու-
թիւնը.

«Շնորհօքն Աստուծոյ՝ Որդւոյն Միածնի,
Շողակաթ անուամբ՝ տաճարս կանգնի,
ի թուականիս՝ մեր հայկականի,

Գստերաց իւրոց՝ նոյեմզարային,
Այլ և զԱսանէթ և Նանակուլին,
Որք զմեզ յիշեն՝ առ Տէր ի բարին,
Արժանի լիցին՝ տեսութեան նորինս:

Նահապետ կաթողիկոսի օրով, եկեղեցու
շինութեան հետ միաժամանակ, կառուցվում
են նաև քարաշեն միաբանական-վանական
մի քանի սենյակներու Հաջորդ տարիներին
կառուցվում են նաև փայտաշեն և հողաշեն
սենյակներու Ապա կառուցվում են վանքի
շուրջի պարիսպը և բուրգերը, Հյուսիս-արե-
ւմտյան մուտքի առաջ, արտաքին պարսպի

⁸¹ ուլն տեղում, էջ 382—383.— Է. Ղ. Ալիքան,
«Այրարատ», էջ 285.

մոտ կանգնեցվում է նաև մի գեղեցիկ խաչ-
քար, եկեղեցու շինություն ժամանակի փոքր
արձանագրությամբ։ Մինչև Ղուկաս Կարեն-
ցի կաթողիկոսի օրերը (1780—1799) այդ
խաչքարի առաջ դնում էին գրակալ և Ավե-
տարան՝ «յերկրպագութիւն և ի համարու-
թիւնն»։

Տ. Նահապետ Ա Նղեսացու (1691—1705
թ. թ.), Տիր Աբրահամ Գ Կրետացու (1734—
1737 թ. թ.) շիրիմների տեղը Ս. Շողակաթի
վանքում.— Վերջերս Ս. Շողակաթի վանքում
վատարված վերանորոգության ժամանակ,
գավթի հարավային և հյուսիսային կողմե-
րում երևան եկան այլ երկու շիրիմներ, ա-
ռուտաց տապանագրությամբ։

Ս. Շողակաթի վանքի գավթում թաղված
և՛ Նահապետ Ա Նղեսացու և Աբրահամ Գ
Կրետացի կաթողիկոսները։

Շահաթունյանցը և Հ. Ղ. Ալիշանը, ինչ-
պես նաև Օրմանյանը, սակայն, միաձայն
դիմումում են, որ Ս. Շողակաթ վանքի գավ-
թում եղած երկու գերեզմաններից հյուսիսա-
կիցը՝ Նահապետ Ա կաթողիկոսին է, իսկ
հարավայինը՝ Աբրահամ Գ Կրետացուն։

Նահապետ Նղեսացու, ձեռնասուրն աշա-
պկերտ՝ նդիագարու կաթողիկոսի... եկեալ
հաստատեցաւ յԱթոռ Հայրապետութեանն...
Ան կացեալ ի նմին ընդ ամենայն ամս ժԳ, և
ամիսս իրո 10, վախճանեցաւ ի 13 յունիսի և
Պաղեցաւ ի գավթի եկեղեցւոյն Շողակաթ
անուանելոյ ի հիսիսակողմանս⁸⁵։

Հ. Ղ. Ալիշանը հաստատում է նույնը⁸⁷։
Իսկ Օրմանյան սրբազանը գրում է. «Շողա-
կաթ եկեղեցին և վանատունը բոլոր հարա-
կիցներով՝ Աղամալ Շոռոթեցի իշխանին
ձախքով շինվեցավ, իսկ մահվան պարագա-
սերն ալ հիշատակված չենք գտներ, միայն
գերեզմանը հայտնի է յուրաշն վանքին,
Շողակաթի բակին մեջ»⁸⁸։

Ս. Շողակաթի վանքի բակում թաղված
Նահապետ կաթողիկոսի շիրիմը ժամանա-
կին ունեցել է հետևյալ տապանագրու-
թյունը.

ԱՅՈՒ Է ՏԱՊԱՆ, ԴԱՄՐԱՐԱՆԻ
ՏԻՒՈՒՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ,
ՈՒՆ ԱՄԱՊԵՏ ԱՆՈՒԱՄՐ ԿՈՅԻ,
ՈՐ Է ՏՆՆԵԱԼ ՈՒՐՀԱՅԵՑԻ,
Ի ԹՈՒՆՆ ՌՃԳՊ (յամի 1705)⁸⁹։

Ս. Շողակաթի վանքի գավթում թաղված
նաև Աբրահամ Գ Կրետացին։

Մեր մատենագրության մեջ հայտնի է Կրե-
տացու «Պատմութիւն անցիցն իւրոց և Նա-
տիր շահին պարսից» (Վաղարշապատ,
1870 թ.) աշխատությունը, որը արևելագետ-
ների կողմից համարվում է կրեթո աղբյուր
կովկասագիտության և մասնավորապես
Նադիր շահի գործունեության վերաբերյալ
Այս հանգամանքը ընդունում են սովետա-
կան արևելագետները⁹⁰։

Աբրահամ կաթողիկոսը վախճանվում է
1737 թվականի ապրիլի 18-ին և թաղվում
թի գավթի տաճարին Շողակաթ անուանելոյ
ձախակողման նորան⁹¹։

Մեզ չհաղորդեց գտնել Աբրահամ Կրետա-
ցու տապանագրությունը Շահաթունյանցը,
որը 1840-ական թվականներին հավաքել և
գրի է առել Ս. Հռիփսիմյանը, Պ. Գալանյանի
և Ս. Շողակաթի վանքերում թաղված շատ կա-
թողիկոսների տապանագրություններ, վկա-
յում է, որ «Աստ ամփոփեցաւ և մարմին
Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ ի հա-
րաւակողման ի թուին Հայոց ՌՃԶԵ, յամի
1736 (երկի վրիպակ է. պետք է լինի 1737—
Վ. Վ. Տ.), այլ մարմարոնեայ վէճ բարձեալ
գոյով անտի, ընդ նմա անհետացեալ է և
մակագրութիւն նորան»⁹²։

Հ. Ղ. Ալիշանը ևս վկայում է նույնը, կրք-
նելով Շահաթունյանցի սխալը. «Անդ թա-
ղեալ և Աբրահամ Գ յամի 1736. րայց տա-
պանաքարն բարձեալ է»⁹³։

Օրմանյան սրբազանը, որպես Աբրահամ
Կրետացու մահվան թվական, ընդունում է
1737. «Պետք կըլլա ըսել, թե ձեռնադրու ու-
ղևորութեամբ Թավրիզէ դառնալովը՝ բոլորո-
վին տկարացավ, և խոտազին անցուց ձմեռը.
և դարնան քացվելուն, 1737 ապրիլի 18-ին,
նոր կիրակիի երկուշաբթին, վախճանեցավ,
ու թաղվեցավ Ս. Շողակաթի գավթին ձա-
խակողման»⁹⁴։

Ս. Շողակաթի վանքում կատարված վն-
ասնորոգություններ Տ. Տ. Վազգեն Ա Կա-
թողիկոսի օրով.— 1694 թվականին Ս. Շո-
ղակաթի եկեղեցու շինությունից հետո, ա-
ռաջին անգամն էր, որ Տ. Վազգեն Ա վեհա-
փառ կաթողիկոսի օրով վերանորոգվեց Ս.
Շողակաթի վանքը։

1959 թվականին Ս. Շողակաթի վանքում
սկսվեցին շինարարական աշխատանքները.
նվիրատվությամբ հալսպարեակ բարերար
պր. Սուրեն Գալստեանյանի։

⁹⁰ М. Р. Арунова, К. Э. Ашрафян, «Государ-
ство Надир-Шаха Афшара», Москва, 1958 г.,
стр. 21:

⁹¹ Շահաթունյանց, Ա, էջ 227.

⁹² Նույն տեղում, էջ 285.

⁹³ Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 236.

⁹⁴ Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2912.

⁸⁵ Շահաթունյանց, Ա, էջ 283—284.

⁸⁶ Նույն տեղում, էջ 223—224.

⁸⁷ Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 236.

⁸⁸ Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2663 և 2731.

⁸⁹ Շահաթունյանց, Ա, էջ 285.— Հ. Ղ. Ալիշան,
«Այրարատ», էջ 236.

Վեհափառ Հայրապետի գլխավորած Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը ծրագրել էր վանքը վերանաորոգել, եկեղեցու Ս. Սեղանը ամբողջությամբ քանդել և հայկական ոճով այն վերակառուցել։ 1959—1960 թվականներին Ս. Շողակաթի վանքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պարսպապատվել է վանքի հողամասը 2,70—3,00 մ. բարձրությամբ և 330 մ. երկարությամբ, որից 120 մետրը փողոցների երկայնքով մետաղյա ճաղերով։ Պարսպապատումը կատարվել է Արթիկ տուֆի վարդագույն սրբատաշ քարերով։

2. Սալահատակվել է Ս. Շողակաթի եկեղեցու շուրջը մոտ 300 քառակուսի մ. տարածությամբ։ Սալահատակումը կատարվել է լավածո տուֆ քարի սալերից։

3. Սալահատակվել է եկեղեցու ներսը 120 քառակուսի մ. տարածությամբ։

4. Հնի փոխարեն կառուցվել է նոր Ս. Սեղանը ֆիլիդիտ քարից, ճարտարապետ Արծրունի Գալիկյանի նախագծով։

5. Հիմնական վերանորոգման է ենթարկվել եկեղեցու տանիքը քարե մեծ սալերով։

6. Եկեղեցու ներսի թաղերի ոչ երեսպատված մակերեսները ծեփվել են գունավոր, շրջապատի երեսպատված քարերի նմանությամբ, 95 քառակուսի մետր։

7. Բարեկարգվել և կանաչապատվել է եկեղեցու շրջակայքը։

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Ս. Շողակաթի վանքի բարերար Ս. Գալենտերյանի նվիրատվությունը, 1958 թվականին պարգևատրեց նրան Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանով։

1960 թվականի հոկտեմբերի 15-ին, շաբաթ օր, Վեհափառ Հայրապետը օժեց Ս. Շողակաթի եկեղեցու նորակառույց Ս. Սեղանը։ Այդ սրբազան արարողության ներկա լինելու բախտավորությունն ունեցան Ս. Շողակաթի բարերարներ տեր և տիկին Սուրեն և Շաքի Գալենտերյանները։ Հոկտեմբերի 16-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը, վերանորոգված և վերակառուցված Ս. Շողակաթի վանքի նորօծ Ս. Սեղանի վրա, մատուցեց առաջին սուրբ պատարագը։

Վեհափառ Հայրապետը, 1960 թվականի դեկտեմբերի 1-ին, տալիս է իր սրբատառ կոնդակը տեր և տիկին Սուրեն և Շաքի Գալենտերյանների բարերարությամբ Ս. Շողակաթի եկեղեցու վերանորոգության առթիվ, որտեղ շինարար Հայրապետը շնորհում է. «Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող անոնցմե միշտ լույս և երկնային շնորհներ տալովին ճայոց աշխարհին և մեր ճապատավոր ազգի բոլոր զավակներուն վրա։ Ամեն»⁸⁶։

⁸⁶ «Էյմիածին», 1961 թ., հունվար, № 1, էջ 3—4։





Մ. ԵՎ Ն. ԹԻԽՐՐԻ

ԱՆԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆՇԻՍՐԻ ՄԵՌՑԱԼ ՔԱՂԱՔԸ*



արսից հիսուն կիրժետր դեպի արևելք է գտնվում Անին, որո խոպան սարահարթերի վրա լքված մեռյալ մի քաղաք է այսօր, նա փռված է ասպանդակաձև ժայռոտ մի տարածության վրա, երկու խոր կիրճերից հոսող գետերի արանքում, որոնցից մեկը՝ Արփայայի կիրճը...

Միջին դարում Անին կարևոր մի հանգույց էր, մի կողմից՝ իրար դեմ մարտնչող երկու աշխարհների՝ մահմեդական Արևելքի և քրիստոնյա Արևմուտքի, իսկ մյուս կողմից՝ Կենտրոնական Ասիայից ծայր առնող արշավանքների ճանապարհի վրա, Դեռևս հնագույն ժամանակներից հսկայական մի քառաձայռի վրա կառուցված է եղել մի ամրոց, իսկ հետագայում քաղաքն աստիճանաբար ընդարձակվել է սարահարթի ուղղությամբ և այն պաշտպանելու համար այդ կողմից՝ անհրաժեշտ է եղել կառուցել երկու կիրճերն իրար կապող մի երկար պարսպազուտի:

Խաղաղ ժամանակաշրջանում Անին հանդիսանում էր վաճառաշահ կարևոր մի քաղաք, տրանզիտային վայր և իջևանատեղ Պարսկաստանից կամ Հնդկաստանից եկող այն քարավանների համար, որոնք հենց այդ նպատակով կառուցված գետային կամուրջների վրայից անցնելով՝ ուղղվում էին դեպի Անատոլիա և Տրապիզոն:

* Մ. և Ն. Թիքրի ֆրանսիացի ծանոթ ճարտարագետները վերցնել են Անիում և իրենց տպագրությունները հրատարակել Փարիզի «JARDIN DES ARTS» ամսագրի 1960 թվականի մարտի համարում պատկերազարդ մի հոդվածով, որից քաղվածքար տալիս ենք սույն թարգմանությունը, պատմական հուշարձանների այժմյան վիճակը ներկայացնող մի շարք լուսանկարներով, ԽՄԲ:

... Այցելելով փլատակների այս ընդարձակ դաշտը՝ մարդ պատկերացնում է. թե պատմական ինչպիսի ահավոր վերիվայրումների թափերավայր պետք է եղած լինի Անի քաղաքը: Հոյակապ պատմեղները, դեռևս կանգուն մնացած թ—ժԳ դարերի այն մի քանի գեղակերտ հուշարձանները խոսում են մի քաղաքի անցյալ փառքի մասին, որը 962 թվականից մինչև 1044 թվականը եղել է հայկական թագավորության մայրաքաղաքը և որը մինչև ժԳ դարը շարունակել է մնալ առևտրական կարևորագույն մի կենտրոն: ...ԺԶ դարից սկսած՝ Անին փաստորեն ամայացված էր. պատերազմներն ու անվերջանալի ներխուժումները, որոնք պարբերաբար ավերում էին քաղաքը և քայքայում նրա առևտրական կյանքը, վերջապես թուրքերի կողմից կոստանդնուպոլսի և Տրապիզոնի գրավումը, որով վերջնականապես փակվում էին նրա վաճառահանման գլխավոր գոները, ոչնչացրին քաղաքի ամրոցը հարստությունը և բնակեցին նրա բնակիչների անկուտրում համառությունը: Մայր եկեղեցու վրա մնում է 1486 թվականը կրող մի արձանագրություն՝ քաղաքային աշխույժ կյանքի որպես վերջին վկայություն: Հետագայում նրա գոյությունն իսկ մոռացության տրվեց, միայն թուրք և արաբ մի քանի պատահական ճանապարհորդներ հայտնում էին, թե այդ մեռյալ քաղաքի ավերակները դարձել են հովիվների ապաստարան:


ԺԹ դարում էր միայն, որ պատմաբանները վերստին հայտնաբերեցին այն և ի դարի սկզբում հնագետ Ն. Մառը ձեռնարկեց մեծ լափսերով պեղումների, որոնց շնորհիվ

հնարավոր եղավ պատկերացնել այդ քաղաքի ծաղկուն անցյալը:

Այսօր, ի սփյուռս աշխարհի ցրված հայերի համար Անիի մեում է որպես կախարհական զորություն ունեցող մի բառ, առասպելական ժամանակների խորքը նետված ոսկեդարի որպես մի խորհրդանշան:

Եվ իրոք, քաղաքի տեսքը կենդանի վկայությունն է մեր բոլոր պատկերացումներին: Միջնադարյան քաղաքի ամենաշքեղ տեսարաններից մեկի առջև գտնվելու տպավորությունն է ունենում մարդ՝ դիտելով ավելի քան մեկ կիլոմետր երկարությամբ ունեցող այն հսկայական պատնեշը, որը սարահարթը

նու՛նետև պատնեշները բաղմիցս վերանորոգվել են. քարերի վրա կարդացվող զանազան արձանագրություններ ճշտում են տարրեր վերակառուցումների մոտավոր թվականները: Այսպես, 1218—1219 թվականներից մեղ հասնում են երկու բուրգեր՝ զարդարված ցուլի գլուխ ունեցող և դեմ առ դեմ կռվող վիշապներով, որոնք ուրարտական վաղեմի խորհրդանշանների մնացորդներ են, Քիչ ժամանակ անց, քաղաքի արվարձանները դուրս են եկել այդ պարսպագծից. համարյա ամբողջապես ավերված շուվի եկեղեցին դրա միակ վկայությունն է:



ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՆ

կտրելով իրար է միացնում երկու կիրճերը: Կարսի ճանապարհն ուղիղ գծով իջնում է այստեղ, այնպես որ ճանապարհորդը իր տրամադրության տակ երկար ժամանակ է ունենում դիտելու քաղաքի ամբողջական պատկերը և դրանից առանձնացնելու զույգ պարսպագոտին, քառակուսի կամ բոլորածև բուրգերը և քաղաքի ամրակուռ դարբասները:

Այս հույակապ պատնեշները կառուցվել են Սմբատ Ա թագավորի (977—989) կողմից, այն ժամանակ, երբ Անին, մայրաքաղաք դառնալով, արագորեն ընդարձակվեց սկզբնական պատերից և բերդից դուրս: Այ-

դարրասներից ներս մտնելուց հետո, ավելի քան երեք կիլոմետր երկարությամբ տարածվում է Անիի հուանկյունածև սարահարթը, որը ծածկված է չոր ու ջարդուտվող ղեղնավուն բարձր խոտով և որի առաջամասում գտնվող ամրոցի հսկա քարածալուր կարծես նրա սահմանն է կազմում: Փլատակները ցրիվ են եկել այս հարթավայրում, որի վրայով մարդ դժվարությամբ է առաջ գնում, որովհետև մանրափշերն ու տատասկները խանգարում են հանգիստ քայլել և իրենց տակ թաքցնում են քաղաքի հիմքերը:

Անիի անցյալ փառքի յուրաքանչյուր դարաշրջանից մնում են միայն մի քանի հուշարձաններ: Քաղաքի ամենահին մասում, միջնաբերդի վրա, ամրոցի եկեղեցին պահպանել է իր թեկնածու մեկի մի մասը միայն, որը շորս կողմից փողոց բամինների ձևերին խաղալիք է դարձել: Այստեղ դեռևս մեր հիացմունքն են շարժում է և Ը դարերից

նում կաթողիկե Մայր եկեղեցին՝ բաղադրված և հրաբխային որձաքարե մի ամրակուռ կառույց, ուղղանկյունաձև հսկա մի զանգված, որի ուրվագիծը, դժբախտաբար, ծանրանիստ տեսք է բնորոշել դմբեթի անկման պատճառով: Բայց բարձր ու ոգորկ պատերը, որոնք զարդարված են բարակ որմասյունների վրա հենվող փոքրիկ անսեթեթի



Ս. ԳԻՅՈՐ ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ ԵԿԵՂԵՍԻՆ

մնացած երեք ղեղեղիկ խոյակներ. դրանցից մեկը հելլինիստական ոճով քանդակված որթատունկի մի զարդանկար է, որտեղ նկատվում են պարող մի քանի անձեր. մեկ ուրիշը մի կոշտ հարթաքանդակ է, որտեղ երևում է մի արծիվ՝ նստած վիրավորված մի եղնիկի վրա:

Սարահարթի կենտրոնում վեր է խոյա-

կամարաշարքերով և որոնց մեջ բացված են աննկատելի զարդարանքներով պսակված երկարավուն լուսամուտներ և եռանկյունաձև նեղ խորշեր, բացահայտորեն վեր են հանում հայ կառուցողների մտահղացման ընդարձակությունը, ինչ վերաբերում է անփութորեն զետեղված վարդագույն և գորշ քարերի անհամաչափ բազմերանգությունը, ապա



ՏԻՐԱՆ ԶՈՆԵՆՈՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ
ԱՐԵՎՄՍԵՍԱՆ ՃԱԿԱՏԸ

այդ երեք լի խանգարում շինվածքի ամբողջական միասնությունը, Արդյոք դա կառուցողների կամ վերականգնողների անհոգությունն արդյո՞ք է. ի՞նչ նշանակություն ունի, քանի որ կառուցի թողած ճարտարապետական տպավորությունը դրանից լի թուլանում:

Ամենայն հավանականությամբ կառուցված լինելով ավելի փոքր մի հին տաճարի ավերակների վրա՝ նրա շինությունն ավարտվեց 1001 թվականին, և այնուհետև նա վերականգնվեց մի շարք անգամներ. այսպես, 1042 թվականը կրող մի արձանագրություն վկայում է, որ նա վերականգնված է եղել քաղաքի բյուզանդացի կառավարչի կողմից: Այլ արձանագրություններ նշում են դանազան նվիրատուություններ նրա խնամքի ու պահպանման համար: Վերջին նվիրատվությունը կատարվել է 1486 թվականին՝ ներսում կենտրոնական բարձր թևը, նրան կից մյուս երկու նեղ թևերը, որոնք զուրկ են որևէ զարդարանքից, և այն մերկ ու վիթխարի մույթերը, որոնք բարձրանում են մինչև կամարները, արտահայտում են խստաշունչ և մեծավայելուչ մի գեղեցկություն: Հենց այստեղ էր, որ հայ թագավորները թագադրվում էին կաթողիկոսի կողմից, այստեղ էր, որ պատարագ էր մատուցում Հայաստանյայց Եկեղեցու Հայրապետը, որի Աթոռը պահպանվեց Անիում մինչև ԺԲ դարի վերջը, այսինքն Անիի թա-

գավորության կործանումից հետո ավելի քան մեկ դար:

...Անիում, ինչպես և Արենիքի քրիստոնյա ուրիշ շատ մեծ քաղաքներում, ինչպես ավանդությունն է ասում, այս ու այն կողմ ցրված էին «հազար և մեկ» եկեղեցիներ ու մատուռներ: Տեղին է նշել այստեղ, որ ավելի շուտ փոքր հուշարձաններում է, որ արտահայտված է հայ ճարտարապետների ոճի այլազանությունը:

Հայ թագավորների տիրապետության ժամանակաշրջանում եկեղեցիները կառուցվում էին հին ոճով: Բազրատունները, որոնք գալիս էին Կովկասի հարավային լանջերից, ցանկացան իրենց մայրաքաղաքում վերատեղծել իրենց նախնիների գեղեցիկ կառուցումները: Այսպես, Գագիկ Ա-ի (989—1020) կողմից կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին հարազատ պատճենումն է է դարի կենսերին կառուցված հուշակավոր Զվարթնոց տաճարի: Գմբեթը փուլ է եկած, բայց բուրձրաձև հարթակը, սյուները և իրենց վրա հնագույն դարերի կնիքն ունեցող վիթխարի ու բարբարոս խոյակները ճշգրիտ կրկնօրինակներ են:

Ժ դարի հայկական ճարտարապետական արվեստը ընդորոշող մի հուշարձան է Արուղամբնց Ս. Գրիգոր եկեղեցին՝ բազմանկյուն մի փոքրիկ սիրուն կառույց, որի վրա բարձրանում է վեղարաձև սրածայր մի զրմբեթ: Այս եկեղեցին ունի աստղաձև հատակագիծ (արտաքուստ տասներկու անկյունա-



ԺԱ ԴԱՐԻ ՍԿՋՐԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ
Ս. ՓՐԿԻԳ ԵԿԵՂԵՑԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

վոր երեսներ, ներքուստ վեց կիսորուորակ արսիղներ) և թմբուկի վրա բարձրացված մի գմբեթ, Թե՛ ներսի և թե՛ դրսի կողմից պատերը կառուցված են խնամքով իրար ագուցված սրբատաշ որմաքարերով, որոնց միջև լցված է շաղախի մի հաստ շերտ: Երեսի քարերի թափվելու հետևանքով ավերակներն ստացել են խղճալի տեսք՝ երևան բերելով խճաքարերով խառնված կրաղյուսի աճուրի մի կույտ: Եկեղեցու գույսպ դարդարանքները ճարտարապետական գծերին հաղորդում են մեծ արժեք: Վարդյակներով և մանվածո քանդակներով հորինված մուլյուրադարձեր, ողորկ կամ ուրաքանդակ գիսակներ շրջանակի մեջ են առնում լուսամուտների բացվածքները: Վերջապես կոնսաձև կտուրը ծածկված է տեղի գորշ և մանուշակագույն որձաքարից տաշված տափակ քարերով: Եկեղեցու պատերին երևացող արձանագրությունները հայտնում են, որ այն կառուցվել է Պահլավունիների հայտնի սուհմի կողմից որպես նրանց տոհմային պաճարան: Համենայն դեպս ուրիշ ոչինչ չկա, որ մեզ հնարավորություն տար անելու որևէ այլ ենթադրություն, առավել ևս ներսում պատերը մերկ են և արսիղները՝ դատարկ:

Ս. Փրկիչ եկեղեցին, որը հիմնադրված է մեկ դար հետո և գտնվում է սարահարթի մյուս եզրին, բոլորովին այլ տեսք ունի: Այս եկեղեցին նույնպես ունի կենտրոնական հատակագիծ, հիմքը բոլորածն է, սակայն կամարաշարքերով միայն դարդարված նրա արտաքին երեսը լուսի եռանկյունաձև այն բարձր որմախորշերը, որոնք դրսից կոահն տալին ներքնախորշերի և արսիղների բաժանումը: Բացի այդ, փոքրիկ նուրբ կիսասյուներով զարդարված բազմերանգ թմբուկը և գագաթային խոշոր գմբեթը, որը ղրկված է տափակ քարերից կազմված իր կոնուսից, այս եկեղեցուն տալիս է շատ



ՇՈՒՈՄՈՍԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՓՈՔՐ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԶԱՐԴԱՔԱՆԻԱԿՆԵՐՈՒ

ավելի արեելյան տեսք, քան այդ ունեն ավելի վաղ շրջանի հայկական հուշարձանները: Սրա պատմությունն ավելի բարդ է. եկեղեցու կառուցումն սկսվել է 1034—1036 թվականներին Հովհաննես Սմբատ թագավորի պատվերով՝ իսկական հալափայտի մի կտորն այնտեղ պահելու համար (1913 թվին այստեղ գտնվել է ճոխ քանդակներով զարդարված մարմարի մի բեկոր, որը մի մասն է եղել այն հին նշխարատուփի, որի մեջ հավանաբար պահվելիս է եղել այդ թանկագին մասունքը): Եկեղեցին այնուհետև բազմիցս վերանորոգվել է, իսկ նրա գմբեթի կառուցումն ավարտվել է 1342 թվականին:

Մի քանի տարի առաջ այս եկեղեցին ճեղքվել է մեշտեղից, և այսօր այդ պատրվածքը ճարտարապետական ուսումնասիրության համար կարևոր մի նմուշ է հանդիսանում: Կառուցվածքի հավասարակշռությունը խախտված լինելով՝ դեռևս կանգուն մնացած կես մասը շատ շուտով ենթակա է փլվելու, եթե լուրջ միջոցներ ձեռք չառնվեն վերջնական փլուզումը կանխելու համար: Քրիստոնյա Արևելքի բարձրարժեք մի հուշարձան, այսպիսով, դատապարտված կլինի անհետ կորստյան:

Տիգրան Հոնենցի կառուցել տված գեղեցիկ եկեղեցին գտնվում է Արփաշայ իջևող զագիթափի վրա, ոչ հեռու այն կամուրջների մեկից, որոնք Անիի համար դարձան հարստության աղբյուր՝ քարավանների ճանապարհը թեքելով դեպի այս քաղաքը: Սա մի



ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ԴԵՏԱԼ

րին, տուրք էին վճարում նրանց, օգտագործում էին նրանց դրամները, յուրացնում նրանց քաղաքակրթությունը, բայց նրանք պահպանում էին իրենց հավատը, իրենց ավանդությունները, իրենց լեզուն, և հենց սրանք էլ հետագայում օգնեցին հայերին երկար ժամանակ պահելու իրենց ինքնուրույնությունը՝ կատարելով միակ հայրենիքի դերը:

Գովար է հետևալ Անիից՝ առանց այցելելու Հոռոմոսի վանքի այն մի խումբ հուշարձանները, որոնք հանդիսանում են հայ թագավորների Պանթեոնը՝ Այնտեղ գնալու համար պետք է անցնել մի նեղ արահետով, որը Արփաշայի երկայնքով մի քանի կիլոմետրի վրա ձգվում է դեպի հյուսիս:

Իջնելով հաղթանակի հինավուրց մի դարձարի ավերակների վրայից, որի տակով անցյալում արքայական թափոռներն էին անցնում, գնում ու հասնում ես լքված մանվածապատ մի շրջան, որտեղ երևում են Ժգարի երկու փոքրիկ եկեղեցիների մնացորդներ՝ գորշ գույնի երկու սիրուն մատուռներ, որոնք, կարծես, նստած են կանաչ խոտերի վրա՝ ոչ հեռու հանքային ջրի մի աղբյուրից: Երրորդ մի մատուռ, որի մեջ անցյալում գտնվում էր Աշոտ Գ Ողորմածի դամբանը, այսօր ամբողջապես փուլ է եկել:

Ավելի վեր, հսկայական մի քարածալոսի վրա բարձրանում են հուշակավոր Ս. Հովհաննես վանքի կառույցները: Քիչ բան է մեղ հայտնի այս վանքի մասին: Հիմնված լինելով Ժգարի սկզբում Բյուզանդիայից գաղթած հայ քահանաների կողմից, այն հրկիզվեց 982 թվին մահմեդականների ձեռքով, որից հետո շուտով վերակառուցվեց և դարձավ Անիի թագավորների համար Պանթեոն, ինչպես Սեն-Դենիս՝ Ֆրանսիայի թագավորների համար: ԺԱ դարի սկզբի մի արձանագրություն հայտնում է, որ Սմբատ Գ թագավորը ամբողջ մի գյուղի եկամուտները հատկացրել է այդ դամբարանների նորոգության ու պահպանման համար: Այժմ, իհարկե, այս դամբանները չարզված են, բայց դեռ այսօր էլ մենք հիանում ենք նրանց զխիս կանգնեցված հուշակապ տապանաքարերով, Եկեղեցու հարավային կողմին կցված կամարածե մի դահլիճում նշմարում ենք սաղկերի մեջ ընկած շորս արքայական խաչքարեր, որոնց վրա քանդակված հայկական խաչերը իրենց արաբեսկների շղալ գե-

ղեցկությունն են ցուցադրում: Սրանց վերելում պատն ամբողջ ծածկված է երկրապակե քարդանկարներով, խորաքանդակ պտղանկարներով և ծաղկանկարներով: Այնտեղ նկատվում են դեմ-դիմաց շարված նունքի քանդակներ. սրանց մեջ ես վերապրում է Արևելքը, զգացվում է, թե ինչպես Միջագետքի առատությունը երբեմնի խորհրդանշանը այստեղ, խաղողի նման, դարձել է հոգեոր մենդի մի խորհրդանշան: Եկեղեցու գավթում մենք հանդիպում ենք խաղողի քանդակների. վերջինս լինելով իրոք արագ աճող բույս՝ արվեստագետները նրանով են ծածկել գավթի առաստաղի ամբողջ մակերեսը, և այդպես ճիստությամբ ու առատությամբ նրա տարածվել էլ հենց արտահայտում է նրա արևելյան ներշնչման արդյունք լինելը: Մյուս կողմից, կիսահարթ քանդակներով ծածկված առաստաղի այս մակերեսները, որոնք հայացքդ շեղում են ցածրադիր դահլիճի խավարից դեպի սյուրիկներով կառուցված փոքրիկ դանդաղատան պայծառությունը շնորհիվ ճարտարապետական մտահղացման ամբողջ մի սխտեմի, և վարդյակներով ու խաչերով դարդարված արկղածե առաստաղը, որտեղ շողում է այդ լույսը, կարծես, ոգեշնչված են Կենտրոնական Ասիայի և Հնդկաստանի սրբավայրերից:

Այսպիսով, ԺԱ դարից մնացած այս մեծ գավթի կամարների տակ միանգամ ես հիանում ես արևելյան և արևմտյան աշխարհների խաչածեման ճանապարհի վրա գտնվող հայկական քաղաքակրթության զարմանալի բազմատեսակությամբ և մտածում մի ժողովրդի մասին, որի դժբախտ ճակատագիրն է եղել տեղահանությունն ու աքսորը:

Հոռոմոսի Ս. Հովհաննես վանքը երկար ժամանակ գործել է. այդ մասին կա մի արձանագրություն, որը վկայում է, թե տիգրանակերտցի մի վանական՝ մի ոմն Դանիել այն վերանորոգել է տվել Ժգարում: Այդ ժամանակաշրջանում Անին արդեն վաղուց դատարկվել էր, և լեհաստանում, հատկապես Լվով քաղաքում է, որ հանդիպում ենք հայկական մի փոքրիկ գաղութի՝ հիմնված նրա բնակիչների կողմից:

Վերջինս, իր հերթին, վերջնականապես զազարեց գոյություն ունենալուց ԺԸ դարի ընթացքում:

Թարգմանեց՝ Պ. ՇԱՀԱՍՋԱՆ





2. ԵՂԻԱԶԱՐԱՅԱՆ

(Պատմական գիտությունների
բնիկաժողով, հետազոտ.)

ՀԱՂԱՍԵՑ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐԱՆՈՒՄԻ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐԱՆՈՒՄԻ ԶԱՆԴԱՐԱՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՀՈՒՇԱՐԱՅԱՆՆԵՐԸ*

19. Գերեզմանոց. — Զնայած վանքի բա-
կում և առանձին հուշարձաններում՝ գավ-
թում, սրահներում, ժամատանը կատարված
բազմաթիվ թաղումներին, բայց և այնպես
վանքն ունեցել է իր առանձին գերեզմանո-
ցը: Վերջինս գտնվում է վանքից քիչ դեպի
արևելք, դուրանգրին: Այստեղ են տեղի ու-
նեցել նաև դուրանգրի համայնքի ննջեցյալ-
ների թաղումները, որոնք շարունակվում են
մինչև այժմ:

Գերեզմանոցը բռնում է բավական ընդար-
ձակ տարածություն. ամենահին տապանա-
քարերը անմշակ են՝ բնական սալաքարերի
ձևով, մյուս տապանաքարերը մշակված են՝
իրենց դարաշրջանին համապատասխան ձե-
վով: Գերեզմանոցում, բացի տապանաքա-
րեր ունեցող գերեզմաններից, կան նաև մա-
տուտ-դամբարաններ և մահարձան-խաչա-
քար: Մատուտ-դամբարանները, խաչարձան-
ների պատվանդանները և բոլոր տապանա-
քարերը կապտագույն բազալտ քարից են,
իսկ խաչքարերը՝ կարմրագույն հանքաքա-
րից:

Մատուտ-դամբարանները քանդել և քարն
օգտագործել են վանքի կառուցվածքների վե-
րանորոգման համար: Խաչքարերի մեծ մասը
տեղահան են արված, ոմանք ջարդոտված,
բեկորները կամ օգտագործված են որպես
տապանաքար կամ թափված են գերեզմա-
նոցում՝ ամենուր: Հին գերեզմանների սալա-
ձև տապանաքարերը մեծ մասամբ թաղված

են գետնի մեջ, ոմանք ծածկված հողով, մի
քանիսն էլ տեղաշարժ եղած: Գերեզմանաքա-
րերի, դամբարանների և մահարձանների մե-
ծագույն մասն անուշ տապանագրություն-
ների են: Կանգուն վիճակում գտնվող մա-
հարձանները և նրանց տապանագրությու-
նները հետևյալներն են.

ա. Ս. Սարգիս մահարձանի վրա.

«Շնորհիւն Աստուծոյ եւ Յակոբ եւ Մար-
գարէս, յառաջնորդութեան Տեառն Համա-
գասպայ, կանգնեցաւ զԱսր Սարգիսս բա-
շխաւս մեզ եւ Մխիթար վարդապետին Քո-
րայրեցոյ եւ հաւ Քարսի եւ ննջեցելոց մե-
րոց: Որք երկրպագէի ի հիւտոսընկալ սուր
նշանիս, զմեզ յաղաթս յիշեսցիի ի Տէր.
յիշալդդ արեւնի ի Տեառնէ. ի թիւս ԶԴ»
(1255):

բ. Անգրեհաս, Պողոս և Հովսեփ արեղանե-
րի մահարձանի վրա.

«Ե թուիս ՈՂԶ (1247). կանգնեցաւ խաչս
ի վերայ հանգստարանի սուրբ Բանանայի Յով-
լիցս Անդրէասի, Պատուսի եւ Յովսէփայ. որք
երկրպագէի յաղաթս յիշեսցիի»:

գ. Հովհաննէս քահանայի և նրա ազգա-
կանների մահարձանի վրա.

«Ե թիւս ՈԶ (1231). կանգնեցաւ խաչս ի
վերայ հանգստարանի սուրբ Բանանայի Յով-
հաննիսի եւ Նորիս հաւաքատի՝ Գրիգորոյ եւ
Սաղոմոնի եւ այլ ընտանեաց ճոցին եւ եղ-
բաւ որդեաց Առաքայ եւ Արաքանու. որք
երկրպագէի յաղաթս յիշեսցիի»:

դ. Գրիգոր քահանայի մահարձանի վրա.

«Ե թուին ՈՅԶ (1201). կանգնեցաւ նշանս
տէրունական ի վերայ հանգստարանի պա-

* Շարունակված «Եղևթան» ամսագրի 1960 թվա-
կանի Պ Պ Բ-ից, ԺԱ-ԺԲ-ից և 1961 թվականի
Պ Պ Բ-ից և Գ-ից:

սուական Բանաճալին Դերգուրյ, որի Երկր-
պագէի յիշեցէի ի Քրիստոս»:

Քաջի վերոհիշյալներին, հայտնի են նաև.
Տերտերի և իր մոր՝ Խորիսոցի մահարձանը
987 (1275) թվականով.

Գևորգ Խոնականի մահարձանը Ողէ
(1248) թվականով.

Մի այլ մահարձան Ողէ (1222) թվակա-
նով, որի պատկանելիությունը չի նշված:

Իսկ գերեզմանաքարերի վրա հղած տա-
պանագրություններից կարդացվում են՝
«Սարկաւադ երեցն է», «Մարգարէ», «Զի-
նաւոր», «Վասակ», «Խաթուն», «Սարգիս» և
այլն:

Այս գերեզմանոցում է թաղված նաև ժա-
մանակի նշանավոր գիտնական Մխիթար Գո-
շի արժանավոր աշակերտ Թորոս Միլտենե-
ցին, ինչպես այդ մասին տեղեկացնում է
Կիրակոս Գանձակեցի պատմիչը, առելով. «և

րևելք, վերը հիշված մեծ գերեզմանոցին
կից, դեպի անտառն ու դաշտը տանող ճա-
նապարհի ձախ եզրին, ներսում, արևմտյան
կողմի կամարի վրա փորագրված արձանա-
գրության համաձայն, որը մեշ ենք բերում
ստորև, այն կառուցել է վանքի առաջնորդ
Հովհաննեսը 1258 թվականին:

«Ի բոլին Զէ հաստատուած կամարա-
կայս ի հայր Յովհաննէիսէ ի հալալ ընդից
իւրաց, որում յղուրմեսցի Քրիստոս, տալով
հոգալ ետրա ի լուսեղէն յարկաց և յանմա-
հական ջրոյն. ամէն»:

Աղբյուրի այդ շենքը սրահաձև մի կա-
ռուցվածք է, արևելյան, արևմտյան և հյու-
սիսային կողմերից ամբողջական պատերով,
իսկ հարավային կողմից երեք կամարակա-
լայն բացվածքներով, որոնցից եզրայիննե-
րը հավասարաչափ են, իսկ կենտրոնինը
համեմատաբար մեծ է, կամարակապ բաց-



ՀԱՂԻՍՏԻ ԱՂԲԵՈՒՐԻ ՇԵՆՔԸ

կայ թաղեալ ի հռչականուն վանքն Հաղբատ,
ի գլուխ վանացն, ի գերեզմանս հպիսկուպո-
սացն և վարդապետացն»³⁷.

20. Աղբյուրի շենքը. — Երբեմն Հաղբատի
վանքին պատկանող աղբյուրի այդ շենքը,
որը ճարտարապետական մի շատ հետաքր-
քի կոթող է, գտնվում է վանքից դեպի ա-

վածքները միմյանցից բաժանվում են երկու
քարյա ամբողջական սյուներով, որոնց ընե-
րը ամբողջական քարե մեծ գլանների ձևով
են. խարիսխներն ու խոյակները նույնպես
ամբողջական քարերից են, որոնց հակադիր
ծայրերը քառակուսաձև են, իսկ դեպի իրար
հայող ծայրերը զնդաձև, կողքերի կամարա-
կապ բացվածքների արտաքին կողմերից ձգ-
վում են կիսասյուներ՝ գլանաձև բներով և

³⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 208.

համապատասխան խարխախներով ու խո-
լակներով՝ սյուների խարխախների ու խո-
լակների նմանությամբ։ Սյուներն ու կիսա-
սյուները միանում են կամարներով։ Մածկը
թաղակապ է՝ երկթեք տանիքով։

Ներսում, պատերին կից, մի շարքով դըր-
ված են քարե ավազաններ, ուր թափվում է
ջուրը՝ անասուններին ջրելու համար։ Ջուրը՝
կալե թրծած խողովակներով բերված է Ս.
Լուսու լիճան վրա իղած սառնորակ աղբյուր-
ներից։ Ամբողջ շինքը կառուցված է կապ-
տագույն բազալտի սթրատաշ մեծ քարերով,
կրաշագանակով։ Սալահատակված է, տանիքը
պատած է սալաքարերով։

1822 թվականին, երբ Հաղբատի վանքում
էր գտնվում նվիրած կաթողիկոսը, նրա հանձ-
նարարությանը, էջմիածնի վանքի բնիկ
միաբան Անտոն արքեպիսկոպոսը իր միջոց-
ներով վերանորոգում է ամբողջ ջրաբեր գի-
ծը, ինչպես և լիճան լանջին, մի հեղեղատի
նդդին կառուցում է ջրահավաք հատուկ ա-
վազան, ավարտելով այդ բոլոր աշխատանք-
ները 1827 թվականին։ Այդ մասին որոշակի
կերպով տեղեկացնում է սույն ավազանի
վրա լափածո ձևով փորագրված հետևյալ
արձանագրությունը.

«Ձուվացուցե՛ք ձեր զոռգին
Անտոն արքեպիսկոպոսին.
Աստի միևնույն ական տեղին
Նոր նորոգեաց արդեամբ անձին:
Տեղեալ էր սա երեսնցի
Բնիկ միաբան էջմիածնի։ Ի 1827

ամիս»³⁸,

Աղբյուրի շենքը նույնպես քայքայված վի-
ճակում էր՝ թափված էին պատերի երեսա-
պատ քարերի մեծ մասը, քիվելը, տանիքի
սալաքարերը, քայքայված էր սալահատակը
նեղակյումս այդ բոլորը վերականգնված է և
շենքը գտնվում է ամբողջական, մաքուր ու
բարեկարգ վիճակում։

21. Կուսահաց անապատ.— Այս մենաս-
տանը, որն իրավամբ կարելի է համարել
Հաղբատի վանքի մի մասը, գտնվում է գյուղի
արևելյան կողմում, մեծ գերեզմանոցից
ու աղբյուրի շենքից քիչ դեպի արևելք, փոք-
րիկ սարահարթի վրա, բարձր դիրքով։ Բաղ-
կացած է միայն մի եկեղեցուց, որը վիմա-
գիր արձանագրությունների մեջ կոչվում է Ս.
Աստվածածին եկեղեցի։ Թե ե՞րբ է կա-
ռուցվել այդ հետաքրքիր հուշարձանը և ով-
քե՞ր են եղել նրա կառուցողները, որոշակի
պարզ չէ՝ նրա կառուցողական ձևերը բնո-
րոշ են Ժ—ԺԱ դարերին։

Գմբեթավոր մի կառուցվածք է, քիչ երկա-
րածիգ ուղղանկյուն հատակագծով։ Կողերի

պատերին կից ձգվող երկուական որմասյու-
ները, միանալով կամարներով, կազմում են
թաղակապ ծածկը, իրենց վրա կրելով գմբե-
թը։ Վերջինիս թմբուկը ներսից կտրվել է, ար-
տաքուստ ուժակող, նույն ձևի է նաև սրա-
ծայր վեղարը։ Որմասյուները միաժամանակ
միանում են որմակամարներով, կողերի
պատերի մեջ առաջացնելով լայն խորշեր.
որով հուշարձանի հատակագիծը ներսից
դառնում է թեթև խաշաձև՝ ուղղանկյուն խաշ-
թեքով։

Արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր
արսիդ՝ ցածրիկ բեմով։ Միակ մուտքը արև-
մուտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ
մեծ քարով և շքեղազարդ պարակալով։ Ցու-
րաքանչյուր պատի մեջ բացվում է մեկական
փոքր լուսամուտ՝ ոմանք քանդակազարդ շքե-
ղանակով և ոմանք էլ թևավոր պսակով։ Չորս
երկար ու նեղ, կամարակապ գագաթով լու-
սամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի
մեջ՝ աշխարհագրական շրջա գլխավոր կող-
մերից, որոնք ունեն տարբեր ձևերով քան-
դակազարդված պսակներ։ Գմբեթի թմբուկի
արտաքին կողերի միացման անկյուններից
ձգվում են գլանաձև բներ և խարխախներ ու
խոլակներ ունեցող կիսասյուներ, որոնք
միանում են որմակամարներով։

Եկեղեցու պատերը ներսից ծեփված են եր-
կու շերտ ծեփով, որը մեծ մասամբ թափված
է։ Ստորին շերտի պահպանված մասերի վրա
նկատելի են որմանկարների հետքեր։ Ամբողջ
շենքը կառուցված է կապտագույն բազալտի
սթրատաշ մեծ քարերով, կրաշագանակով։ Սա-
լահատակված է նույն բազալտ քարով. տա-
նիքը և գմբեթի վեղարը պատած են կարմրա-
գույն սալաքարերով։

Եկեղեցին վերանորոգել են. Ջալը 1676
թվականին և Սարգիս վարդապետը 1681
թվականին։ Առաջին վերանորոգման վերա-
բերյալ արձանագրությունը գտնվում է եկե-
ղեցու մուտքի ճակատակալ քարի վրա. իսկ
երկրորդ վերանորոգման վերաբերյալ արձա-
նագրությունը՝ եկեղեցու մոտ եղած մի գե-
րեզմանի տապանաքարի վրա, որոնք մեջ ենք
բերում հաշորդաբար.

«Ի բուին Ռձին, բարեպաշտ, ազատ յագ-
գաց եկույնանց մեծաճառատ Ջալն, ողի
Շաճղույունի, ողորմած ամուսնալ իւրով
վերստին նորոգեաց զտաճառ Տիրամօրն»։

«Ի բուին Ռձլ, այս է տապան Սարգիս
վարդապետին, ազգալ խոցիկեցի եւ նորոգող
սուրբ եկեղեցույս»։

Եկեղեցու արևմտյան պատի հարավային
ծայրին կից, մի շարքով, իրար կողքի, ա-
ռանձին խոշոր կրկնապատկան դանների վրա
կանգնեցված են երեք մահարձաններ՝ բարձր,
շքեղորեն զարդարված խաչքարերի ձևով։

³⁸ Ոստում բնիկ Երզնկյան, նշված աշխատությունը,
էջ 81.

որոնց դարձաքանդակները մշակված են վերին աստիճանի նուրբ ձևով: Թե՛ պատվանդանները և թե՛ խաչքարերը կապույտ գույնի թափալտ քարից են:

Հարավային կողմի երկու մահարձանների առջևում կան երկու գերեզմաններ՝ դադաղաձև տապանաքարերով: Վերջիններիս արևմտյան ճակատներին փորագրված մակագրություններից իմացվում է, որ նրանցից ամենահարավայինը Հաղբատի վանքի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսի գերեզմանն է, որը նամակագրական կապեր ունենր ներսես Շնորհալի կաթողիկոսի հետ, իսկ մյուսը,

վանքի առաջնորդ Համադասպ արքեպիսկոպոսին:

Այդ մահարձանների արևմտյան կողմում են գտնվում Ստեփանոս և Իզնատիոս վարդապետների գերեզմանները, որոնք մասնակցեցին Զաքարե սպասալարի կողմից կոռիում հրավիրված ժողովին: Իզնատիոսի գերեզմանաքարը տապանագրություն չունի, իսկ Ստեփանոսի գերեզմանաքարի վրա կարգացվում է 1224 թվակիր հետևյալ տապանագրությունը.

«Առձանս այս վսեմական՝ է սօփեստսի Տէր Ստեփանոսի, կազմեալ ի Տէր Յովնան»



ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱԳԱՅՐ

դարձյալ Հաղբատի վանքի առաջնորդ, Հովհաննես արքեպիսկոպոսի գերեզմանն է: Իրանց տապանաքարերի մակագրություններն չեն:

«Այս է ճանգիստ Տևառն Գէորգայ»:

«Այս է ճանգիստ Տևառն Յովնանիսի»:

Երրորդ, ամենահյուսիսային կողմի մահարձանի առջևում եղած գերեզմանի տապանաքարը չի պահպանվել, մահարձանի վրա էլ պրավոր հիշատակություններ չեն նկատվում, ուստի հայտնի չէ, թե դա ո՞ւմ գերեզման-մահարձանն է: Ոմանք ենթադրում են, թե դա պետք է պատկանի Հաղբատի

ճիսէ՝ Բուր որդայ իւրոյ. ի թիւս Ու՛ր. յաղաւս յիշեցէ՛ր վասն Տևառն»:

Դրանց մոտ է գտնվում նաև եկեղեցին վերանորոգող Սարգիս վարդապետի գերեզմանը, որի տապանագրությունը մեջ բերեցինք վերևում: Այստեղ է գտնվում նաև Գրիգոր քահանայի մահարձանը՝ 1676 թվակիր հետևյալ տապանագրությամբ.

«Կանգնեցաւ խաչս ի վերայ Բանանայիս Գրիգորայ՝ ի վերայ դրան շեմոց կուսանաց՝ վանից Հաղբատայ: Ի թուին ՌՃԻՆ ճօրոգեալ է բարեպաշտ իշխանն Զալ եւ կին իւր Վարս»:

Մենաստանի միաբանության բնակելի շենքերը գտնվելիս են եղել եկեղեցու արևելյան կողմում, որոնք հիմնովին ավերակ են՝ նկատվում են պատերի քարուկիր շարվածքի հետքերը։ Մենաստանը շրջափակված է եղել պարսպով, որի հիմնապատերն են միայն պահպանվել։

22. Երեմի խաչարձաններ. — Դրանցից երկուսը գտնվում են Հաղբատ գյուղից դեպի հյուսիս, իրամածորը տանող ճանապարհի կողմում։ Խաչքարերի վրա եղած արձանագրությունների համաձայն դրանցից մեկը պատկանում է Վարդան քահանային, իսկ մյուսը՝ Հաղբատի վանքի սպասավոր Մխիթարին։ Մեջ ենք բերում նրանց արձանագրությունները հաջորդաբար.

«Երուխիմ ՈԶՐ (1223). Ես Վարդան կուսակրան Բահանայ կանգնեցի զխաչս ի բարև խաւսութիւն»։

«...Յառաջնորդութեան Տեառն Յովանիսի, ես Մխիթար՝ սպասաւոր սրբօքս, կանգնեցի զխաչս ի բարևխաւսութիւն իմն եւ ծնողաց իմոց եւ Լիդայւրօղլայ իմն Սարկաւազին. սրբ երկրպագեմ յաղաթս յիշեցեմ»։

Այս արձանագրության սկզբի մասը, որտեղ սովորաբար լինում է տարեթիվը, խաչքարի քիվի վրա գտնվելու հետևանքով, քիվի հետ ընկել ու անհայտացել է, ուստի մահարձանի կանգնեցման ստույգ ժամանակը հայտնի չէ։ Բայց որովհետեւ այն կանգնեցված է Հովհաննիս արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, ապա պարզ է, որ վերաբերում է ԺԳ դարին։

Երկու շահարձաններն էլ ունեն կրկնակի պատվանդաններ՝ կապտագույն բազալտի ամբողջական մեծ քարերից. իսկ խաչքարերը կարմրագույն ամուր քարից են, սովորականի պես շքեղ քանդակազարդված՝ ըուսական ու երկրաչափական ձևերով։

Երրորդ խաչարձանը գտնվում է գյուղի հարավային կողմում, Զրադացածորը տանող ճանապարհը աչ եզրին։ Տեղացիք դրան Ս. Սարգիս են կոչում։ Խաչքարի վրա եղած սեղմ մակագրության համաձայն, այն կանգնեցրել է Գրիգորը 1255 թվականին, Համազասպ Եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, իր և իր ծնողների հիշատակի համար։ Մահարձանը կազմված է պատվանդանից և խաչքարից, որոնք կապտագույն բազալտ քարից են ու սովորական ձևով մշակված։

23. Կամուրջ. — Միակամար փոքր կամուրջ է, գտնվում է Հաղբատից դեպի հարավ-արևմուտք, Զրադացածորում, Հաղբատի ջուր կոչվող վտակի վրա, այնտեղ, ուր գետակի ժայռոտ ափերը խիստ նեղանում են, ուստի կամուրջի կամարի ծայրերը հենվում

են ժայռոտ ափերի վրա։ Ետնված է կապտագույն բազալտի մաքուր տաշած քարերով, կրաշաղախով։

Այդ կամուրջով է, որ Հաղբատի վանքը կապ է պահպանել Սանահնի վանքի ու Կալան բերդի հետ։ Այդ վերջինումս էր, որ վտանգի դեպքում ապաստանում էր վանքի միաբանությունը և ուր պահպանվում էին վանքի սպասները։

Կամուրջի կառուցման մասին ոչ մի հիշատակություն չկա, ուստի հայտնի չէ, թե նա երբ է կառուցված և որո՞նք են եղել նրա կառուցողները։ Սակայն անկասկած է, որ նա պատկանելիս է եղել Հաղբատի վանքին։ Իսկ նրա կառուցողական որպիսությունները հավանական են դարձնում, որ այն պետք է կառուցված լինի ԺԳ դարին։


Այս ձորը Զրադացածոր է կոչվում այն պատճառով, որ այստեղ են գտնվել Հաղբատի վանքին պատկանող շրադացները, Այդ մասին որոշակի կերպով տեղեկացնում է Զրադացածորը տանող ճանապարհի եզրին, գետակի աչ ափին մոտիկ կանգնեցված խաչքարի հետևի երեսի վրա փորագրված 1086 թվակիր հետևյալ արձանագրությունը.



ՋՐԱԿԱՄԱՐՈՐԻ ԿԱՄՈՐԺՐԸ

«Ի թուին ՇԼԵ. Ես Տէր Սարգիս՝ առաջ-
նորդ սուրբ ուխտիս Հաղբատայ, շինեցի
զբազանցս և արարի ազատագաց, արկի եւ
զայգիս, տնկեցի եւ զդրախտս՝ զանազան
մրգաբերամ, ի փառս սրբոյ ճշմնին եւ ի
վայելումն տանս Հաղբատայ: Առդ, եթէ ո՛ր
գաս ի Հաղբատայ ճանձէ կամ աւերման
պատճառ յինի, ի մեծաց կամ ի փոքունց,
կամ առաջնորդ ուր սմա շինութեանն չը-
նայ, այնպիսիքն որոտեայ լիցին յԱստուծոյ
եւ ընդ Ուղիւն կորստեան, ելցեն ի խաւարն
արտաւինն եւ յորդն անունն»³⁹,

Իսկ սույն խաչքարի առջևի երեսի վրա փո-
րագրված է 1089 թվակիր մի արձանագրու-
թյուն, այսպես.



ՀԱՂԲԱՏԻ ԿԱՅԱՆ ԲԵՐԴ-ԱՄՐՈՂԻ ՊԱՐՈՒՅԻ ՀՅՈՒԹԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՐԶ

«Ի ՇԼԸ թուին. Ես Տէր Սարգիս՝ առաջ-
նորդս Հաղբատայ, կանգնեցի զնշման տէ-
րունական, գէն հաւատագիւղոց եւ պառապան
թագաւորաց մերոց Կիւրիկէի, Սմբատայ եւ
Դաւթի՝ զարմի սոցա»⁴⁰:

24. Կայան բերդ-ամրոց. — Կայան բերդ-
ամրոցը հանդիսացել է Հաղբատի վանքի
պաշտպանական վայրը, Նա կառուցվել է
մոնղոլական արշավանքների նախօրյակին:

Վտանգի դեպքում այդտեղ էր ապաստա-
նում վանքի միաբանությունը, այստեղ էին
պահվում նաև վանքի հարստությունները,
հանգերձանքն ու սպասները:

Ամրոցը գտնվում է Կայենո և Դերեզա ձո-
րերի միացման անկյունավորման վայրում,
Զադինդադ լեռներից ձգվող լեզվածն մի
բարձունքի վրա, որը լեռնաշղթայից անջատ-
վում է պարանոցածն նեղ շերտով: Այդ պա-
րանոցածն շերտի վրայով է անցնում Հաղ-
բատից Սանահին տանող ճանապարհը:

Նշված բարձրությունը մեծ մասով հզեր-
վում է վերոհիշյալ ձորերի բարձր անմատ-
չելի քարափներով, իսկ նրա խոցելի տե-
ղերն ամրացված են բրգավոր բարձր ամրո-

ցապատերով, շարված կապտագույն բազալ-
տի կիսատաշ խոշոր քարերով, կրաշագա-
խով: Ամրոցի գլխավոր մուտքը այդ պարա-
նոցածն մասի վրայով է:

Ամրոցի կառուցման վերաբերյալ գոյու-
թյուն ունեն թե՛ պատմական և թե՛ վիժագրա-
կան տեղեկություններ: Կիրակոս Գանձակե-
ցի պատմիչը, խոսելով Հաղբատի վանքի ա-
ռաջնորդների կյանքի ու գործունեության
մասին, գրում է. «Եւ յետ նորա (Հովհաննես
հալեմացուց — Հ. Ն.) մյուս Յոհանէս, քուեր

³⁹ Ռոմտով րեկ երգելիւմն, էջ 70.
⁴⁰ Նույն տեղում:

որդի իշխանացն Զաքարէի և Իսանէի, եղ-
բորորդի առաջնոյ Յափանիսի: Սա շինեաց
բորորդի մի գեղեցիկ, ամրագոյն պարսպօք մէջ
ընդ Հաղբատ և ընդ Սանահինս⁴¹:

Ամրոցի ներսում եղած Դսեվանք կողմող
եկեղեցու արևմտյան պատի արտաքին երե-
սի վրա, մտաքից վերև գործարկած արծա-
նադրության մեջ, հանգամանորեն խոսվում
է ամրոցի և եկեղեցու կառուցման ժամանա-
կի, կառուցողների և կառուցման դրդապատ-
ճառների մասին: Ահա այդ արձանագրու-
թյունը, որը կրում է 1233 թվականը.

«ՈԶՐ. կաման Աստուծոյ ես Տէր Յով-
հաննէս՝ առաջնորդ Հաղբատայ, Լուսն որդի
մանկի պալտնացն Զաքարէի եւ Իսանէի, ի ժա-
ման պալտնացն սուսանումն աշխարհիս
մեռայ յանաւէն Խորագմնաց, ոչ գայր տեղի
ապատանի սուր Եշանիս եւ եղբարցս,
հրամանաւ Բեռոյն իմոյ Իսանէի եւ որդւոյն
Խուոյ Ասագին եւ Շահնշանի՝ որդւոյ Զաքա-
րէի, շինեցի զամրոցս եւ զեկեղեցիս Հաղ-
բատայ սուր Եշանիս բազում աշխատու-
թեամբ: Արդ, եթէ ո՛ր զսա ի Հաղբատայ հանէ,
սէ ի մեծագ եւ թէ ի փոքունց, զի՛նչ եւ իցէ
պատճառաւ, մարդն այն ճգովեալ եղիցի ի



ԴՍԵՎԱՆՔ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՅԱՆ ԲԵՐԴ-ԱՄՐՈՂՈՐԴԻ

⁴¹ Կիւ. ակոս Գաւճաղեցի, էջ 82.

մահուան եւ ի կենաց՝ յԱղամայ մինչ ի զա-
լուստն Քրիստոսի, ինչ ճգով կա[յ] ի վի-
րայ ճորա, եղիցի երբեք եւ տատանեալ
որպէս Կայենի, եւ բաժին Յուդայի առցե, եւ
սաւեղիչ ճգաց ճաւա սատանայ լիզի: Սա
առաջնորդ ճաւա, որ կամաւոր ճախանձու
կամ ծալութեամբ կամ կաշառաւ զսա ի
Հաղբատայ հանէ. զվերոգրեալ ճգովն առ-
ցէ. եւ որք ճաստատեն արճեցին յԱստուծոյ:
Սա պարտին ինձ Տէր Յովհաննէսի զԱս-
տուածածնի տաւնի Գ աւրն ի սմա պատա-
րագն ինձ մատուցանել:

Ամրոցի ներսում եղած Դսեվանք եկեղե-
ցու շինքը գմբեթավոր մի կառուցվածք է,
քիչ երկարածիք ուղիղ քառակուսին հա-
տակագծով: Կողերի պատերին կից ձգվող
երկուական որմասյունները միանալով կա-
մարներով. կազմում են թաղակապ ծածկը,
իրենց վրա կրելով գմբեթը՝ խիստ ցածրա-
դիր թմբուկով և բուժ ծայր ունեցող վեղա-
րով:

Արևելյան կողմից ունի կիսակլոր ար-
սիճ՝ ցածր բեմով: Միակ մուտքը արևմուտ-
յան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ
քարով և կողերից զլանած կիսասյունների
ձևով շրջանակով, որոնք միանում են մուտ-
քի ճակատակալ քարը եղերող կամարով:
Յուրաքանչյուր պատի ճակատային մասից
բացվում են մեկական երկար ու նեղ. կա-
մարակապ զագաթով լուսամուտներ՝ թեա-
վոր պսակներով:

Եկեղեցու գմբեթը քանդվում է 1827 թվա-
կանի երկրաշարժից, որը նույնությամբ վե-
րականգնում է Հաղբատեցի Մարգար Եր-
զնկյանը, ինչպես այդ երևում է նույն եկե-
ղեցու մոտ թաղված նրա գերեզմանի հետե-
յալ տապանագրությունից.

«Է՛ի ճերբոյ վիմիս ճաւզչի մարմին Մա-
րգարայ Երզնկեանց, վերանորոգողի՝ տանա-
րիս, որ ճնշեաց ի Տէր 1842 ամի, ի ճոսակի
67 ամաց»:

Եկեղեցու շինքը կառուցված է կապտա-
գույն քաղալտի մաքուր տաշված քարերով,
կրաշաղախով: Սալահատակը նույն բա-
ղալտ քարից է, տանիքը և գմբեթի վեղարը
պատած են կարմրագույն սալաքարերով:

Կայան բերդի կառուցումից ոչ շատ անց,
Վարդան Բարձրբերդցի պատմիչը այնտեղ
կազմակերպում է իր հատուկ դպրոցը: Ամ-
րոցի ներսում մինչև այժմ էլ պահպանվել են
քաղաքացիական մի մեծ շինքի ավերակնե-
րը, որոնք, ուսումնասիրողների կարծիքով,
պետք է պատկանեն Բարձրբերդցու կազմա-
կերպած դպրոցին:

Սակայն Բարձրբերդին երկար չի մնում
Կայան-բերդում. հետագայում նա թողնում
է Կայան-բերդը և գնում Ս. Անդրեի կոչվող

այրը, որը գտնվում է Դերեգաձորի ձախակողմյան քարափի մեջ՝ Կայան բերդ-ամրոցի դիմաց, «Աթոռիկ» կոչվող դաշտամասի եզրին, որից ներքև, գետափին մոտիկ, տարածվում է Հաղթատի վանքի սեփականությունը հանդիսացող Աթոռիկ գյուղը։ Այդտեղ նա շարունակում է իր ուսուցումը։ Այդ մասին հետևյալ կերպ է պատմում Կիրակոս Գանձակեցին. «Եւ առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյ վարդապետին Վարդանայ, առաքէ առ կաթողիկոսն Կոստանդին ի կլայն Հռոմէական, և ինքն եկեալ ի Կայանոյ ի մենարանն իւր, զոր Սուրբ Անդրէի կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ զաղարեալ յուսուցանել զբաղումս,

որք աշտկերտէին նմա, վարդապետական րանին»⁴²։

Բարձրբերդցին այստեղ էլ մահանում է և թաղվում այդ նույն քարայրի առջևում։

Հաղթատ գյուղը շատ հարուստ է նյութական մշակույթի րազմապիսի հուշարձաններով։ Այն իրավամբ կարելի է բնական մի հարուստ թանգարան համարել։ Գյուղի սահմաններում, րացի վերը նկարագրված հուշարձաններից, կան ուրիշ շատ հուշարձաններ, որոնք սակայն Հաղթատի վանքի հետ անմիջական առնչություն չունենալու պատճառով, չեն ընդգրկվում մեր ուսումնասիրության մեջ։

⁴² Կիրակոս Գանձակեցի, էջ 92.



ՊՐՈՖ. ԻՌԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՆ-ՔԵԿ

(Գիտությունների փոքրագույն օրենքի)

ԳԵՎՈՐԳ ԿԱԿԱԲԵՆՑ ԳՈՐԵՑԻ (ԺԸ ԴԱՐ) ԵՎ ՆՐԱ ՏԱՂԵՐՆ ՈՒ ՃԱՌԵՐԸ

Ինչպես հայտնի է, վրաց աղբյուրները, սկսած ԺԱ—ԺԲ դարերից, երբեմն արձագանքել են վրաստանի ֆեոդալական միապետության և վասալության հայոց Արծրունիաց տան և վանի (իմա՝ Աղթամարա) կաթողիկոսական Աթոռի փոխհարաբերություններին:

Օրինակ, ԺԱ դարի պատմիչ Սմբատ Դավթի որդին, իր ժառանգի մատյանն կոչված երկում, ի միջի այլոց, նշում է, թե ինչպես վրաց Բագրատ Դ արքայի օրոք (1027—1072), 1046 թ., ազի մայր նորա [Մարիամ] գուստր էր Սեմեֆեովայ ճայոց արքայի¹, հառն զգաղաքն Անի բնակիչք նորա ի թագուհի Մարիամ²:

Ժառանգիրների պատմականն ու գովասանքը երկի անանուն հեղինակը, որը թամար թագուհու (1184—1213) պալատական պատմիչն էր, խոսելով սույն թագուհու օրոք, հավանական է 1197—1204 թվականներին, Թրիխսիում կայացած վրաց-հայկական համատեղ եկեղեցական ժողովի մասին, նշում է, որ այդ ժողովին, ի թիվս այլ անձնավորությունների, ներկա էին ակաթողիկոսն Վանայ (իմա՝ Աղթամարա—Լ. Մ.-Ր.)³

¹ Ընդգծումը այստեղ և ստորև բոլոր մեջբերումներում մերն է— Լ. Մ.-Ր.:

² Լ. Մելիքսեթ-Քեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ա, Երևան, 1934, էջ 208—207:

³ Այդ ժամանակվա Աղթամարի գահակալի անունը վրաց պատմիչը չի տալիս: Ըստ հայ աղբյուրների և այն անհայտ է (Մեսրոպ վրդ. Մախուրյանց, «Հայաստանի կաթողիկոսաց Աղթամարայ», էջմիածին, 1916, ներսիս վրդ. Ալիբեյան, «Դասագրականները կաթողիկոսաց Աղթամարայ» («Ազգային մատենադարան», 22), Վեննա, 1920, Մաղաթիա արքեպիսկ. Օրմեյանց, «Ազգապատմություն», Գ, Երևան, 1927, էջ 22Ա:

նաև հայոց եպիսկոպոսներն⁴ ու վարդապետները⁵:

ԺԶ դարի անգլիացի վաճառական և ճանապարհորդ Քարգրվայդը, որը 1590-ին այցելել է Արեւիք, Ջուղայի բնակիչներին անվանում է «Հայս և Վիրս, պարապեալս ի վաճառականութիւն մետաքսի և այլոց նւթոց», ինչպես վկայում է Զ. Ղ. Ալիշանը⁶:

Անտարակույս, հատուկ ուշադրության արժանի է ԺԹ դարի սկզբների (1805—1806) ֆրանսիացի ճանապարհորդ Պյեր Ամեդե Ժորբերի «Ուղեգրությունը», ուր տրված է Վանայ լճի շրջապատի նկարագրությունը և նշված է, թե ինչպես 1806 թվականի օգոստոսին վիճակվեց իրեն «ման գալ լճի կղզիները և այցելել վանքերն ու շրջակա քրիստոնեական հնությունները», ճալով վարագավանքի մանրամասն տեսությունը, Պ. Ա. Ժորբերը մատնանշում է, նաև, որ այս վանքի «միաբանությունը բաղկացած էր չորս կամ հինգ կրոնավորից», չհաշված վանահորը, «ոմանք հայ, ոմանք վրացի»⁷:

⁴ Վրացերեն բնագրի տարբերակում՝ «մաղրասաները», որը «մաճտեսի»-ների աղավաղումը պիտի լինի: Տ. Լ. Մելիքսեթ-Քեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Բ, Երևան, 1936, էջ 17: Նույնի «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց», Թրիխսի, 1928, էջ 84—85, 221 (վրացերեն): Հմմտ. ժառանգի Երվանդան (Վրաց տարեգրությունը), Բ, Թրիխսի, 1959, էջ 83, 573 (վրացերեն):

⁵ Զ. Ղ. Ալիշան, «Միասնական», Վենետիկ, 1803, էջ 413:

⁷ «Ճանապարհորդություն դեպի Հայաստան և Պարսկաստան, կատարված 1805 և 1806 թվականներին, Պ. Ամեդե Ժորբերի. Փարիզ, 1821, էջ 364 (ֆրանսերեն): Հմմտ. Հովհ. Հովսեփյան, «Աղբյուրներ Հայաստանի և Անգլիոփկառի պատմության, Ուղեգրություններ, Հատ. Զ. ԺԹ դարի առաջին բառամայակ (1800—1820), Երևան, 1984, էջ 236:

Քննարկելով Վարագա վանքի միաբանության կազմին վերաբերող Պ. Ա. Ժորեի առաջին, մենք 1940 և 1955 թվականներին կասկած էինք հայտնել այդ մասին և առաջարկել առժամյա հայ, ուման վրացի» վկայությունը մեկնաբանել առժամյա Հայքից (Հայաստանից), ուման վերջից (Վրաստանից)՝ իմաստով, կամ, ծայրահեղ դեպքում, վերջինների տակ «վրացախոս հայեր» (գուցե և հայադավան վրացիներ) հասկանալով,

Այսպիսի եղբայրացության հանգեցրել մեզ հիմք է տալիս, քարեբախտարար, մեր տրամադրության տակ գտնվող Գևորգ Կապրեհնց Գորեցու կյանքին ու գործին վերաբերող նյութը:

1740—1765 տարիներին, երբ Վրաստանում, հատկապես Քարթլիի մայրաքաղաք Թբիլիսիում և Կախեթի մայրաքաղաք Թելավիում հրապարակ էր իջել և ստեղծագործում էր հանրաժանությամբ Սայաթ-Նովան, նույն տարիներին Վասպուրականի վանա լճի կրդ-դիներից մեկում՝ Կտուց անապատում, առնու է հանում գրականության ասպարեզում Գևորգ վարդապետ Կակաբենց (Կապրեհնց) Գորեցին 1740—1750 թվականներին:

Գևորգ վարդապետ Գորեցին ստեղծագործում էր երկու լեզվով՝ հայերեն և վրացերեն, օրինակ ունենալով Գրիգորիս Աղթամարցուն, որը ստեղծագործում էր երեք լեզվով՝ հայերեն, թուրքերեն և պարսկերեն, Գևորգի ժամանակակից Սայաթ-Նովան ևս հորինում էր իր խղճերը երեք կամ նույնիսկ չորս լեզվով՝ հայերեն, վրացերեն, պարսկերեն-թուրքերեն և պարսկերեն, ինչպես նաև վերջինիս հետևորդ Շամշի-Մելքոն իր բանաստեղծությունները հորինում էր երկու լեզվով՝ հայերեն և վրացերեն:

Գևորգ Կակաբենցի գրական գործունեության մասին որոշ զաղափար կարելի է կազմել այն զույգ ձեռագրերի հիման վրա, որոնք պահպանված են Վրաստանի կենտրոնական ձեռագրատանը (Վրաստանի պետական թանգարանի նախկին ձեռագրական թանկին, ներկայումս Վրացական ՍՍՄ Գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտ⁹):

8 Վ. Մելիքսեթ-Մեկ. «Գևորգ Գորեցի» ԺԸ դարի առաջին կեսի վրաց առժամյա գրողը, «Տեղեկագիր Վրաստանի պետական թանգարանի», Ժ. Թբիլիսի, 1940, էջ 90 (վրացերեն, ռուսերեն ամփոփումով): Նաև մեր «Վրաց գրչությունը Հայաստանի և հայերի մասին», Գ. Երևան, 1955, էջ 94:

9 Այս հիմնարկության հայերեն ձեռագրերի հավաքածուն, որը համում է շուրջ 200 միավորի և հավաք-

Դրանցից մեկը, ըստ մեր ցուցակի № 45, Գևորգի ինքնաձեռագիրն է, բուլանդակությամբ դավանաբանական բնույթի ժողովածու, գրված վրացերեն և մասամբ հայերեն, երկայուն ժողովածուի մեջ տեղ-տեղ մուծված են տաղեր ու ներբողյաններ վրացերեն և մասամբ հայերեն, նաև բազմաթիվ հիշատակարաններ վրացերեն (էջ 145, 256, 275, 303, 328, 345, 361, 06, 06—07, 017, 018, 075—076, 079 և այլն), գրված 1740, 1747, 1748 և 1750 թվականներին, որոնցից մեծ մասը 1748-ին է պատկանում: Գրեթե բոլոր հիշատակարանները պարունակում են ինքնակենսագրական տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է կազմել Գևորգի ծննդաբանությունը և որոշ շափով նաև կենսագրությունը: Ժողովածուն նկարազարդված-պատկերազարդված է, թեև վերին աստիճանի պրիմիտիվ կերպով: Ժողովածուի դրության և ձևավորման առիթն է Կտուց անապատը:

Մյուս ձեռագիրը, ըստ վրացերեն ձեռագրացուցակի № 368, աղթագիրք է, արտագրված ոմն Թադա Ղորղանի որդու (Ղորղանասշվիլի) ձեռքով Աստրախանում 1771 թվականին¹⁰:

Երկու ձեռագրերն էլ հիմնականում ընդգրկում են 1740—1750 թվականների միջոցին Գևորգ Կակաբենցի կողմից թարգմանված նյութեր հայերենից վրացերեն:

Կակաբենց (վրացերեն Կակաբաթանթ, այսինքն Կաթավենց) ազգատոհմի ներկայացուցիչ Գևորգ վարդապետը ծնվել է Քարթլիի (Արևելյան Վրաստանի) հիմնավուրց Գորի քաղաքում: Նրա ծնողներն են եղել Ավթանդիլը և Միհրանդուխտը, որոնք ունեցել են բացի Գևորգից, նաև մի տղա Դավիթ անունով և երեք աղջիկ՝ Թինաթին, Խանում և Ռուզգամ, որոնցից վերջինը 1748 թվականի հիշատակարանում հիշվում է իբրև ննջեցյալ, իսկ մնացածները որպես ամուսնացած:

Վե՛լ էր 1821—1838 թվականների ընթացքում մասամբ մեր լանդերով, դեռևս 1838 թվականին, Համամխոթենական Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի հանձնարարությամբ մանրամասն ցուցակագրեց Մեծուզ Մազիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսյանը և «Յուզակ»-ի իր իսկ ձեռքով մեղեմագրած օրինակը հանձնեց Հայաստանի Պատմության ինստիտուտին: Հիշյալ զույգ ձեռագրերի, իբրև վրացատու գրչագրերի նկարագրությունը, այդ ցուցակի մեջ չմտավ, ուստի և դրանց մանրամասն տեսությունը տվինք մենք (տե՛ս նախորդ ծանոթագրությունը):

10 Հմմտ. «Յուզակ Վրաստանի պետական թանգարանի վրացերեն ձեռագրերի, Թանգարանի ձեռագրերի նոր հավաքածու», Ա. Թբիլիսի, 1957, էջ 391—392 (վրացերեն):

հիշատակարաններումն է, այլ րարբառային ձևով՝ «Քէորբ»։

Գևորգ Կակարենցի ժողովածուն բազկացած է չորս պլխից։

Առաջին գլխի սկիզբը թերի է, ոակայն պահպանված է ամբողջ գլխի ցանկը, որով հնարավոր է զաղափար կազմել նրա բովանդակության մասին, այսինքն կոհակ, որ ժողովածուի սկզբնական մասը հատկացված է եղել Գրիգոր Տաթևացու քարոզներին։

Երկրորդ գլուխը պարունակում է նույնպես Գրիգոր Տաթևացու քարոզների շարունակությունը, որին կցված է այսպիսի հիշատակարան. «Ի փառաբանություն մի Աստուծո և ի վայելումն ուղղափառաց՝ Հայաստանյայց Կաթողիկոս Մայր Եկեղեցու մեր Լուսավորչի էջմիածնի զավակների, և թարգմանված է հայերենից վրացերեն ի ձեռն Գորեցի Գևորգ վարդապետի, ի թվականության 436 [= 1748]»։

Երրորդ գլուխը պարունակում է ճառեր Գրիգոր Լուսավորչից և Ներսես Շնորհալուց, ինչպես նաև Կյուրեղ Աղեքսանդրացուց՝ ընդդեմ բոլոր հերձվածողաց, որոնց (ճառերին) կցված է այսպիսի ուշագրավ հիշատակարան. «Թարգմանված է հայերենից վրացերեն ի ձեռն Գորեցի Գևորգ անարժան վարդապետի, ի վայելումն Հայաստանյայց Եկեղեցու զավակների, որոնք հայտնեմ շեն հասկանում»։ Նշանակում է, որ թարգմանիչը՝ Գևորգ վարդապետը՝ այստեղ ի նկատի ունի վրացախոս հայերին կամ, ծայրահեղ դեպքում, հայազավան վրացիներին։

Վերջապես, չորրորդ (և վերջին) գլուխը պարունակում է ճառեր Ներսես Լամբրոնացուց, որոնք գրի են առնված ի ձեռն Գևորգ անարժան վարդապետի։

Բացի այս, ժողովածուում պատվավոր տեղ է հատկացված մեջբերումներին Ղազար Զահկեցու Հակաճառությունից («Գրախոս ցանկալի»-ից)։

Այսպիսով, պարզ է, որ իր ժողովածուն կազմելիս և հայերենից վրացերենի վերածելիս Գևորգ Կակարենցը ձեռքի տակ է ունեցել Գրիգոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթևացու, Ղազար Զահկեցու, ինչպես և Կյուրեղ Աղեքսանդրացու ճառերը, չհաշված հայ պատմագիրների երկերը։

Սակայն ժողովածուի կմախքը կազմում են Գրիգոր Տաթևացու ճառերը, քաղված նրա «Գիրք հարցմանց»-ից և «Քարոզգրքի» Ամուսն հատորից, եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ ԺԸ դարում վրաց գրական-գիտական շրջաններում մեծ հետաքրքրություն էր առաջացած դեպի Գրիգոր Տաթևացին, որին լավ ճանաչում էր, ի միջի այլոց, վրաց Անտոն Ա կաթողիկոս

Բագրատիոնը, Բացի այս, Տաթևացու «Քարոզգրքը» հատկապես թարգմանվել էր իմերեթում¹⁴, ըստ երևույթին, միանգամայն անկախ Գևորգ Կակարենցի ժողովածուից։

Ընդ սմին, թարգմանությունները Գրիգոր Տաթևացու երկերից կատարված պիտի լինեն, մեր կարծիքով, ո՛չ թե ձեռագիր մատյաններից, որ անշուշտ կլինեին Կաթուց անապատի և Վարազա վանքի մատենադարաններում, այլ ըստ տպագիր օրինակների, որոնք Գևորգի գործունեության պահին (1740—1750) առկա էին Կոստանդնուպոլսի հրատարակություններով, օրինակ՝ «Գիրք հարցմանց»-ը՝ 1730 թ.¹⁵, որտեղից (էջ 485—486) բառացի թարգմանված է «Քարոզ վարդապետին» հատվածը (ըստ ձեռագրի էջ 249—251)։

Նույն պահին նմանպես առկա էր Կոստանդնուպոլսի 1734 թ. հրատարակությամբ Ղազար Զահկեցու (նույն Ղազար Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, 1737—1751) «Գիրք աստուածաբանութեան, որ կոչի Գրախոս ցանկալի»-ն, որտեղից (էջ 520—530) բառացի թարգմանված է պապականների դեմ ուղղված հատվածը (ըստ ձեռագրի էջ 341—345)։

Այլև ասպարեզի վրա էին, մի կողմից, Կոստանդնուպոլսի հրատարակություններով՝ Ներսես Կյայեցու «Յիսուս Որդի»-ն՝ 1724 թ., Կյուրեղ Նրուսահանացու «Կույումն բնծայութեան»-ը՝ 1728 թ., Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում»-ը՝ 1737 թ., և մյուս կողմից՝ Հոռմի հրատարակությամբ՝ Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց Եկեղեցւոյն ընդ Մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հոռվմայ» ծավալուն գործը՝ 1650, 1658, 1661 և 1690 թ. թ., և, վերջապես, Պաղտայի կամ Վենետիկի հրատարակություններով՝ այսպես կոչված «Դրաշնաց թուղթ»-ը՝ 1690 և 1695 թ. թ., որոնց նույնպես ծանոթ է Գևորգը, նաև մի շարք այլ գործեր։

Գևորգ Կակարենցի ժողովածուում դավանաբանական բնույթի նյութերի միջև կան նաև նրա լիովին թե կիսով ինքնուրույն գործեր, որոնք կարծես թե չեն խախտում ժողովածուի ընդհանուր ոգին։

¹⁴ Մկր հոգվածը՝ «Տեղեկագիր Վրաստանի պետական թանգարանի», Ժ, էջ 95 և ծանոթ. 3 նույնտեղ։

¹⁵ Այստեղ տեղին կլինեն հիշել, որ այս հրատարակությունից, ցենզուրային պայմանների պատճառով, րաց էր թողնված «Էնդղէմ Տաեկաց» հատվածը, որը ուղիղ 200 տարի անց լույս ընծայեց Ռաբղին Լպիսկոպոս Կյուլսերյանը («Հետազայում Բարզեն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի Տան Կիլիկիո, 1931—1935») առանձին գրքով՝ «Իսլամը հայ մատենագրության մեջ. Ա. Գրիգոր Տաթևացու ընդդէմ Տաեկաց» [«Աղգային մատենագրան», ԺԻԳ Դ, Վիեննա, 1930]։

Այս գործերը կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խումբը տաղերն ու ներբողյաններն են, թվով 8, որոնցից միմիայն երկուսն են հայատառ հայերեն, իսկ մնացած վեցը՝ վրացատառ վրացերեն:

Հայերեն տաղերից մեկը, բաղկացած 2 տունից կամ 8 տողից (էջ 360), նվիրված է Հովհան Ոսկեբերանին, որը հորինված է, ինչպես ստորև (ծան. 21) նշված է, Ղազար Զահկեցու ներշնչմամբ, եթե ոչ լիովին, գոնե առաջին տունում: Իսկ երկրորդ տաղը, բաղկացած 4 տունից կամ 16 տողից (էջ 016), նվիրված է Հիսուսին:

Երկուսն էլ ստորև հրատարակվում են ըստ ձևազրի:

Վրացերեն տաղերն ու ներբողյանները, որոնք մենք թարգմանել ենք հայերենի, մասամբ տեղավորված են համապատասխան նկարների տակ և հետևյալներն են.

ա. Գրիգոր Տաթևացուն, 3 տող, նկարի տակ (էջ 147):

բ. Հոռոմի Սեդեքեստրոս պապին և Գրիգոր Լուսավորչին, նաև Կոստանդին Մեծին և Տրդատ Թագավորին, դարձյալ 3 տող, նույնպես նկարի տակ (էջ 257):

դ. Գրիգոր Լուսավորչին և Ներսես Լամբրոնացուն, դարձյալ 3 տող, նույնպես նկարի տակ (էջ 347):

դ. Վարդա խաչին, 27 տուն=108 տող (էջ 012—015):

և. Գովասանք վրաց ալբերենի, 37 տող (էջ 144—145):

զ. Հիսուսի կենսագրությունը, 30 տուն=120 տող (էջ 08—011):

Այս տաղ-ներբողյաններից երկրորդը, կասկած չի կարող լինել, ներշնչված է աշաշանց թուղթի-ից, որին Գևորգ Կակաբենցը ծանոթ պիտի լիներ 1690 կամ 1695 թվականի հրատարակությամբ, տուրք տալով նրան¹⁶, մեր կարծիքով, անգիտակցաբար:

Երկրորդ խումբը ճառերն ու քարոզներն են, գրված վրացերեն, որոնք նվիրված են Սուրբ Սարգսին կամ Առաջավորաց պապին (էջ 166—167), Մուգատկին (էջ 228—231), Հայաստանյայց եկեղեցիների տեսությանը (էջ 302—305), նաև այլևայլ պատումների հայ-վրացական և հայ աղվանից փոխհա-

րաբերությանց անցյալից (էջ 72—73, 257, 266—267, 325—326, 327, 353, 355 և այլն):

Այս գործերն ևս մենք բնագրից վերածել ենք հայերենի:

Գևորգ Կակաբենցի ինքնուրույն ստեղծագործության մեջ պատվավոր տեղ է գրավում Վարդա խաչին նվիրված տաղը, որը, իհարկե, միակը չէ հայ գրականության զանազանի մեջ, ասել է՝ ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը¹⁷:

Անկերև է, որ այս տաղը հորինելիս Գևորգ Կակաբենցն օգտվել է նաև անմիջականորեն Վարդա վանքում լսած՝ Վարդա խաչի մասին բանավոր գրույցներից և ոչ թե գրավոր աղբյուրներից, ինչպիսիք են, օրինակ, Թովմա Աթորունու «Պատմության» Դ դպրության ժԲ գլուխը¹⁸, «Յասյմա-ուրք»-ի համապատասխան հատվածը¹⁹ և այլն:

Միաժամանակ, զուրկ չէ հետաքրքրությունից այն փաստը, որ Գևորգ Կակաբենցը, վրաստանցի լինելով հանդերձ, անուշադրության է մատնել Վարդա խաչի մասին եղած գրույցի առնչությունը Վարձիի խաչի գրույցի հետ, որն ակտուալ էր համարվում միջնադարյան հայ գրականության մեջ²⁰:

17 Հիշենք ժՁ դարի առաջաց Զաքար Լմենցու կամ, որն նույն է, Վարագեցու, երբեմեցու, Գևորգի եպիսկոպոսի հորինվածը, որ հրատարակել է Ներսես վրդ. Ալիքյանը («Զաքարիա Գևորգի եպիսկոպոսի տաղերը», «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 284—285 [«Տաղ Վարդա խաչին և Զաքարիայի Վարագեցու ասացած»]): Տյուրքիզների համալսարանի (Գերմանիայում) հայերեն ձեռագրերի ժողովածուում, № 61-ի ներքո, պահպանվել է ոմն Եղեղեղյան քանդակող Վարդա խաչին, բավական ընդարձակ քմանգակությամբ, էջ 265ա—267ա («Տյուրքիզների համալսարանի ձեռագրերի ցուցակը», կազմեցին Յուրեյ Նիկոլաևու Յիվկ և Լևոն Գյուրեղյան, Տյուրքիզներ, 1907, էջ 94—95, գերմաներեն): Անորոշ ժամանակվա և անանուն հեղինակի շարականը «Վարդա խաչ» վերնագրով հրատարակել է Սանտկ վրդ. Ամատունին («Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 131—132):

18 «Թովմայի վարդապետի Աթորունու Պատմության Տանի Աթորունեաց», Կ յույն էաժ Գ. Պ [առնվածն է], Մ. Պ. Բ., 1887, էջ 206—207, նույնը հրատ. «Ղուկասյան մանկագրարան»-ի, ժՁ, Քրիլյուս, 1917, էջ 488—489:

19 «Յասյմաուրք» Տէր Իսախանյան, «Պատմություն» օրհեհեալիս, հատոր Բ, մասն Ա, Փարիզ, 1930, էջ 94—95 (հայերեն և ֆրանսերեն):

20 Հմմտ. Լ. Մելիքյան-Յեյ, «Վարդապետը հայոց հուսիսային կողմանց», Քրիլյուս, 1928, էջ 252 (վրացերեն):


16 Հմմտ. Աշոտ Հովհաննիսյան, «Գրվագներ հայ ազատագրական մարտ պատմության, դիրք առաջին, Երևան. 1957, էջ 78:

ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ



Ս Ո Ւ Ր Ք Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Ե Ւ Վ Ա Ն Ք Ր
 ԿԱՌՈՒՑՎԱՍ ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻ ԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ ԵՐՑ ԹՎԱԿԱՆԻՆ
 Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼՆԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՔԻՄՈՒՆՏԵՐԱՆԻ ԵՐԵՄԻԱՆ ԵՔԻՄՈՒՆՏԵՐԱՆԻ

Երեմիայի, Գրիգոր Ավագյան



ԿԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԿԱՔԵՆՑ ԳՈՐԵՑՈՒ ՏԱՂԵՐՆ ՈՒ ԹԱՃԵՐԸ

Ա

ՀԱՅԵՐԵՆ ՔՆԱԳՐԵՐԸ

[Հովհան Ոսկերեւանի]

1. Ոսկերեւան սուրբ հայրապետ,
Որ Քրիստոսիս աշակերտ.
Գերսմաքուր մեծ վարժապետ,
Ջամբէ և ինձ քաղցրիկ քո բնա²¹,
2. Արեւծին լուսաստուծ
Ձոր հաւատամք հոգու գրեցեր.
Վասն հաւատոյ աքսորս կացեր,
Տրուպ Քէորքիս բարէխօս լեր:

[Փրկչի]

1. Պետն հրեղինաց աւաքեցեր,
Արգանդ մաքուր պատրաստեցեր.
Հոգով Սրբով ներգործեցեր,
Պատուած ընդ մարդ միացուցեր:
2. Ի անբանից մսուր եղար
Եւ ի մոգուցն ընծայեցար,
Ի հրեշտակաց փառատրեցար
Եւ ի հովուացն յայտնեցար:
3. Արեւիկան դուռն բացեր,
Երեսազէմ քաղաք մտեր.
Հզծերունին արձակեցեր,
Պարտից մահու ազատեցեր:
4. Ի Յորդանան մկրտեցար,
Հոգով Արամն վկայեցար.
Եւ ի Հօրէն դաւանեցար,
Լոյս աշխարհին անուանեցար:

Բ

ՎՐԱՑԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ

ա

ՆԵՐՐՈՂՑԱՆՆԵՐ

1

(Գրիգոր Տաթևացու նկարի տակ)

Կես գիշերին դու ելար, արևելյան արեգա՛կ,
Պարթևացու դու պարզն, լուսաւորիչ կանթեղի,
Դու՛ վառ դամբար մեծ Արամյան ազգատոհմի...

2

(Հռոմի Սեղբեստրոս պապի և Գրիգոր Պարթևացու,
նաև Կոստանդին Մեծի ու Տրդատի նկարի տակ)

Երեք հարյուր տասնևութ հայրապետներ, որ կնքեցին այս ժողովը,
Ոչ ոք սուտ չկարծի, Աստծուց էր այս կամքը.
Ասացին՝ միագո Նորորդություն, մի բնություն, մի կամք...

3

(Գրիգոր Պարթևացու և Ներսես Լամբրաւեացու պատկերի տակ)

Կիլիկիայի Տարսնում բազմի՛ր, նրա միտրոպոլիտն ես,
Քո իմաստությունն ու սրբությունը երկնքից է, Աստծուց,
[Էնդհանրական] հայր ես Հայաստանյայց, լուսավորիչը նրա....

²¹ Այս տունը հիշեցնում է Ղազար Ջահկեցու տա-
նը. «Ինչպէս Հովհան Որոտնեցուն և Գրիգոր Տա-
թևացուն (Գիրք աստուածաբանութեան, որ կաշի
Կրայտ ցանկաւիք, Կ. Պոլիս, 1734, էջ 8).

«Մեծըն Յօհան Որոտնեցին վարժապետ,
Սուրբըն Գրիգոր Տաթևացին աշակերտ,
Յորոց շառաւիղեալ Ղազար վարժապետ,
Որ զայս գիրքս մանկանց Եկեղեցւոյ ետալ:

F

[Տաղ Վարազա խաչից]

1. Ամեն մի շնչավոր կարոտ է քեզ, լլա՛նն Վարազա,
կայան հրնշտակաց, ապաստան խաչի.
Քրիստոսը թաքորի վրա բազմեց, և նրա հաշը՝ քեզ վրա.
Դու՛ տապանն Մովսիսի և Աթոռ մեր Աստուծո՛ւ:
2. Եկա քեզ երկրպագելու, աշտարա՛կ հաչի,
Քեզ վրա բացվեց դուռը բարձր կապույտ երկնի.
Երբ տասնհերկու լուսավոր մայր-սյունները պատեցին քեզ,
Հոփսիմեն քեզ պահ տվեց կտորը սուրբ հաչի:
3. Մեկաշոք երկրպագում եմ, համբուրում եմ քեզ դառն արցունքով,
Դու, որ սատանային կոփվ տվիր քո մեծ ուժովն,
Լուսինը կրծքիցը քեզ կախեց, այստեղ հասցրեց վզովը.
Յոանկատանից շնորհ բերիր, հոժարակամ իշար ժայռի վրա:
4. Ո՛ր լեզվով է վայել քեզ գովել, լլա՛նն Վարազա,
Այն հաշը քեզ վրա բազմեց, որ սուրն է Աստուծո՛ւ.
Ինձ այստեղից մի՛ վերադարձնիր, թույլ տո՛ւր մնամ մի օր ևս,
Ո՛չ ուտել և ոչ խմել կուգեմ, թո՛ղ որ լիզեմ քո ավազը:
5. Վրաստանից քեզ դիմեցի մեծ սիրով,
Երկար ճանապարհ անցա շատ զրկանքներով.
Հենց որ եկա ու տեսա քեզ, խիստ ուրախացա սրտովս,
Եվ երբ եկա սարի վրա, լցվեցի քո հոգովոր:
6. Երեսկ սպանես-լարչարես, միայն քեզնից չհեռանամ.
Ով էլ Քարթլի կգնա, թո՛ղ հետը տանի քո հողիցդ,
Ես այստեղից չեմ գնա, շնորհ պիտ գտնեմ քեզանից,
Թե որ մեռնեմ, ինձ վրա թափեն մի բուռ ավազ քեզանից:
7. Քո ժայռերը նման են Բաբելոնի աշտարակին,
Ոսկով են նկարած գեղեցկատեսիլ եկեղեցիքդ.
Սրանց շուրջը ծաղիկների բուրաստան է՝ քեզանից,
Թվում է՝ դրախտի հինգ աղբյուրներն են հոսում քեզանից:
8. Արժանի է ալքով տեսնել քո ներքևի վանքը,
Ցոթն մեծ զանգակատուն յոթն մեծ եկեղեցիների.
Քառասուն վանական համախմբված անուշ ձայնով երգելիս,
Դալար այգին և պարտեզը շրջակա կալվածի:
9. Խաչածե վանքերն, ասում են, սքանչելի են կառուցված,
Սրանցից մեկում աղոթեց Գրիգորը, որ Պարթևացի է կոչվում.
Այժմ մեծ մենաստան է, հռչակավոր՝ ասում են,
Հարավային կողմում, քեզնից ցած, ձորումն՝ ասում են:
10. Հյուսիսային կողմում Հոփսիմի գանգի վանքն է,
Արևմտյանն կոչվում է Վանք Շուշանա թաղուհու.
Արևելքում դու ես բազմած, քո մեծ մենաստանը,
Մեջտեղը՝ Սենեքերիմի վանքն յոթ եկեղեցուց բաղկացած:
11. Առջևից ունիս բերդ և քաղաք կրկնակի պարիսպներով,
Միջում սքանչելի տուն ու տեղեր տասնումեկ եկեղեցիներով.
Շուրջը՝ դաշտ ու լեռներ վեց հազար գլուղներով,
Առջևից ծովը և նրանում յոթ հարյուր նավ վանքապատկան:

12. Խաչն օրհնել է քո լեռը, ասում են՝ ծաղկած է,
Կարմիր-դեղին-հունի գույն, լաջվարդի նման են ասում,
Իարձարբերձ ժայռերը մարդկանց համար ահարկու,
Մեկը Գալիլեա է կոչվում, խաչի կայան են ասում:
13. Զյունապատ ես, հոտավետ, վարդով զարդարված,
Երջակա վանքերը դալամով նկարած.
Քարթլիից եկա, քեզ դիմեցի մեծ հավատքով,
Թե օրը տասն անգամ քեզ մոտ գամ, չեմ կշտանա քո տեսքով:
14. Քո ժայռի տակը Թո՛ղ մեռնեմ, արժանացրո՛ւ քո տեսքին,
Մուրազը սրտումս լմնա, այլևս ախ չքաշեմ.
Լուսավորյալ քարերն համբուրեմ, շուտ-շուտ վալ տալով,
Ո՛ր ոք ինձ չբամբասե, չասեն՝ լտեսավ այս:
15. Ժայռի տակին նստած եմ և երգ եմ ասում հույժ դառն արտասովալից,
Երնեկ երբ կարժանանամ քեզ տեսնելու իմ աչքովս.
Կամ ինչպե՛ս համարձակվեմ ոտնատակ անեմ քո հողը,
Երբ արժանի եղա համբուրել քեզ անարժան բերնովս:
16. Հոփսիսիմե՛, ոսկեծնունդ, դու Սուրբ Նինոյի քույրն ես,
Բոյով դու չինար ես, դրախտի վարդի նման ես.
Գորիից եկա այս լեռան վրա, կուզեմ հոգվով ինձ ավետես,
Սրտով այսպես ուրախ եմ, որ դու այստեղ կանգուն ես:
17. Ի՛նչն ինձ սիրով կկշտացնի, քանի որ այստեղ եկա,
Ո՛չ ուտել և ո՛չ խմել կուզեմ, ոչ էլ հեռանամ այստեղից.
Դու, որ Ֆոանկատանից եկար ու բազմեցիր այս տեղում,
Սուրբ Խաչը դրած է ժայռի գլխին այս տեղում:
18. Դու, մեծ Սուրբ Գևորգ, արևելքդ արեգական,
Լուսո պսակ, տկարներին բժշկող.
Հեծյալ անվախ, սատանային կոխ տվող,
Մովից վիշապ հանող, Խորասանի գերիներին ազատող:
19. Լուսավորիչն Գրիգոր, Հայաստանյայց հայրապետն,
Տասնեերկու տանջանքներ նա հանձն առավ մեզ համար.
Կուռքերից մեզ ազատեց, երկնավոր Աստվածն ուսուցեց մեզ,
Փրկության ավազանից Նորոգողության որդի կուշեց մեզ:
20. Եկեղեցի մեզ կառուցեց մեղքերը քավելու,
Սատանային կոխ տվող, կենդանացնող մեր հոգվոց.
Միածինն իջավ, հետն՝ խորանն լուսո,
Խողացած արքային վաթսուն հինգ օրում բժշկեց:
21. Նիկիայում ժողով արին նրա կնիքով կնքելով,
Արիստակեսին ուղարկեց մասնակցելու Նիկիայում.
Հավատամքն այնտեղից շնորհեցին մեզ, որով կրոնը հաստատվի,
Հոր համագո խոտովանեցին Քրիստոսին՝ Աստուծով օծյալին:

(Մնացած 22—27 տունները զուտ դավանաբանական բնույթ են կրում և զուրկ են թե՛ պատմական և թե՛ գրական նշանակությունից, ուստի և չենք թարգմանել— Լ. Մ.-Բ.):

[Առաջավորաց պատը]

Ինչու է, որ ֆռանգները և հույները հայ-հույում են մեզ (հայերիս), ասելով՝ մարդու համար եք պաս պահում, [այն] որ Սուրբ Սարգսի պաս է կոչվում [և որն] ուրիշ քրիստոնյաները չունեն։ Ինչպես դուք պահում եք իշապան Սարգսի պասը։

Այսպիսիներին կատարասխանեմ նախ՝ «Եղեղծավոր», հա՛ն նախ զգե՛րանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիղն յականէ եղբոր քոս [Մատթ. է 5]։ Իրենք պաս կանէ եղբոր քոս [Մատթ. է 5]։ Իրենք պաս կանէ, բոլոր պասերն եղծեցին որկրամոլությամբ և ծուկն ուռնելով և այլևայլ պիղծ գործողությամբ, և ապա ասում եք, թե մենք զործողությամբ, և ապա շենք պահում և մարդու [համար] պաս շենք պահում և նույնիսկ չգիտենք, թե իշապան Սարգսիս ո՛վ է։ Ով իշապան Սարգսի պասը պահի, նա ևս տասներեկու առաքյալներից նզովյալ լինի, և ով էլ այդ կասի ու սուտ կհնարի, նա էլ նզովյալ լինի Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից։ Կաթողիկոս Սուրբ Եկեղեցին Հայաստանյայց [Եկեղեցին] է, որ հիմնրված է Քրիստոսի վեմի վրա, և այսպիսի անօրինություն նրան [հետևողների] մշտնորեն հրեք լի անցնի։ Սակայն ե՛կ և նրանց շար լեզուներին համառոտ պատասխան տանք։

Մեր Սուրբ Եկեղեցու սահմանումն այն է, որ պահում ենք շարաթիվ պասը, տոներ չենք տոնում (՝), քանի որ պասը մեղքի ողբն է և տոներ հոգու ուրախությունը։ Ինչպես հայտնի է, չորեքշաբթի և ուրբաթ օրն երբեք տոն չենք կատարում, եթե Ամենասրբունու տոներ չընկնի, և Մեծ պասին էլ շարաթիվ զատ չենք տոնում։ Սակայն երբ՝ շարաթին ուսիս ենք անում, որն է սրբի տոնն ենք կատարում։ Այս պատճառով, եթե հինգ օր պաս պահեցինք մեր մեղքները քաղելու համար, որ սրբի տոնն էլ կատարում ենք, նրան միջնորդ ենք հանում Աստուծո առաջ, որպեսզի նրա բարեխոսությունը մեր պասն ընդունելի լինի, և այս մի ամսվա ընթացքում ինչ որ մեղք ենք գործել, հինգ օրվա մեր պասով հինգ զույգ նշանով [Աստված] մեզ ողորմություն պարգևի, Ուրեմն պարզ է, որ մարդու համար չենք պահում [պասը], այլ մեզ համար և Աստուծո համար ենք պահում։

Սակայն բոլոր պասերն անունով են ճանաչվում, ինչպես Մեծ պասի կյուրակներն Սուրբ Թեոդորոսի, Կյուրեղի, Գրիգորի, Ղազարի պասեր ենք անվանում և նրանով ենք ճանաչում, որ ի վերջո նրանց տոնն ենք տոնում, ինչպես որ [այս] պասը Սուրբ Սարգսի պաս ենք կոչում։

Այս Սարգիսը Թեոդորոս Կոստանդնուպոլսի թագավորի արքունապետն էր։ Եվ երբ պիղծ զբարոտող Հուլիանոսը թագավոր դարձավ, սա (Սարգիսը) թողեց [Կոստանդնուպոլիսն] և եկավ Պարսից երկիրը Շապուհ թագավորի մոտ և նահատակվեց Մազանդարանում Քրիստոսի կրոնի համար։ Մենք նրա տոնն ենք կատարում, շենք ճանաչում ձեր ասածը Սարգսի մասին։ Մենք նշովում ենք ո՛չ միայն այդ [զբարոտությունը] հիշատակողին, այլև հավատացողին ու ընդունողին։

Այժմ գանք և տեսնենք, թե այս պասն ի՛նչպես է կոչվում և ինչպե՞ս սահմանվեց այն։

Այս պասը կոչվում է Առաջավորաց, Թեև անտաշ [և] տգետ ցեղերը Սուրբ Սարգսի [պաս] են կոչում, սակայն նշենք, թե ինչու է Առաջավորաց կոչվում։ Այս պասը պահեց Ադամը դրախտից դուրս գալուն պես. պահեց Սեթն Ադամի մահից հետո։ Այս պասը պահում էր Աբելը, որն և մատաղ էր զոհարարում, Ենովքը պահեց հինգ օր իրեն համար, Նուր պահեց այս պասը տապան մտնելու և դուրս գալուն պես։ Արահամը պահեց, երբ իսահակին զոհելուց խուսափեց, Կրկին պահեց Աբրահամը Սոգոմն ու Գոմորը այրվելուց հետո։ Պահում էին բոլոր առաջնեկները, երբ հայրը վախճանվում էր։ Մովսեսը սահմանեց Իսրայելացոց՝ հինգ օր պաս պահել հորթի համար։ Հակոբը պահեց, երբ տեսավ, թե ինչպես սանդուղքը ցից դրված հասնում էր մինչ երկինք։ Կրկին պահեց, երբ հայտնվեց Հովսեփը։ Հովսեփը պահեց այս պասը, երբ արգելանքումն էր։ Պահեցին [և] Նինվեցիք, [երբ] Հովհան մարգարեի քարոզի շնորհիվ հինգ օր անճաշակ [մնացած] ազատվեցին զայրույթից։ Եվ կա վկա, որ այս պասին ընթերցվածք չեն կարդում, ո՛չ Հին և ո՛չ Նոր [Ուխտից] և ուրբաթ [օրը] Հովհան մարգարեից ընթերցվածքն են կարդում։ Ուրեմն Սարգսի պաս չէ այս [պասը], այլ [ուրիշ]։ Այս պասը որ սահմանվեց, այն ժամանակ ոչ գիր կար և ոչ էլ ընթերցվածք [Ս. Գրքից]։ Այս պատճառով մենք ևս չենք կարդում, Իսկ երբ Սուրբ Սարգիսը նահատակվեց Պարսկաստանում, [հենց] այս շաբաթի [միջում] եղավ նրա նահատակությունը, ուստի և այստեղ են կատարում նրա հիշատակությունը (օրը)։

Մեր լուսավորիչն՝ Սուրբ Գրիգոր Պարթևացին [քրիստոնեական] հավատի դարձրեց Հայաստանը և վաթսուն հինգ օր քարոզեց, և խոզ դարձած արքան (Տրդատ

թագավորը— Լ. Մ.-Բ.) սրտնից հետո բուժվեց և բուրբոն հրամայեց հինգ օր անճաշակ մնալ, Ահա սա է Հայաստանյայց առաջին պատերազմի ժամանակը, Ահա պատճառով Առաջավորաց [պատ] ենք կոչում²²։

Երկրորդ, Սուրբ Սեղրեստոսը, որ Կոստանդին թագավորին [քրիստոնյա] դարձրեց և մկրտեց, հրամայեց թագավորին և ամբողջ ժողովրդին հինգ օր պաս պահել, Եվ երբ Գրիգոր [Լուսավորիչը] գնաց Ֆոանկենբրի երկիրը, այս պասն այնտեղ վավերացրին երկրջյան պատրիարքները՝ Սուրբ Գրի-

գորեն և Սեղրեստոսը, Նրանք (Ֆոանկենբր) թե՛ այս և թե՛ իրենց [պասները] կորցրին որովայնամուկությամբ, իսկ մենք մերը պահեցինք։

Եվ ի՞նչ կա զարմանալի, որ հայհոյում են [մեզ], երբ նրանք շորեքշարթին ունին՝ իբր թե առաքյալներից սահմանված, Եվ և թե Մենք պասի երկու օրն ուտիս ունին՝ իբր Քրիստոսից սահմանված, ի՞նչ զարմանալի բան է, որ մյուս պասերն էլ ուտեն։ Ողորմելիները չգիտեն, որ մի ձու և մի ուխար ուտելը պասի [միջոցին] միևնույնն է...

Գ

[Մտազատիկը]

... Թամար թագուհու օրոք մեծ վեճ տեղի ունեցավ վրացիների և հայերի միջև, Այն պահին՝ 1197 թվականին՝ եղավ Մոագատիկ²³, [եվ] այդ ժամանակն էր հայ իշխան Ջաքարիա կոչեցյալը (լուսանցքում ավելացրած է՝ «Այս Ջաքարիան Հաղրատումն է թագված», որ, իհարկե, սխալ է. պիտի լինի՝ Սանահնում— Լ. Մ.-Բ.), որը բարեպաշտ էր և մեծահոգի, Թամար թագուհու որդեգիրը²⁴, Եվ այս վեճի պատճառով թագուհին իր պալատականներից մեկին, վրաց ազնվականին, ուղարկեց Նրուսաղեմ, Մեկին էլ Ջաքարիան ուղարկեց յուրայիններից՝ հայուն։ Եվ գնացին սրանք երկոթյան ճշմարտություն պարզելու համար, Եվ այս Ջատիկ ճշմարիտի և ծուղի ճանաչողը Լուսավորչի կանթեղն

է²⁵, որ ամենից առաջ ոչ մարդու ձեռքով, Աստուծո հրամանով կվառվի ամեն Ջատիկ շարաթ գիշերը²⁶, Սակայն [Քրիստոսի] գերեզմանն այն ժամանակ էլ (1197 թ.— Լ. Մ.-Բ.) թուրքի²⁷ ձեռքն էր, և նա, որ գերեզմանի վերահսկողն էր²⁸, նկատեց քրիստոնյաների իրարանցումը, հարցրեց քրիստոնյաներին, թե ե՞րբ է ձեր Ջատիկը։ Հույները պատասխանեցին, թե Ջատիկը այս կիրակի է, իսկ հայերն ասացին, որ այս կիրակի չէ, [այլ] մյուս կիրակի է, Բայց այն վերահսկող թուրքը խելոք մարդ էր, Հրամայեց տաճարում եղած բոլոր կանթեղներն ու մոմերը հանգցնեն, Փակեց դուռն և իր կնիքով կնքեց ու ոչ ոքի չթողեց ներս, որպեսզի տեսնի, թե ճշմարտությունը ո՞ր ազգի [կողմն] է Եվ երբ որ օրն անցավ ու մթնեց և կանթեղի վառվելուն էին սպասում, և ժամանակն էլ անցավ ու այն շվառվեց, վերահսկողը հրամայեց իր բոլոր ծառաներին ծեծով, տուրուղմբոցով և հայհոյանքով դուրս

22 «Առաջավորաց»-ը, ըստ մեր տեսության («Հովհաննես Վանական Տավուշեցու անտիպ երկերից, «Պատմադրություն Հայաստանի պատմության», «Եկեղեցական», 1959 թ. № 6, էջ 35—44, մասնավորապես 40—41), պիտի մեկնաբանել ոչ թե զառաքյալներից, այլ զառաքյալներից։

23 «Մամուլիի քահանայի Անեցույ Հաղարատից ի գրոց պատմագրաց», հրատ. Սուրբ Սեդ. Միքիլյան, Վաղարշապատ, 1933, էջ 145։ Հատուկ գրականությունը այս խնդրի շուրջը՝ Լ. Միքիլյան-Քեյ, «Մոագատիկի առթիվ 1197 թվականին Քրիստոսի մեծի ունեցած երկպառակության մասին», «Կովկասյան պատմագրական հանդեսի» խմբագրություն, III, Քրիստոս, 1925, էջ 43—80 (ռուսերեն)։ Նույնի «Վարդապետի հայոց հյուսիսային կողմանց», Քրիստոս, 1928, էջ 238—248 (վրացերեն)։ Նույնի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», II, Երևան, 1936, էջ 16—20, 28—31։ Նույնի «Հին Քրիստոսի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմություն», «Պատմա-բանասիրական հանդես», 1958 թ., № 3, էջ 154։ Նույնի «Միսթրա Գոռի անտիպ երկերից», «Եկեղեցական», 1959, № 12, էջ 43 և ժանոթ. 10—14։

24 Հավանական է «խնամակալված»-ի իմաստով— Լ. Մ.-Բ.։

25 «Լուսավորչի կանթեղ»-ի թեման հայ գրականության մեջ, ինչպես հայտնի է արժարեված է՝ սկսած Սիմեոն կաթողիկոսից («Ջամբոս»), ապա Պետր Պոռյաթեի («Սեդ. և Վարդիթեր»), Մ. Նուրբեկյանի («Կրիստիկա») մոտ, նաև Նույն վերնագիրը կրող բանաստեղծություններում՝ Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Վահագն Թեմիսյանի, Հովհաննես Երեմյանի և այլոց։

26 Հմմտ. Սմբատ Սմբատյան, «Լուսավորած»-ի հանդես յերուսաղեմ», «Տարազ», 1938 թ., № 14, էջ 247—281։

27 Այստեղ և ստորև մենք «թուրք» ենք թարգմանում վրաց «թաթար»-ն— Լ. Մ.-Բ.։

28 Այս առթիվ Նուրբեկյանի կողմից Պոռյաթեի («Համառոտ անկարկ հայ Նրուսաղեմի վրա», «Եկեղեցական», 1961 թ., № 4—6, էջ 90 (գրում է. «Ս. Հարություն տաճարին բանալին կոտրվի ժառանգաբար՝ մահ-մեղապան որոշ ընտանիքներու ձեռքը, որոնք սահմանյալ ժամերուն կբանան և կգոցեն»)։

քշելու, եվ երբ այն կիրակին անցավ և եկավ մյուս կիրակին, որի մասին հայերը ասում էին, թե Զատիկ է, նորից փակեցին դուռն ու կնքեցին, և շաքաթ երեկոյան տասներորդ ժամին, երբ ժամասացություն էին կատարում, նկատեցին, որ կանթեղն, առանց մարդու ձեռքը նրան մոտենալու, վառվեց: Մեծ ուրախություն ընկավ հայերի և մանավանդ թուրքերի մեջ, որոնք ուրախացած էին, որ այս սքանչելիքը տեսան և գովաբանում էին հայոց հավատը և պախարակում հույներին, որոնց կեղծ և ստախոս էին անվանում: Եվ այս բոլոր եղելությունը տեսան Քամար Թագուհու [ուղարկած վրացադավան] մարդը և Զաքարիա իշխանի [ուղարկած հայադավան] մարդը, որոնք վերադարձան [վրաստան] և հաղորդեցին թագուհուն, եվ թագուհին ևս խիստ գովեց հայ ցեղը: Եվ մեծ խրախճանք ու պարզևարություն սարքեց հայ իշխանը, և [բոլորն] էլ ավելի հաստատուն մնացին հայոց ճշմարիտ հավատի մեջ: Այս հին

դեպքը որ նշեցի, սա տեղի ունեցավ հայոց 545 (ուղիղ՝ 646=1197— ի. Մ.-Ր.) թվականին:

Այժմ նոր բան ասեմ, որ մեր օրոք եղավ: Երբ վրաց քրոնիկոն էր 417 [=1729], ապրիլի 6-ին լեղավ վրացոց Զատիկը և մեր Մաղկազարդը. իսկ մեր Զատիկն էր ապրիլի 13-ին: Օսմանցիք գրաված ունեին Քարթլին, եվ ինչպես վերոգրյալ [դեպք]ում, [այժմ էլ] հույները ստվեցին... Այս [բոլորը] գրեցի նրա համար, [որպեսզի] ուղ որ այն ժամանակ [վա պատմությունը] ծանոթանա, տեսնի և համոզվի: Աստվածաշնչի վերջումն էլ գրված է, [այն օրինակում,] որ Հեթում Թագավորն է գրել, որ նրա օրոք ևս եղել է Մաղկազարդի, Այսպիսի բան արավ այն անիծյալ իրինան²⁹, ո՛ր հույնի մեղքն է և ո՛չ էլ հայի, Երկուսն էլ անմեղ են: Մեղքն իրինայինն է, որը նախանձով շեղեց [հույներին] և ինքն էլ շեղվեց:

b

[Հայաստանյայց եկեղեցիները]

Ասում ենք, որ բոլոր առաքյալների միջև ամենից առաջ մեր Բարդուղիմեոս առաքյալը շինեց Անձնացյաց երկրում, որ այժմ Շատախ են կոչում, [եկեղեցի] հանուն Աստվածածնի, որը հետադայում Ս. Գրիգոր [Լուսավորիչ] իսկ իսկ թանգել ու [նրա տեղը] կառուցել մեծը, բայց լքանդեց ու կողքին մի ուրիշ եկեղեցի կցեց, որն այժմ էլ մեծ վանք է: Մինչդեռ Քաղնոս առաքյալի [կառուցած] եկեղեցիներին հաշիվ չկա, իսկ Գրիգոր Պարթևացու օրոք եկեղեցիներ թիվ չեն ավելի ևս քաղմացավ: Սուրբ Գրիգորը շինեց էջմիածինն ու Հոփսիմի վանքը, և Գյանենն ու Շողակաթը, Սուրբ Կարապետը Քուրդաստանում և Կտուց անապատը քաղաք Վանի ծովում, որտեղ ես եմ գտնվում ու գրում եմ այս գիրքը, [նաև] շինեց Ուլթիլիսան³⁰:

²⁹ Խոսքը բյուզանդական կայսրուհի իրինայի կամ իրինեի (Երանուհու) մասին է, որի օրոք (787 թ.) գումարված նիկիայի երկրորդ տիեզերական ժողովը վերականգնեց պատկերահարգությունը: Տե՛ս Արիստակես Եպիսկ. Սեդրակյան, «Հայաստանյայց եկեղեցու պատկերահարգությունը. Պատմական տեսություն», Մասն Ա, Ս. Պ. Բ., 1904, էջ 86 և այլն: Մաղափառ Թեոֆիլ Եպիսկ. Օրմեզյան, «Ազգապատմություն», Ա, էջ 904—906:

³⁰ Այսինքն՝ Բագրիանդի Հովհաննավանքը— ի. Մ.-Ր.:

³¹ Այսինքն՝ կաթողիկ Կղիմեոս Գալաթիոսը և նրա ստվար եպիսկոպոսությունը՝ «Միաբանութիւն Հայոց Սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ եկեղեցւոյն Հոգւմայա, հատ. Ա.—Բ. Հոսմ, 1650, 1658, 1661 և 1690:

Սրանից հետո ներսես Մեծը հինգ հարյուր վանք և անապատ շինեց, ինչպես Կղեմեոսն³¹ է վկայում, Սուրբ Ներսիսի օրոք Հայաստանում 2040 վանք է եղել, եվ դրանից հետո էլ, որքան թագավորներ ու կաթողիկոսներ էին գահ բարձրանում, բոլորն էլ շինում էին: Բագրատունիք Անի քաղաքի շրջակայքը լցրին եկեղեցիներով, ինչպես գրված է, Անի քաղաքում հազարից մեկ պակաս³² եկեղեցի է եղել, եվ Սենեքերիմյանք Վան քաղաքի շրջակայքում [կառուցին] Աղթամարի մեծ վանքը, որն այս ժովի մեջն է, եվ վարդապետիկը շինեց հազար (") եկեղեցի հանուն Սուրբ Ստեփանոսի: Ռուբինյանք ևս Կիլիկիայի երկրում [շինեցին եկեղեցիներ], որոնցից շատերն այս օր էլ կանգուն են և շատերն էլ ավերված, եվ Վաղազան Աղվանից թագավորն ու նրա իշխանները Գյանչայի երկրն ու Դաղստանը լցրին եկեղեցիներով, որոնցից են հույակավոր վանքերը Սղնախում³³: Գանձասարն ու Ամարասը, և Սուրբ Եղիշեն առաքյալի գերեզմանն ու վանքը: Եվ Փոքր Հայաստանում³⁴, Հաղարտն ու Սանահինը և շատ ուրիշները [կառուցեցին], որ անհնար է թվարկել:

³² Ուղեցել է սակ' հազար և մեկ— ի. Մ.-Ր.:

³³ Այսինքն՝ Արցախ-Ղարաբաղում— ի. Մ.-Ր.:

³⁴ Այսինքն՝ Հյուսիսային Հայաստանում կամ, որ նույնն է, Կորիկյանց Հայաստանում (Զաքարյան կամ, ավելի ճիշտ ասած, Խոսրովյան Հայաստանում)— ի. Մ.-Ր.:

Հապա նրանց (հունադավանները— Լ. Մ.—Բ.) եկեղեցիների հետ համեմատած մի՞թե քիչ են մեր եկեղեցիները, իսկ եթե ասում են, որ մենք [եկեղեցիներ] չունինք, դա այն պատճառով է, որ [մեր եկեղեցիների] մի մասն ավեր է և մյուսն էլ թուրքերի ձեռին է³⁵, Հապա նրանց եկեղեցիներից տվելի շատ է ավերվածը և թուրքերի կողմից գրավվածը, Հետևապես նրանք ատավել ևս

չունին [եկեղեցիներ], Սակայն Հովհան Դամասկեցին³⁶ հետո է[ր] Հայաստանից, և Հայոց երկիրը չէ[ր] տեսել, և այնպես էր կարծել, որ [հայերս] եկեղեցիներ չունինք, իսկ եթե շտեմանելու պատճառով է, որ չէ[ր] հավատում, որ եկեղեցիներ ունինք, հետևապես անհավատ մարդ է եղել, Զէ՞ որ՝ ոչ ոք Աստուծուն չի տեսել, սակայն հավատում ենք, որ Աստված կա:

9

[Այլևայլ պատումներ]

ՓԱՂԱՍՏՔՆԵՐ

1

Գարրիել վրաց միտրոպոլիտը տասնհինգ եպիսկոպոսներով եկավ Պարտավ (բնագրում՝ Բարդա— Լ. Մ.—Բ.) մեր [հայոց] Բարգեն կաթողիկոսի և Զաքարիա Աղվանից կաթողիկոսի մոտ, և նշովեցին երկու բնություն ասող[ներ]ին ու Քաղկեդոնի ժողո-

վը³⁷, Հապա այնպես եք կարծում, որ մի-միայն մենք [հայերս] չընդունեցինք, Ուրեմն ազգ[եր]ի եպիսկոպոսապետներից է նշովված Քաղկեդոնի ժողովը և ո՛չ թե մի-միայն հայերից:

2

Ինքնագլուխ մի[ակ] կաթողիկոսը նստում է Հայաստանում, և նա ռծում է Աղվանից թագավորին ու կաթողիկոսին և Վրաց թագավորին ու կաթողիկոսին (՝), քանի որ աղ-

վանները Թադեոս առաքյալի աշակերտից են քրիստոնյա դարձել, իսկ վրացիք՝ Սուրբ կույս Նինոյից:

3

Երբոր Սուրբ Գրիգորին ու Տրդատ թագավորը Յուսեփների երկրից վերադարձան, եկավ Դադստանի Գեղրովան թագավորը և ավերեց Վրաստանն ու 20 000 զեռի տա-

րավ³⁸, Հենց որ Տրդատ թագավորն ու Սուրբ Գրիգորը այս իմացան, շատ նեղացան և թագավորը 40 000 զորք ուղարկեց [նրանց ռզնության]:

4

Եթե կնոջ ձեռքով մկրտվելը հետևանք էր անելանելի [դրուժյան], հապա սուրբ և երանելի Նինոն ինչո՞ւ չմկրտեց վրացիներ-

րին..., այլ մարդ ուղարկեց Սուրբ Գրիգորի մոտ և խնդրեց, որ նա քահանա տար նրանց (վրացոց) մկրտելու համար³⁹:

35 Տճ՝ս վերև՝ 27-րդ ժանդարմագրությունը:
36 Հունադավանության այլուն է դարում (վախճ. 749—750 թ. թ.), որի երկասիրությունները հայտնի են թե՛ վրացերեն (Կառե. Կեկելիձե, «Մտար հեղինակները վրաց հին գրականության մեջ», «Թրիխիսի պետական համալսարանի Տեղեկագիր», VIII, էջ 156—158), Նույնի՝ «Վրաց հին գրականության պատմություն», Երև., Ի. ք. տպ., «Թրիխիսի, 1941, էջ 627—629 և թե՛ հայերեն (Գ. Զարեմանյան, «Մատենադարան հայկական թարգմանությունների նախնաց», Վենետիկ, 1889, էջ 575—580):

37 Այստեղ պատմական դեպքերն ու աշխարհագրական տվյալները շփոթված են, քանի որ խոսքը վերաբերում է 506 թվականին կայացած ժողովին Դվինում

և ո՛չ թե Պարտավում, Բացի սրանից, Զաքարիա Աղվանից կաթողիկոսը հայոց Բարգեն և վրաց Գարրիել կաթողիկոսների ժամանակակիցը չէր:

38 Այստեղ, անկասկած, եկատվում է մեր հեղինակի ծանոթությունը Ջենոբ Գլակի պատմության հետ, գուցե հենց Կոստանդնուպոլսի 1719 թվականի Հրատարակությանը («Գրքը պատմությանը երկրի Տարեան, որ կոչի Ջենոբ», էջ 29. հմտ. ձովհան Մամիկոնեան, «Պատմություն Տարեան, Հրատ. Աշոտ Արքունի, Երևան, 1941, էջ 129), որ հիշված է «թագաւորն հիւսիսոյ... Գեղտեհուն»:

39 Այստեղ մեր հեղինակը ցուցաբերում է ծանոթություն Մովսես Խորենացու Պատմության Բ գրքի 86 գլխի հետ, որի ներշնչմամբ էլ գրել է այս տողերը: